

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԱՐՄԵՆԻ

ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»
մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
համար

Գիտական ղեկավար՝

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

Յու. Ա. Սաֆարյան

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4

**ԳԼՈՒԽ 1. ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ..... 11**

1.1 Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման փորձի վերլուծություն..... 11

1.1.1 Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման միտումները ՀՀ-ում 11

1.1.2 Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման փորձը արտերկրում..... 18

1.2 Մեթոդական փորձը ճարտարապետական ժառանգության օգտագործման ոլորտում 30

1.2.1 Ամրոց-բնակատեղիների օգտագործման տեսական հիմնավորումները..... 30

1.2.2 Ճարտարապետական ժառանգության օբյեկտների օգտագործման հիմնավորումների արդի մոտեցումները..... 38

Եզրակացություններ ըստ գլուխ 1-ի 46

**ԳԼՈՒԽ 2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐՈՑ ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ..... 49**

2.1 ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգությունը..... 49

2.1.1 ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական և պատմամշակութային տեղեկությունների ընդհանրացում 49

2.1.2 ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ներկայիս վիճակի վերլուծություն... 54

2.2 Ամփոփ Մատյանը որպես ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի գնահատման գործիքակազմ 60

2.2.1 Ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի գնահատման սկզբունքները..... 60

2.2.2 ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության տվյալների ամփոփ Մատյանը 62

Եզրակացություններ ըստ գլուխ 2-ի 72

ԳԼՈՒԽ 3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ.....	74
3.1 Ամրոց-բնակատեղիների ներդրումային Կադաստրը որպես դրանց օգտագործման ներուժի գնահատման գործիքակազմ	74
3.1.1 Ներդրումային Կադաստրի հասկացությունն ու բովանդակությունը.....	74
3.1.2 Ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության գործոնները և գործառական օգտագործման որոշման օժանդակ ձևաչափ.....	81
3.2 ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ներդրումային Կադաստրի ձևաչափ	92
3.2.1 ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության վարկանիշի որոշում.....	92
3.2.2 ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիներում գործառույթների իրականացման հավանականության որոշում.....	95
Եզրակացություններ ըստ գլուխ 3-ի	98
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	100
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	102
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ.....	110

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը

Ամրոց-բնակատեղիները հայկական ճարտարապետական ժառանգության կարևորագույն մասն են կազմում, սակայն դրանցից շատերը ներկայում՝ XXI դարի սկզբին անմխիթար վիճակում են և հայտնվել են անհետանալու եզրին, քանի որ կորցրել են իրենց գործառական նշանակությունը, և բացակայում է նոր գործառույթի սահմանումը: Արդյունքում լքված շինություններին սպառնում է վանդալություն, ավերում և տարածքների ապօրինի զավթում: Զարգացող քաղաքին մոտ լինելը արդեն հանգեցնում է հուշարձանների (օրինակ՝ Կարմիր բլուր ամրոց (Թեյշեբահինի)) ավերմանը և սպառնում՝ դրանց պահպանությանը: Հնագույն բնակատեղիի հարակից տարածքում կա գերեզմանոց, որն արդեն ներառել է նաև հուշարձանի տարածքը, պեղված շինություններն աստիճանաբար քանդվում են, բնակատեղին մասամբ ծածկված է շինարարական ու կենցաղային աղբով, առկա է հուշարձանի պահպանության գոտում ճանապարհ կառուցելու կառավարական նախագիծ:

Պատմական միջավայրի պահպանությունը և նպատակային օգտագործումը պետք է դառնա քաղաքաշինության բնագավառի գերակայություն:

Այս իրավիճակում արդիական է դառնում ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման գործընթացի վերանայումը ճարտարապետական գիտության տեսանկյունից: ՀՀ Լոռու մարզը «Հյուսիսային Դարպաս» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին 2009 թվականի կառավարության որոշումը արդիական է դարձնում ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման խնդիրների դիտարկումը Լոռու մարզի օրինակով: Կյանքի կոչելով այս որոշումը՝ արդիական են դառնում ճարտարապետական ժառանգության՝ այդ թվում և ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման խնդիրները:

Այս հետազոտությունը կարող է գիտական և մեթոդական հիմք ծառայել ՀՀ տարածքում պահպանված հինգ հարյուրից ավելի ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման արդիական խնդիրների լուծման համար:

Թեմայի ուսումնասիրվածությունը

Ամրոց-բնակատեղիներին վերաբերող գրականությունը հիմնականում ունի պատմահնագիտական ուղղվածություն: Հայաստանի ամրոցների մասին տեղեկություններ են հաղորդել գիտնականներ՝ Ղ. Ալիշանը (Տեղագիր Հայոց Մեծաց կամ աշխարհագրութիւն Հայաստանի, 1853), Հ.Ղ. Ինճիճեանը (Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, 1822), Ն. Սարգիսեանը, (Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, 1864): Բոլոր դարաշրջանների ամրոցների մասին ընդարձակ տեղեկություններ է պարունակում Մ.Հ. Հովհաննիսյանի «Հայաստանի բերդերը» 1970 թ. աշխատությունը:

Առանձին ամրոց-բնակատեղիների մասին տեղեկություններ կան Ա.Ա. Աջանի, Գ.Ե. Արեշյանի, Լ.Տ. Գյուզայանի, Ս.Ա. Եսայանի, Ա.Կ. Զարյանի, Թ. Թորամանյանի, Է. Խանզադյանի, Վ. Հարությունյանի, Մ. Հասրաթյանի, Ի.Գ. Ղարիբյանի, Կ.Կ. Ղաֆադարյանի, Բ.Բ.Պիտրովսկու, Հ.Ե. Սիմոնյանի, Գ.Տ. Տիրացյանի, Ա. Քալանթարյանի և այլոց ուսումնասիրություններում:

ՀՀ ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման խնդիրներին նվիրված է Դ.Ռ. Սարգսյանի (2000) «Դվին քաղաքատեղին և նրա ամրակայման և թանգարանացման խնդիրները» ատենախոսությունը, որում մշակված են Դվինի քաղաքաշինական հետազոտման, կառույցների ամրակայման և վերականգնման, ինչպես նաև հնավայրի թանգարանացման գիտամեթոդական համալիր սկզբունքներ:

Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման խնդրի լուծումը անհնար է առանց դրանց ճարտարապետության պատմության խնդիրների իմացության, ուստի աշխատանքում բերված է ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետությանը վերաբերող ատենախոսությունների ուսումնասիրությունը: Լ.Վ. Կիրակոսյանի (1992) «Արագածի վաղմիջնադարյան ամրոց-բնակատեղիների ճարտարապետությունը» (ռուսերեն) աշխատությունում կատարվել է Արագածի վաղ միջնադարյան ամրոց-բնակատեղիների վերլուծություն և դասակարգում ըստ կոնստրուկտիվ լուծումների և գործառական նշանակության: Ընդհանրացվել են վաղ միջնադարյան ամրոց-բնակատեղիների ճարտարապետությանը և շինարվեստին վերաբերող նյութերը, ուսումնասիրվել են դրանց պաշտպանական համակարգերը և պաշտպանության կազմակերպման հարցերը: Ա.Զ. Սարգսյանի (2004) «Հայկական ամրոցաշինության ճարտարապետական բնագծերը 9-14-րդ դարերում (Կենտրոնական Հայաստանի և

Կիլիկյան հայկական թագավորության օրինակներով)» ատենախոսությունում ուսումնասիրվում է զարգացած միջնադարում հայկական ամրոցաշինությունը՝ իր համալիր կտրվածքով: Բնորոշվում են միջնադարյան ամրոցաշինական ճարտարապետության համընդհանուր առանձնահատկությունները, տեղադրական չափանիշները: Ուսումնասիրվում են պարսպապատերի, աշտարակների, դարպասների, դղյակների ճարտարապետության առանձնահատկությունները: Ա.Ս. Աղաջանյանի՝ «Արագածի բրոնզեդարյան ամրոց-բնակատեղիների ճարտարապետությունը» (2006) ատենախոսությունում կատարվել է Արագածի ամրոց-բնակատեղիների հորինվածքային առանձնահատկությունների բացահայտում, առաջադրվել և դասակարգվել են դրանց տարածական տիպերը:

Ճարտարապետական ժառանգության պահպանման և օգտագործման խնդիրը դուրս է ճարտարապետական գիտության սահմաններից: Ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում այս խնդրի լուծման համար մեծ արժեք են ստանում հուշարձանների պահպանման ոլորտում օբյեկտների գնահատման օբյեկտիվացմանը (Ա.Ա. Եմելյանով, Տ.Ա. Սլավինա), ճարտարապությունում և քաղաքաշինությունում ներդրումային գործոնի հաշվառմանը (Դ.Գ. Դոնցով, Ա.Բ. Նեկրասով), սոցիալական ուղղվածություն ունեցող ճարտարապետության գործունեության մեթոդաբանությանը (Օ.Գ. Սեվան) նվիրված հետազոտությունները:

Լոռու ճարտարապետական դպրոցին են նվիրված Գ. Շախկյանի (1986) «Լոռի: Պատմության քարակերտ էջերը» գիրքը և Կ.Մ. Կարեյանի (2006) «Լոռու ճարտարապետական դպրոցը» ատենախոսությունը:

Ընդհանուր առմամբ նյութերի վերլուծությունը ցույց է տվել, որ ՀՀ ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման հարցերը քիչ են ուսումնասիրված:

Աշխատանքի նպատակը

Գնահատել ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման և օգտագործման ներուժը:

Հետազոտության հիմնական խնդիրները

1. Ընդհանրացնել և վերլուծել ամրոց-բնակատեղիների և ճարտարապետական ժառանգության այլ օբյեկտների պահպանման և օգտագործման առկա փորձը և տեսական մշակումները Հայաստանում և արտասահմանում:
2. Մշակել ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանության ներուժի գնահատման գործիքակազմ:
3. Մշակել ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի գնահատման գործիքակազմ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Իրականացվել են դաշտային ուսումնասիրություններ, վերլուծվել են արխիվային և գրական նյութեր, պաշտոնական վիճակագրական նյութեր, կիրառվել են համակարգային, համեմատական, մաթեմատիկական վիճակագրական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության առարկան

Ամրոց-բնակատեղիների պահպանությունը և օգտագործումն է:

Հետազոտության սահմանները

Տարածքային սահմանները: Ընդգրկում են Հայաստանի Հանրապետության սահմանները: Լոռու մարզը, որն իր ռելիեֆային հնարավորություններով առավել հզորներից է, նաև՝ բնութագրականն ու նպատակահարմարը ուսումնասիրվել է առավել մանրամասն:

Ժամանակագրական սահմանները: Աշխատանքում դիտարկված են ՀՀ ամրոց-բնակատեղիները վաղնջական ժամանակներից մինչև 20-րդ դարը ներառյալ: Ուսումնասիրությունում դիտարկվել են մի շարք ամրոց-բնակատեղիներ՝ անկախ դրանց տիպից և չափերից:

Հետազոտության գիտական նորույթը

- մշակվել է ՀՀ ամրոց-բնակատեղիների ներդրումային Կադաստր,
- գնահատվել է ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման և օգտագործման ներուժը,
- մասնագիտական շրջանառության մեջ են դրվել ամրոց-բնակատեղիների «պահպանման ներուժ», «օգտագործման ներուժ» եզրույթները:

Պաշտպանության են ներկայացվում

1. ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի գնահատման սկզբունքները:
2. ՀՀ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի գնահատման համար մշակված ներդրումային Կադաստրը:

Աշխատանքի գործնական նշանակությունը

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ծրագրային փաստաթղթերի, նախագծերի, ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, թե՛ հանրապետական (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, մշակույթի նախարարությունների, զբոսաշրջության պետական կոմիտեի և այլն), թե՛ մարզային մակարդակներով, ինչպես նաև ճարտարապետական մասնագիտության դասավանդման գործընթացում ուսումնամեթոդական ձեռնարկների և նախագծային առաջադրանքների մշակման համար: Հետազոտվող նյութի հիման վրա արված առաջարկությունները նաև կարող են կիրառվել ՀՀ ամրոց-բնակատեղիների ժամանակակից վերաօգտագործման մասնավոր ներդրումային ծրագրերի մշակման համար:

Աշխատանքի արդյունքները ներդրված են ՃՇՀԱՀ-ի բակալավրիատի 2016-2018 թվականների ուսումնական ծրագրերում՝ որպես «ՃՏՊԺՎՎԳԱ և Պ» ամբիոնի «Հայկական ճարտարապետության պատմություն» և «Համաշխարհային ճարտարապետության պատմություն» առարկաների բաղկացուցիչ մաս:

Աշխատանքի փորձահավանությունը

Ատենախոսության տարբեր բաժինները քննարկվել են ՃՇՀԱՀ Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի սեմինարներում և նիստերում 2015-2018 թթ.:

Հրատարակումներ

Ատենախոսության թեմայով հրատարակված է 6 գիտական հոդված:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը կազմված է տեքստային և գրաֆիկական մասերից՝ ներկայացված մեկ հատորով: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 130 էջ՝ ներառություն, երեք գլուխ, եզրակացություններ, 98 անուն օգտագործված գրականության ցանկ և հավելվածներ, որոնք ներառում են գծագրեր, գրաֆիկներ, լուսանկարներ, սխեմաներ, աղյուսակներ (20 էջ) (տես՝ Հավելված էջ 2):

Ուսումնասիրությունում առաջարկվում է եզրույթների հետևյալ մեկնաբանությունը.

Պետական փաստաթղթերում և մասնագիտական գրականությունում հանդիպում են ամրոց-բնակատեղի, ամրոց, բերդ, բերդչեն, դոյակ, ապարանք, բերդաքաղաք, քաղաքատեղի, ամրացված քարայր կացարան եզրույթները, և մեծ մասամբ բնակավայրերի այդ տեսակները հստակ սահմանում չունեն, և ավելին՝ միևնույն բնակավայրը երբեմն հանդես է գալիս տարբեր անուններով: Աշխատության մեջ փորձել ենք սահմանել ամրոց-բնակատեղիները՝ որպես բնակավայրի այն տեսակը, որն ունի պարսպապատ (պաշտպանական կառույցներով) ներքին բնակելի կառուցապատում:

Ճարտարապետական ժառանգություն - անցյալում ստեղծված և ճարտարապետական արժեք ներկայացնող օբյեկտները, ներառյալ դրանց հետ կապված նյութական մշակույթի առարկաները, պատմամշակութային տարածքները և այլ օբյեկտները, որոնք նշանակալի են մշակույթի զարգացման համար, անկախ սեփականության ձևից:

Ամրոց-բնակատեղիի ճարտարապետական ժառանգության պահպանության ներուժը մեկնաբանվում է որպես ամրոց-բնակատեղիների պատմական կերպարի և ճարտարապետական ժառանգության պահպանության մասին գիտելիքների հանրագումար, որը դրա ստույգ պահպանության հնարավորություն է ընձեռում:

Ամրոց-բնակատեղիի ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժը մեկնաբանվում է որպես ամրոց-բնակատեղիի հետ պատմականորեն կապված և դրա տարածքում տեղակայված ճարտարապետաքաղաքաշինական օբյեկտների օգտագործման հնարավորությունների մասին գիտելիքների հանրագումար:

Ամրոց-բնակատեղիների ներդրումային Կադաստր - ներդրումային գրավչության գործոնների միավորային գնահատման հիման վրա ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի բացահայտման գործիքակազմ:

**ԳԼՈՒԽ 1. ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ**

1.1. Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման փորձի վերլուծություն

1.1.1. Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման միտումները ՀՀ-ում

Ամրոց-բնակատեղիները ոչ ուղիղ նշանակությամբ օգտագործելու խնդիրը առաջին անգամ ծագեց քսաներորդ դարի սկզբին, երբ տեխնիկական և տեխնոլոգիական զարգացումը հանգեցրեց դրանց գործառական նշանակության, այն է՝ որպես պաշտպանական կառույց գործառույթի իրականացման կորստին: Հայաստանի պարագայում սրան նպաստեց նաև երկրի խորհրդայնացումը, հողի պետականացումը, ինպես նաև սեփականության ձևի մենաշնորհացումը: Փաստորեն ամրոց-բնակատեղիները, կորցնելով իրենց կիրառական գործառույթը, նաև ձեռք բերեցին ի դեմս պետության մեկ սեփականատիրոջ, որը տարբեր պատճառներով (ֆինանսական, գաղափարական և այլն) բավարար ռեսուրսներ չէր հատկացնում դրանց պահպանության համար: Թեև պետք է նշել, որ սկսած քսաներորդ դարի երկրորդ կեսից պետության կողմից ուշադրություն է դարձվում այս կառույցների (արգելոց-թանգարաններ, որոնք ներկայացված են ստորև) պատմամշակութային նշանակությունը արժևորելուն: Սակայն արդեն իսկ Հայաստանի Հանրապետության պայմաններում անհրաժեշտություն է առաջանում գտնել նոր նորարարական մեխանիզմներ ու միջոցներ՝ ներդրումներ ներգրավելու այս օբյեկտների պահպանության և վերաօգտագործման համար:

Ստորև դիտարկվում են ՀՀ տարածքում գտնվող տարբեր ժամանակաշրջանների ամրոց-բնակատեղիներ, ինչպես նաև այլ հուշարձաններ, որոնք 20-րդ դարի երկրորդ կեսի ու 21-րդ դարի սկզբին հարմարեցվել են ժամանակակից վերաօգտագործման համար և սկզբունքորեն կարող են հաջողված օրինակ հանդիսանալ համանման կառույցների պահպանության և վերաօգտագործման համար:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան (տես՝ Հավելված էջ 4)

Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարանը ստեղծվել է 1968 թվականին՝ ի նշանավորումն Երևան քաղաքի 2750-րդ տարեդարձի: Թանգարանը ստեղծվել է Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող երեք հնավայրում

(Արին բերդ, Կարմիր բլուր և Շենգավիթ): ՀՀ Կառավարության 2003թ. որոշմամբ վերանվանվել է որպես պատմահնագիտական արգելոց-թանգարան: Էրեբունին այսօր գործում է «Կարմիր բլուր» և «Շենգավիթ» մասնաճյուղերով, Երևանի քաղաքի միակ հնագիտական արգելոց-թանգարանն է և կարևոր ուրարտագիտական կենտրոնը տարածաշրջանում [1]:

Էրեբունի քաղաքատեղին գտնվում է Երևանի հարավարևելյան ծայրամասում՝ Արին-Բերդ բլրի վրա: Այն կառուցվել է մ.թ.ա. 782թ. ուրարտական տերության արքա՝ Արգիշտի Ա-ի (մ.թ.ա. մոտ. 786- 765/764 թթ.) կողմից: Էրեբունի ամրոցի կանոնավոր պեղումներն սկսվեցին 1950թ.: Ամրոցին կից տարածքի մի մասը շրջապատված էր հզոր պարիսպներով [1]:

Թեյշեբահինի քաղաքատեղին գտնվում է Երևանի հարավարևմտյան ծայրամասում: Կարմիր բլուր հնավայրի տարածքում մ.թ.ա. VIIդ. 1-ին քառորդում Ուրարտական թագավոր Ռուսա Բ (մ.թ.ա. 685-645թթ.) հիմնադրել է Թեյշեբահինի բերդ-ամրոցը:

Կարմիր բլուրի կանոնավոր պեղումները սկսվել են 1939թ. [1]:

Հայաստանի վաղ բրոնզեդարյան հնագիտական հուշարձաններից Շենգավիթ բնակատեղին գտնվում է Երևան քաղաքի հարավարևմտյան հատվածում: Բլուրն ունի 6 հա մակերես և գտնվում է Հրազդան գետի մակերևույթից 30 մ բարձրության վրա [1]:

Հնավայրում 1936-1938թթ հետազոտություններ, ապա պեղումներ է կատարել հնագետ Ե. Բայբուրդյանը, ապա 1958թ-ից Շենգավթի տարածքում հնագիտական նոր ուսումնասիրություններ ու պեղումներ են սկսվել հնագետ Ս. Սարգսյանի ղեկավարությամբ: 1958-1980թթ ընթացքում նրա կողմից պեղվել է բնակատեղիի պահպանված հատվածի կենտրոնական մասը: 2000թ. օգոստոսից ուսումնասիրություններ են կատարվում հայ-ամերիկյան միացյալ հնագիտական արշավախմբի կողմից: Հնագիտական պեղումներից պարզվել է, որ այս բնակատեղին շրջափակված է եղել անմշակ քարերից կառուցված հզոր պարսպով և ունեցել է դեպի Հրազդան գետը տանող ստորերկրյա սալածածկ գետնուղի, իսկ պարսպից դուրս տարածվել է դամբարանադաշտը [1]:

Պետված նյութերի հիման վրա 1968 թվականին բացվում է Շենգավիթ թանգարանը, որը հանդիսանում է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանի մասնաճյուղը: 2003թ. թանգարանը վերանվանվել է Շենգավիթ պատմահնագիտական արգելոցի [1]:

«Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան (տես՝ Հավելված էջ 4)

Մեծամոր ամրոց-բնակատեղին գտնվում է Երևանից 35 կմ հարավ-արևմուտք, Տարոնիկ գյուղի մոտ, Մեծամոր գետի ափին: մինչև այժմ Մեծամորում պարբերաբար պեղումները սկսվել են 1965 թ.: Վաղ երկաթի շրջափուլում (մ.թ.ա. XI-IX դդ.) Մեծամորը քաղաք էր: Միջնաբերդը և բնակելի թաղամասերը զբաղեցնում էին մոտ 100 հա տարածք: Միջնաբերդից 0,5 կմ հյուսիս-արևելք տարածվող դամբարանադաշտում պեղվել են կարմիր տուֆակերտ կրոմլեխներով օղակված հսկայաձավալ դամբարաններ [2]:

Մ.թ.ա. VIII դ. Մեծամորը մտել է Վանի թագավորության կազմի մեջ: Կյանքն այստեղ շարունակվել է նաև միջնադարում՝ մինչև XVII դարը: «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը բացվել է 1968թ.: Ներկայումս այն գործում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կազմում: Այստեղ հավաքվել և ցուցադրվել են հուշարձանից պեղված 27 000-ից ավել առարկաներ [2]:

«Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան (տես՝ Հավելված էջ 4)

«Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանը գտնվում է Կոտայքի մարզի համանուն գյուղի հարավ-արևմտյան մասում: Այն զբաղեցնում է 3,5 հա տարածություն (պահպանական գոտու հետ միասին՝ 5,1 հա) և ներառում պատմամշակութային մի շարք կառույցներ ու մշակութային արժեքներ՝ Գառնիի ամրոցը (մ.թ.ա. III-II դդ.), հեթանոսական տաճարը (մ.թ. 77թ.), խճանկար հատակով բաղնիքը, պալատական շինությունների և հարակից տնտեսական կառույցների, Ս. Սիոն եկեղեցու (VII դ.) և կից մատուռի ավերակները և այլն:

Հուշարձանախմբի ուսումնասիրման աշխատանքներն սկսվել են XIX դ. վերջերին: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա համալիրի հուշարձանների մի մասի մնացորդները (եկեղեցի, բաղնիք, պալատական շենք, պարիսպներ և այլն)

ամրակայվել են, իսկ հեթանոսական տաճարը 1968-1974 թթ. ամբողջապես վերակազմվել է [3]:

2004թ. որոշմամբ՝ մինչ օրս հանդես է գալիս որպես ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ: Պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում ամեն տարի տեղի են ունենում մշակութային միջոցառումներ: Այն հանրապետության զբոսաշրջային ամենշատ այցելություն ունեցող հուշարձաններից է, ուր ամեն տարի այցելում է մոտ 136 000 զբոսաշրջիկ [3]:

«Լոռի Բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոց (տես՝ Հավելված էջ 5)

«Լոռի Բերդ» քաղաքատեղին գտնվում է Լոռու մարզի Ստեփանավան քաղաքից ոչ հեռու՝ Ձորագետ և Միսխանա գետերի կիրճերով եզերված հրվանդանանման սարահարթում: Արգելոցի տարածքում գտնվող բերդի մասին հավաստի տեղեկություն է տալիս XIII դ. պատմիչ Վարդան Արևելցին: Լոռե բերդը կառուցել է Անիի Բագրատունիների՝ Կյուրիկյան ճյուղի ներկայացուցիչ Դավիթ Անհողին թագավորը (989-1048թթ.) մոտավորապես՝ 1005-1020թթ.: Բուն բերդաքաղաքը զբաղեցրել է շուրջ 35հա տարածք, որից միջնաբերդը՝ 8.5հա է: Բերդի տարածքը և հարակից շրջանները բնակեցված են եղել վաղ ժամանակներից, ինչը վկայում են պեղումների ընթացքում բացված միջինբրոնզեդարյան և երկաթեդարյան դամբարանադաշտերի (մ.թ.ա. XXI/XIX – VII/VI դդ.) նյութերը: Հնագիտական հետազոտությունները հուշարձանի տարածքում սկսվել են 1966 թ. և շարունակվում են առ այսօր [4]:

Հաշվի առնելով «Լոռի Բերդի» պատմամշակութային դերն ու նշանակությունը և նրա հետագա ուսումնասիրման ու պահպանման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը 2010 թ. որոշումով այս տարածքին տվել է «Լոռի բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցի կարգավիճակ [4]:

Արցախի Տիգրանակերտի պեղումների թանգարան (տես՝ Հավելված էջ 5)

Տիգրանակերտը գտնվում է Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի հարավ-արևելքում՝ Խաչենագետի աջ ափին: Այն հայկական հելլենիստական քաղաք է, կառուցվել է Ք.ա. 1-ին դարում, հայոց արքա Տիգրան Մեծի կողմից: 2006-ին սկսվել են

Արցախի Տիգրանակերտի պեղումները և ընթանում են առ այսօր: Արդյունքում գտնվել և ուսումնասիրվել են քաղաքի միջնաբերդը, պարիսպները, քաղաքի կենտրոնական մասը և վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցին [5]:

2010թ. Տիգրանակերտի տարածքում գտնվող 18-րդ դարի կանգուն ամրոցում բացվել է պեղումների թանգարանը, որն այցելուներին ներկայացնում է հնգամյա աշխատանքների ընթացքում հայտնաբերված ցուցանմուշները: Թանգարան-ամրոցի ներսի բակում կազմակերպվում են տոնական միջոցառումներ, համերգներ [5]:

Տաթևի վանք, միջնադարյան վանական համալիր

Գտնվում է Սյունիքի մարզի Տաթև գյուղի հարավում: Վանքը ունեցել է ամրացված պաշտպանական համակարգ: 1722-30 թվականներին Տաթևի վանքը եղել է Սյունիքի ազատագրական պայքարի, 1919-21 թվականներին՝ Ջանգեզուրի ինքնապաշտպանության կարևոր օջախներից մեկը: 1931 թվականին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով եկեղեցական համալիրը գրեթե ամբողջությամբ ավերվել է: 1974-1998 թվականներին վանական համալիրի մեծ մասը վերականգնվել է [6]:

2010 թվականին շահագործման է հանձնվել աշխարհի ամենաերկար՝ Տաթևի թևեր ճոպանուղին (5.5 կմ), որը նպաստում է տարածաշրջանի զբոսաշրջության զարգացմանը [6] :

Միջնադարի կրոնական համալիրներում հանդիպում են արտադրական կառույցներ՝ ձիթհաններ, հնձաններ, ջրաղացներ: Միջնադարյան բազմասենյակ ձիթհանի օրինակ է Տաթևի վանքի լավ պահպանված կառուցվածքը (18-րդ դ.), որը գտնվում է վանքի պարիսպներից մոտ 20 մ հեռավորության վրա, դեպի հյուսիս-արևելք: 2010թ. ձիթհանն ամբողջությամբ վերականգնվել է, կատարվել է ներքին ձևավորում՝ ներկայացնելով արտադրական կառույցում կտավատի ձեթի արտադրման տեխնոլոգիական ամբողջ պրոցեսը՝ պահպանված պատմական սարքերի վերաօգտագործմամբ, ցուցադրական, տեղեկատվական նյութերով [7]:

Ջարնի և Պարնի քարայր- կացարաններ (տես՝ Հավելված էջ 3)

Ջարնի և Պարնի քարայր կացարանները կառուցվել և հանդիսացել են որպես պաշտպանական ամրություններ 10 – 13-րդ դարերում:

Հուշարձանախումբը գտնվում է Հաղպատ գյուղից արևմուտք, Կայան բերդից հյուսիս: Քարայրի պաշտպանական նշանակությունը բարձր է գնահատել Ջարեհ իշխանը՝ թշնամական հարձակումների ժամանակ այստեղ է թաքցրել Հաղպատավանքի ձեռագրերն ու հարստությունը [8]:

Հուշարձանը վերականգնելու նպատակով ՀՀ Մշակույթի նախարարությունը հաստատել է պատմական հուշարձանախմբի նորոգման, ամրակայման, բարեկարգման և օգտագործման նախագիծը [8]:

Առաջին անգամ ոչ պետական մասնակցությամբ, մասնավորի նախաձեռնությամբ ու միջոցներով, ըստ հաստատված նախագծի, կատարվել են քարայր-ամրոցի վերականգնման և բարեկարգման աշխատանքներ: Կատարվող աշխատանքները, բացի պատմամշակութային ժառանգության պահպանությանը նպաստելուն, ունեն նաև որոշակի գործարար նպատակներ՝ նպաստելով նաև տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրության աճին ու զբոսաշրջության զարգացմանը [8]:

Սև բերդ (տես՝ Հավելված էջ 5)

Սև բերդ հուշարձանը գնվում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: 1830-ական թվականներին Գյումրի բնակավայրի ընդարձակվելուն զուգընթաց կարևորում էր նաև նրա քաղաքական, ռազմական և տնտեսական նշանակությունը: Այս հանգամանքով էր պայմանավորված, որ Ռուսաստանի կայսր Նիկոլայ 1-ինը 1834թ. արձակեց հրաման նոր ամրոցի նախագծի կազմման վերաբերյալ: Բերդը կառուցվել է 10 տարվա ընթացքում:

Առաջին ուսումնասիրություններն այստեղ կատարվել են XIX դարի երկրորդ կեսին՝ մոտ 1875 թվականին: Ամրոցի բակի ներսում պեղվել է մ.թ.ա. 8-6-րդ դարերի թվագրության դամբարաններ: Բերդի տարածքում առկա է մշակութային ժառանգություն սկսած բրոնզեդարյան ժամանակաշրջանից մինչև երկաթի դարաշրջան [9]:

Հուշարձանը վերջին ժամանակներում սեփականաշնորհվել է: «Սև բերդ» նախագծի ղեկավար Ս. Թորոսյանի խոսքերով Բերդը դառնալու է տուրիզմի կենտրոն և բերդի մեջ կառուցվելու են պատկերասրահ, անֆիթատրոն, հյուրանոցային համալիր, ռեստորան, ջրավազան, թանգարան [10]:

Ճարտարապետական ժառանգության հարմարեցումը բարդ գործընթաց է: Շենքի արժեքները, ֆիզիկական բնութագրերը և ներուժը պետք է լավ վերլուծվեն: Ամրոցներն իրենց ֆիզիկական բնութագրերի շնորհիվ կարող են նոր կյանք ստանալ՝ վերածվելով թանգարանների: Ամրոցները սովորաբար կառուցվում են պաշտպանական նպատակներով, հետևաբար ճակատներն ամուր են, սահմանափակ բացվածքներով, հատակագիծն ունի պարփակ կազմակերպվածություն, հաճախ կենտրոնում ներքին բակով: Թեև թանգարանային ֆունկցիան ֆիզիկապես ամրոցների համար համապատասխանում է, պահպանության և թանգարագրության տեսակետները պետք է դիտարկվեն համատեղ:

Պատմական շենքում թանգարանի հաջողությունը դիտարկելու համար բավարար չէ գնահատել այն՝ ելնելով միայն դրա պահպանման սկզբունքներից: Թանգարանագրությանը վերաբերող խնդիրները նույնպես կարևոր են՝ շենքի առաջարկվող գործառույթը պահպանելու համար: Լուծումները կախված են նախագծողի ստեղծարարությունից, սակայն ճիշտ մոտեցումը նախագծողի և թանգարանագետի համագործակցությունն է: [11]

Ամփոփելով կարող ենք փաստել, որ 20-րդ դարի ընթացքում Խորհրդային Հայաստանում պետության կողմից իրականացվել է որոշակի քաղաքականություն ամրոց-բնակատեղիների, վանական համալիրների պահպանության, վերականգման ու շահագործման ուղղությամբ: Իսկ արդեն ՀՀ-ում այդ աշխատանքներն ունեցել են որոշակի շարունակություն, սակայն պետության կառուցվածքի, սեփականության ձևերի փոփոխության հետևանքով անհրաժեշտություն է առաջանում գտնել նոր մոտեցումներ, եղանակներ ու ձևեր այս պատմամշակութային օբյեկտները պահպանելու ու դրանց կյանքը հարատև դարձնելու համար:

2016 թվականին ՀՀ կառավարությունը ընդունվել է՝ «Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահոշակման 2016-2020 թթ. ռազմավարության ծրագիր» և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկ: Ռազմավարության անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք ներքին և արտաքին մարտահրավերներով և նպատակ ունի գնահատել ու արժևորել մշակութային ժառանգությունը, օգտագործել այն որպես երկրի կայուն զարգացման

ներուժ նոր տնտեսական և սոցիալ-քաղաքական պայմաններում: Հայեցակարգը ենթադրում է 1998 թ. ընդունված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը ներկայացնել նոր խմբագրությամբ և մի շարք ենթաօրենսդրական ակտերի մշակմամբ: Հուշարձանների օգտագործման ուղղությամբ կմշակվեն մի շարք ծրագրեր հուշարձանների և հնագիտական տարածքների ուսումնասիրման, թանգարանացման, զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման և կառավարման նպատակով: Հուշարձանների հանրահռչակման ուղղությամբ կմշակվեն և կտեղադրվեն հուշարձանների միասնական նմուշի եռալեզու տեղեկատվական վահանակ-ցուցանակները: Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների օգտագործման և հանրահռչակման արդյունավետությունը, բնագավառում ներդրումային դաշտի գրավչությունը, կընդլայնվեն զբոսաշրջության ծավալները [12, էջ 115]:

Վերջին ժամանակներում արդեն իսկ ուրվագծվում են ճանապարհներ ամրոց-բնակատեղիներին նոր գործառական նշանակություն տալու ուղղությամբ: Սրա վառ օրինակներն են «Զարնի և Պարնի» հուշարձանախմբի, «Սև բերդ» հուշարձանի վերանորոգման աշխատանքները: Այս աշխատանքները իրականացվել են մասնավոր ներդրողների ջանքերով, պետության դերը այստեղ սահմանափակվել է միայն աշխատանքների ու հետագա շահագործման ընթացքում վերահսկողական գործառույթների իրականացմամբ:

1.1.2. Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման փորձը արտերկրում

Ուսումնասիրության գիտավարկածին համապատասխան՝ հայաստանյան ամրոց-բնակատեղիների օգտագործման տեսական հիմքերի մշակման համատեքստում հնարավոր է նաև արտասահմանյան փորձին դիմելը: Արտասահմանյան փորձի գործառական նախագծային խնդիրների հարմարեցումը հնարավոր է, եթե հաշվի առնվեն հայրենական ամրոց-բնակատեղիների տիպաբանական զուգանմանները: Այսպիսի զուգանմաններ կարելի է համարել ամրոց-բնակատեղիները, ամրոցները, բերդերը, կալվածքները (ապարանքները), որոնք ունեն պաշտպանական գործառույթ և

կոչվում են «Manor» կամ «Country house» (անգլերեն), «Manoir», «Domaine» կամ «Demeure» (ֆրանսերեն):

Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման արտասահմանյան փորձին նվիրված գրականության վերլուծությունից հնարավոր եղավ եզրակացնել, որ արտասահմանում ուսումնասիրության կենտրոնում են գտնվում կազմակերպչական իրավական և տնտեսական խնդիրները: Այս առումով արժեքավոր են անգլիացի տնտեսագետ Ջոն Բատլերի [13] դիտարկումները, մասնավորապես՝ Եվրոպական զանազան երկրներում մասնավոր սեփականության կազմակերպվածությանը վերաբերող վերլուծությունը: Տնտեսագետի կարծիքով մասնավոր սեփականությունը ամրոցի սեփականության նվազագույն ծախսատար տարբերակն է, համեմատած օրինակ՝ հանրային սեփականության հետ, սեփականատերերի իրավունքների և պարտականությունների հստակ սահմանման պայմանի պարագայում [13, էջ 119]: Հոլանդական, ֆրանսիական և գերմանական փորձը ցույց է տալիս, որ եվրոպական տնտեսական միությունում (ԵՏՀ) պատմական շենքերի սպասարկման համար սեփականատերերի կողմից կատարվող ծախսերի բեռը թեթևացնելու նպատակով իշխանությունները հակված են գնալ որոշակի հարկային արտոնությունների ճանապարհով: Այս առումով Գենթի համալսարանի պրոֆեսոր Քլեյս Բուարտի կողմից կատարվել է օրենսդրության և ԵՏՀ պատմական շենքերին վերաբերող հարկային քաղաքականության համաձայնության վերլուծական հետազոտություն և արվել են հետևյալ առաջարկները.

- պատմական շենքի պահպանության և վերականգնման վրա իրականացվող ծախսերի չափով, հանրության համար այդ օբյեկտների բաց լինելու պարագայում, նվազեցվում է սեփականատիրոջ եկամտահարկը,
- պատմական սեփականության ժառանգելու/նվիրատվության հարկը պետք է նույնպես նվազի՝ կախված նախորդ սեփականատիրոջ շենքի սպասարկման համար իրականացված ծախսերից: Սրա հետ մեկտեղ, եթե աշխատանքները կատարվել ստանդարտներին համապատասխան, իսկ շենքը հասանելի էր ուսումնասիրությունների համար, ապա հարկը կարող է չեղարկվել,

- դրամաշնորհների օգտակար համակարգի հետ մեկտեղ, հարկային արտոնությունները սեփականատերերի համար խթանող գործոններ են՝ պատմական շենքերում ֆինանսական ներդրումներ կատարելու համար: Սեփականատերերի սեփական միջոցների ներգրավումը բերում է առավելագույն արդյունք,
- պատմական շենքերի պահպանությունը և վերականգնումը, այլ ոչ թե դրանք քանդումը և վերաստեղծումը պետք է խրախուսվեն ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ) հարկային արտոնությունների օգնությամբ [13, էջ 116]:

Բացի կազմակերպարավական և տնտեսական հարցերից, ամրոց-բնակատեղիների օգտագործման խնդրի լուծման համար կարևոր են նաև գործառական ասպեկտները: Արտասահմանյան փորձի, հիմնականում բրիտանական, վերլուծությունը ցույց է տվել հետևյալը.

Մեծ Բրիտանիայում ամրոցների պահպանության խնդիրը զանգվածայնորեն ծագել է 1870-ականների գյուղատնտեսական դեպրեսիայի ժամանակ, երբ ամրոցների սեփականատերերը, չունենալով դրանք պահելու միջոցներ, իրենք էին սկսում դրանք քանդել: Սեփականատերերի կողմից շինությունների ավերման գործընթացը արագացավ առաջին աշխարհամարտի ժամանակ, երբ ընտանիքները ստիպված էին ժառանգության հարկ վճարել ճակատում ամեն մահացածի համար: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ այս հարկը չեղարկվել էր, բայց պահպանման և օգտագործման խնդիրը մնում էր: Մի կողմից՝ իրենց դերն ունեցան ռազմական ավերածությունները, մյուս կողմից՝ ընտանիքների կազմի կրճատման և ծնելիության անկման հետ կապված՝ չզգացվեց մեծ տների կարիքը: Ընդ որում, երկրորդ հանգամանքը ավելի էական դարձավ: Այսպես 1875-ից մինչև 1976 թվականները ավերված 1116 կառույցներից 458-ը ավերվել է 1918-ից 1945 թվականներին, իսկ 1945-ից 1974 թվականներին 595-ը [14, էջ 10]: Անշուշտ կառույցների ավերումը ծայրահեղ քայլ էր: Հաճախ ամրոցները վաճառվում էին առևտրային և գերատեսչական կառույցներին կամ անհատույց տրամադրվում բարեգործական, բժշկական կամ կրթական հաստատություններին:

Այս հաստատությունների մի մասը մասնավոր էր, բայց մեծամասնությունը ապահովվում էր տեղական իշխանությունների կողմից: Այս լուծումները օպտիմալ էին բնակության համար բարդ, զարգացած հատակագծերով կամ մեծ սենքերով շենքերի համար, ինչպես օրինակ՝ Արունդել ամրոցը Սասեքսում (Arundel Castle, Sussex), Լիդս ամրոցը Քենթում (Leeds Castle, Kent) և այլն: Ամրոցների օգտագործումը որպես գերատեսչական կամ վարչական հաստատություններ ուղեկցվում է մի շարք դժվարություններով: Մի կողմից գոյություն ունի սարքվարումների թարմացման մշտական կարիք, հատկապես հիվանդանոցներում, ինչը հաճախ բացասաբար է անրադառնում շենքերի վիճակի վրա: Բացի այդ, որպես կանոն, անխուսափելիորեն շենքի շուրջը հայտնվում են օժանդակ շինություններ, որոնք աղավաղում են դրա տեսքը, ինչպես օրինակ՝ Պելե Հոլլում [14, էջ 21]:

Ամրոցների օգտագործումը, որպես ընկերությունների գրասենյակներ նպատակահարմար է, եթե օբյեկտը տեղակայված է աշխատանքային ակտիվ կենտրոններին մոտ, ունի մեկ-երկու ներկայացուցչական սենք, սակայն քիչ հետաքրքրություն է ներկայացնում հասարակության համար: Նման օգտագործման նպատակին է ծառայում Սեսիլի Հիլ Բարրաքսում (Անգլիա) տեղակայված «Money.co.uk» ընկերության գրասենյակը [15]:

Ըստ Դ.Բատլերի, ոչ բնակելի գործառույթները, որոնք հայտնվում են ամրոցում, եզակի ապրանքների կամ ծառայությունների ուղղորդված արտադրության դեպքում, արդարացնում են դրանց կազմակերպական ծախսերը: Այդպիսին է, օրինակ, Քարդիֆֆի ամրոցը, որն ունի ծառայությունների լայն փաթեթ՝ հարուստ պատմական և հնագիտական հավաքածուով թանգարան, վարձակալության է տրվում հարսանեկան արարողությունների, գործնական հանդիպումների, ճաշկերույթների, կոնֆերանսների, ցուցահանդեսների, ֆիլմերի նկարահանման և այլնի համար [16]: Պատմության կամ ծագումնաբանության թանգարանի կազմակերպումը, այդ թվում՝ բաց երկնքի տակ, ոչ համայնքային նշանակության համերգային դահլիճի, ամրոցի շենքերից կամ սենքերից մեկում տեղական ապրանքների արտադրությունն ու վաճառքը նույնպես կարող է դառնալ դրա գրավչության գործոններից մեկը և ապահովել տվյալ բնակավայրի մրցունակությունը (տես՝ Հավելված էջ 6, 7, 8):

Անգլիական ամրոցների հետազոտող Ջ. Լիթլջոնը վարձակալությունը համարում է օպտիմալ տարբերակ, կորպորատիվ կամ սեմինարների կենտրոններ կազմակերպելու, ինչպես նաև, միջին և մեծ չափի ամրոցների օգտագործման համար [17, էջ 253]: Որպես օրինակ կարելի է բերել Իռլանդական Քլոգան ամրոցը [18]: 13-րդ դարի ամրոցը տրամադրում է կոնֆերանսների և միջոցառումների համար նախատեսված դահլիճներ, ռեստորան և փոքրիկ հյուրանոցային մաս (տես՝ Հավելված էջ 9):

Որպես զբոսաշրջության հետաքրքրության աղբյուր կարող է լինել նաև ականավոր մշակութային գործիչների թողած ժառանգությունը: Ինչպես գրում է Տ. Աբանկինան [19, էջ 59] - «Եվրոպական շատ տարածաշրջաններ մրցում են մշակութային զբոսաշրջության շուկայում, ուր հիմնական կապիտալը հենց այն մշակութային ժառանգությունն է, որի հետ անմիջական առնչություն ունի որևէ ականավոր մշակութային գործիչ կամ մտավորականի անունը»: Որպես օրինակ նշում է ազգային մշակութային կենտրոնները Վեյմարում (Գերմանիա), Շեքսպիրինը Սրտատֆորդ ըփոն էյվոնում (Անգլիա) կամ Լ.Տոլստոյինը Յասնայա Պոլյանայում (ՌԴ):

Վարձակալվող սեմինարների կենտրոններ կարող են կազմակերպել հենց իրենք՝ ամրոցների սեփականատերերը: Տեղական մակարդակի բանկերը, ապահովագրական, առևտրաարդյունաբերական ընկերությունները հետաքրքրված են ղեկավարության ժողովների համար քաղաքից դուրս համալիրի կարճաժամկետ վարձակալությունում: Քաղաքից դուրս տեղակայումն ապահովում է մեծ հարմարավետություն քաղաքային միջավայրում գնվող նմանատիպ գործառույթների համեմատ: Բնությունը նպաստում է հանդիպման առարկայի շուրջ ուշադրության առավել կենտրոնացմանը: Հնամենի միջավայրը այդ պարագայում կարևոր առևտրային գործոն է: Կարևոր է նշել, որ վերակառուցման պայմաններում հնարավոր է փոքր և միջին հզորության օբյեկտների կազմակերպումը: Մեծ միջոցառումները, ինչպիսիք են միջազգային գիտաժողովները, կարիք ունեն մի շարք ենթակառուցվածքների, որոնք ժառանգության օբյեկտներում դժվար է իրականացնել (տես՝ Հավելված էջ 9):

Լորդ Մարչը համարում է, որ ամրոցը՝ որպես առևտրային հաստատություն արդյունավետ գործելու համար, անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

1. հաճախորդներին՝ խոշոր բնակավայրերին մոտիկություն, հակառակ դեպքում սեփականատերը պետք է փնտրի հատուկ շուկաներ, ինչը նշանակում է լրացուցիչ գովազդային ծախսեր,
2. սեփականատիրոջ՝ իր անձնական կյանքը վերակազմակերպելու պատրաստակամություն,
3. հաստատության մրցունակության ապահովման հնարավորություն: Առաջին հերթին դա անձնակազմի բարձր մակարդակն է, երկրորդ՝ ամրոցի «յուրահատկությանը» ճիշտ մատուցումը, մթնոլորտը, հարմարավետությունը, ընտանեկան միջավայրը, սեփականատիրոջ հետ շփման հնարավորությունը և այլն,
4. համալիրի նախագիծը պետք է ներառի մասնավոր և հանրային գոտիների բավարար տրոհումներ, այնպես որ, օրինակ, գոտիներից մեկի գիշերային ակտիվությունը չխանգարի մյուսի հանգստին,
5. զարգացած ենթակառուցվածք - ս/հ, խոհանոց, կապ, ջեռուցում, ինտերնետ և այլ հարմարություններ,
6. ամրոցի տարածքում կամ դրա շրջակայքում գիշերակացի մտածված հնարավորություններ [13, էջ 103]:

Բերենք Չեխական Բրանդիս նադ Լաբեմ քաղաքի Բրանդիս ամրոցի օրինակը (տես գրաֆիկական հավելված Ա): Ամրոցը պատկանում է քաղաքապետարանին, գտնվում է վերականգնման ընթացքում և դրա հետ մեկտեղ գործում է որպես բազմագործառույթ հանրային կենտրոն: Երկրորդ հարկում գտնվում են թանգարանը, մասնավոր և հանրային միջոցացումների, ընդհուպ մինչև քաղաքի ավագանու նիստերի անցկացման սենքերը: Առաջին հարկը վարձակալության է տրված ճարտարապետական արհեստանոցներին, հեռուստաստուդիային և գինե մառանով ռեստորանին: Վերականգնման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև զգալի չափերով յուրացնել ամրոցի այգին: Որպես զբոսաշրջային օբյեկտ ամրոցը օգտագործվում է քաղաքի սպասարկման օբյեկտների հետ համատեղ՝ հյուրանոցների, մարզային համալիրի, նավակների կայարանի: Նմանատիպ ճանապարհով են օգտագործվում նաև այլ շատ ամրոցներ:

Բարձրարժեք ինտերիերներով շինությունների օգտագործումը, որպես կրթական, մասնավորապես կրտսեր և միջին հաստատություններ, նպատակահարմար չէ: Տարրական դասարանների երեխաների վանդալիզմին գումարվում է դպրոցական սարքավորումների աններդաշնակ պարզությունը, նաև մակերեսների մեծացման անհրաժեշտություն է առաջանում, հետևաբար կա նաև վտանգ աններդաշնակ կցակառույցների առաջացման, հատկապես գիշերակացով դպրոցների դեպքում: Ուսումնական հաստատությունների դեպքում հիմնական խնդիրը վերանորոգման աշխատանքների կատարման անհրաժեշտությունն է, ինչը հանգեցնում է հավելյալ ծախսերի, և որպես հետևանք՝ կրթության ավելի բարձր արժեքի, որը կապված չէ դասավանդման որակի բարձրացման հետ: Մյուս կողմից՝ պատմական շենքում ուսումը, բնության միջավայրում, աղմուկի աղբյուրներից հեռու ավելի արդյունավետ է, ինչպես ուսումնական, այնպես էլ դաստիարակչական առումով: Սակայն գոյություն ունի նաև հակառակ փորձը, երբ ամրոցում գործող դպրոցի գոյությունը չի արդարացվել և ամրոցը կրկին վերափոխվել է բնակարանի, ինչպես Վարդուր Քասլի (Wardour Castle) դեպքում [17, էջ 240-241]:

Հարկ է նշել, որ ամրոցների հանրային օգտագործման՝ վերը թվարկված տեսակները կարող են ունենալ հետևյալ բացասական հատկանիշները.

1. զգալիորեն մեծ տրանսպորտային հոսքեր, ինչի հեևանքով շենքը շրջապատվում է կանաչից զուրկ և տեսքը աղավաղող ավտոկայանատեղիներով,
2. հակահրդեհային միջոցառումները՝ չիրկիզվող դռները և աստիճանավանդակներ, ստեղծում են ինտերիերի աղավաղման մեծ վտանգ,
3. նախագծերի անհատական բնույթ: Տարածման տեմպի արագացման նպատակով նախագծային լուծումների տիպայնության բարդություն,
4. անկայուն պահանջարկի պատճառով ոչ բավարար տնտեսական արդյունավետություն, ինչը ստիպում է կախված լինել պետական դրամաշնորհներից, վերականգնման ծախսերի փոխհատուցումից, ընթացիկ հարկային արտոնություններից և այլն:

Այս ամենը ստիպում է փնտրել ամրոցների օգտագործման ավելի արդյունավետ և համակարգված տարբերակներ:

Նման տարբերակներից է, առաջին հերթին, ժամանակավոր բնակավայրը, օրինակ, պատմական տներում պետական հյուրանոցային ցանցերը Պարադոր (Parador) Իսպանիայում [20], Պոսադաս (Posadas) Պորտուգալիայում [21]: Ամրոցում մասնավոր հյուրանոցի կազմակերպումը օպտիմալ տարբերակ է այն դեպքերի համար, երբ տները շատ մեծ են ընտանիքների համար, սակայն բնակիչները ցանկանում են մնալ այնտեղ: Սրա հետ մեկտեղ զբոսաշրջիկների համար գրավչության գործոն է դառնում տեղական խոհանոցը և ընտանեկան սպասարկումը: Միջնաբերդի սենյակների մեծությունն աշխատում է հյուրանոցի կերպարի վրա, սրանով էլ փոխհատուցվում են տարածքի սպասարկման զգալի ծախսերը: Միևնույն ժամանակ, լրացուցիչ լոգասենյակների կառուցումը և լրացուցիչ հյուրասենյակների համար տարածքների տրամադրումը բացասական ազդեցություն են ունենում կառույցների վրա (տես՝ Հավելված էջ 9, 10):

Ամրոցի օգտագործման մեկ այլ տարբերակ կարելի է համարել մշտական բազմաբնակարան բնակելի օբյեկտը: Օգտագործման այս տարբերակում ամրոցի միջնաբերդը, կցակառույցները տրոհվում են մի քանի առանձին ինքնուրույն գործող բնակելի բլոկների, որոշ դեպքերում ընդհանուր սենքերի առանձնացմամբ (միջանցք, աստիճան, ճաշարան): Տարածքը, բնակարանների չափսերին համապատասխան, բաժանվում է սեփականատերերի միջև և առանձնացվում է ընդհանուր օգտագործման տարածքը [13, էջ 109]: Նման օգտագործման օրինակ է ծառայում Բամբորո դոյակը [22]:

Ամրոցում կազմակերպված բազմաբնակարան համալիրի կառավարման օպտիմալ տարբերակ է իրավաբանական անձ հանդես եկող արտաքին կառավարիչ ընկերությունը, որի խնդիրների մեջ է մտնում ամրոցի ընդհանուր մասերի սպասարկումը (տանիք, հիմք, ինժեներական ենթակառույցներ, այգի, պարիսպ, ճակատային աշխատանքներ), ամրոցի մասնավոր մասերի սպասարկումը ըստ լրացուցիչ պայմանավորվածության: Սա ապահովում է օբյեկտի ընթացիկ սպասարկման ընդհանրությունը և միատարրությունը:

Ընդհանուր առմամբ, սեփականատերերի, վարձակալող բնակիչների, ընդհանուր, թանգարանային և այլ սենքերի միջև համալիրի բաժանման տարբերակների բազմազանությունը, ապահովում է օգտագործման այս տարբերակի

համապիտանիությունը: Դրա մյուս առավելությունների թվում կարելի է թվարկել հետևյալը.

- բնակարանի կայուն պահանջարկի պատճառով տնտեսական իրացվելիություն,
- մի քանի օգտատերերի միջև պատասխանատվության և ծախսերի բաշխման հնարավորությունը,
- նոր շինարարության անհրաժեշտության բացակայությունը,
- այլընտրանքային օգտագործման այլ տեսակների համեմատատ շենքերի արտաքին տեսքի և հատակագծման նվազագույն փոփոխությունները,
- ինտերիերի բարեկարգման ավելի փոքր ծախսերը: Պատմական ինտրիերների վերաստեղծումը բավական է միայն հանրային սենքերում:

Վերը թվարկված ամրոցների օգտագործման բոլոր տարբերակները ենթադրում էին հիմնական գործառույթի իրականացում շենքերում, այսինքն՝ վերաբերում էին շինությունների պահպանության բավարար աստիճանով օբյեկտներին կամ ենթադրում էին դրանց աննշան վերականգնում կամ վերակառուցում: Մինչդեռ արտասահմանյան փորձը հազվագյուտ հնարավորություն է տալիս ծանոթանալ պահպանության ցածր աստիճանով օբյեկտների օգտագործման մի շարք մոտեցումների:

Ոչ պակաս հեռանկարային է կամավորության երևույթի հետ կապված օգտագործման հնարավորությունը: Լիոնից (Ֆրանսիա) ոչ հեռու գտնվող ավերված Շեվրո ամրոցի վերականգնման նպատակով 1990 թվականին ստեղծվել է «Շեվրո ամրոցի ընկերներ» ասոցացիան: Ասոցացիայի հիմնական գործունեությունը կամավորների ճամբարի կազմակերպումն է, ովքեր համատեղելով անձնական և հանրային շահերը, վարպետների ղեկավարության ներքո, կատարում են վերականգնողական աշխատանքներ, միաժամանակ ուսանելով հին շինարարական տեխնոլոգիաներ: Բացի այդ, նշված Ասոցացիան մշտապես բարձրացնում է հանրային ուշադրությունը միջնադարյան պատմամշակութային հուշարձանների մասին տարատեսակ փառատոների, կինոդիումների և այլ միջոցառումների միջոցով (տես՝ Հավելված էջ 8):

Նույնանման փորձի կարելի է հանդիպել Սլովենիայից մի խումբ մասնագետների, Մատեյա Գոլեզի գլխավորությամբ, ճարտարապետական հուշարձանի՝

Զիսում վանքի կյանքի կոչելու գիտագործնական աշխատանքում: 900-ամյա պատմությամբ վանքը վերջին 200 տարում չի օգտագործվել: Հետազոտության նպատակն է ոչ թե վանքի վերականգնումը, այլ «Նոր փաստարկների միջոցով Տեղի առանձնահատկության օգտագործումը, մարդկանց տեղի «Հոգու» ըմբռնումը և համայնքի մասնակցության ակտիվացումը մշակութային և զբոսաշրջային զարգացման գործում» [23, էջ 1047]: Ուստի հուշարձանի վերականգնման նախագծի նախապատրաստմանը զուգընթաց, խումբը հուշարձանի մշակութա-զբոսաշրջային ծրագրի զարգացման հարցի շուրջ աշխատանք է տանում համայնքի հետ: Արդյունքում դեռ չվերականգնված վանքը պարբերաբար օգտագործվում է որպես թատերական և երաժշտական ելույթների հարթակ: Վերականգնումն իրականացվում է հին նյութերի և տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչը մասնավորապես կապահովի տեղի բնակչությանը աշխատանքով, զուգահեռ ձեռքով քարի մշակման տեխնոլոգիայի ուսուցմամբ:

Ինչպես կարող ենք տեսնել, ոչ առևտրային նախագծերի կարևոր բաղկացուցիչներից մեկը ժառանգության վերականգնմանն ուղղված լրացուցիչ կրթության հնարավորությունն է: Այս դեպքում նման նախագծերի զարգացման ռեսուրս կարելի է համարել արևմտյան կրթական համակարգում լայնորեն տարածված վարպետության դասերի և արտագնա պարապմունքների փորձը:

Օրինակելի է «Memory in progress» արտ-նախագծի փորձը, մի խումբ նկարիչ ուսանողների և ճարտարապետների կողմից իրականացված 2004-2006 թվականներին ֆրանսիական Սենթ-Թելո գյուղում [24]: Նախագծի շրջանակում մշակվել և իրականացվել է հայեցակարգային ճարտարապետաքանդակային օբյեկտ, ինտեգրված դատարկ ապարանքի կառուցվածքում, որը այդ դեպքում մնաց չվերականգնված: Օբյեկտի մասին բազմիցս տպագրվել է և այն դարձել է գյուղի գլխավոր զբոսաշրջային հետաքրքրությունը:

Վերջին օրինակով ցուցադրվում են ճարտարապետական ժառանգության, այդ թվում՝ ամրոցների պահպանման և օգտագործման արևմտյան արդի միտումները, շինությունների հին ձևաբանական համակարգերի ինտեգրումը ժամանակակից ճարտարապետության և արվեստի տարրերի պրակտիկ ներդրմամբ: Ընդ որում, ներդրման աստիճանը կարող է տարբեր լինել՝ ժամանակավոր հավաքովի

կոնստրուկցիաներից մինչև կցակառույցներ, պայմանավորված օբյեկտի պահպանության պահանջներով, ճարտարապետի հեղինակային ձեռագրով կամ, մասնավոր պատվիրատուի պահանջներով:

Եվրոպական երկրների միջնադարյան ամրոցների ուսումնասիրությունը շեշտադրված է հանրության կարիքների համար դրանց ժամանակակից վերաօգտագործման և կիրառման եղանակներին: Միջազգային օրենսդրության և գիտնականների հասկացությունների ուսումնասիրությունը ձևավորում է հակասական հավասարություն՝ առավելագույն պահպանություն, նվազագույն փոփոխություններ, համապատասխան ադապտացում [25]: Գոյություն ունի ամրոց-բնակատեղիների ժառանգության պահպանման մի քանի հայեցակարգ:

«Ավերակների այգու» հայեցակարգը առաջացել է ռոմանտիզմի դարաշրջանում, բայց ներկայիս ժառանգության պահպանությունում այն կարող է դիտարկվել որպես ամենաչափավոր և բնական ժառանգության կիրառման մեթոդ, երբ օբյեկտը պահպանվում է այն վիճակում, որում նա հասել է մինչև մեր ժամանակները: Օբյեկտն ինքնին դառնում է ցուցանմուշ, այն հաճախ օգտագործվում է «պասիվ» ձևով. իրական օբյեկտի ընկալումը թույլ է տալիս զգալ ժամանակի հոսքը: Օգտագործման և կիրառման հայեցակարգը տարածված է այն օբյեկտների վրա, որոնք կորցրել են ձևի ամբողջականությունը, բայց պահպանել են միջավայրի աուտենտիկությունը (Ֆլինտ ամրոցը Ուելսում, Նովոգուդրկը Բելառուսում, Օգրոդզիենիեցը Լեհաստանում): Այսպիսի ադապտացումը բնորոշվում է նվազագույն միջամտությամբ, նորարարություններից խուսափմամբ, և շեշտադրմամբ բնական էվոլյուցիայի, փոփոխության և կորստի զգացողությամբ [25, էջ 41]:

Ժառանգության պահպանության մեկ ուրիշ հայեցակարգ կարող է կոչվել «վավերականություն և նորարարություն»: Այս դեպքում ժառանգության ադապտացումը հիմնվում է համազոր երկխոսության՝ պատմության և նորության վրա, և իրականացվում է տարբեր տարիքի նյութերի և ֆորմաների համադրմամբ: Հակադրության սկզբունքի օգտագործումը բարդ է և ռիսկային, հակառակ՝ «հին և նոր» հատկությունների պատճառով, և «բաժանել և միացնել» հակառակ ուղղությունները պետք է ներդաշնակեցնել [26]: Այս տիպի ժառանգության կիրառման հաջողությունը

պատկերավորում է Կոլդինգուս ամրոցը (1991) Դանիայում և Կաստելգրանդե ամրոցը (1991) Շվեյցարիայում: Դանիական ամրոցը խիստ վնասված էր. այն հետազոտվել էր, այնուհետև ամբողջովին վերականգնվել: Նոր ճարտարապետական տարրերը ձևավորվել էին տարբեր գույների և ձևերի աղյուսներից. կոնստրուկցիայի ինտերիերի տարրերի (սյուները և աստիճանները) ժամանակակից ձևերը նույնիսկ հռչակվում էին որպես արվեստի նմուշ, բայց միևնույն ժամանակ դրանք «հարգալից կերպով» տարածություն են թողնում պատմական նյութի տեսողական ընկալման համար: Ներքին տարածությունն օգտագործվում է թանգարանի և ցուցասրահի նպատակով: Շվեյցարական ամրոցը վերականգնվել և մասնակիորեն վերակառուցվել է ժամանակակից նյութերով և մոնումենտալ ձևերով, որոնք ամբողջություն են կազմում պատմական ամրոցի հետ: Ամրոցի ներքին տարածությունը գերակշռում է ժամանակակից գեղագիտությամբ, և նրա հոյակերտությունը լիովին համապատասխանում է ամրոցի պաշտպանական սեմանտիկային:

Ի հավելում վերը քննարկված ժառանգության ադապտացման եղանակների, կարելի է անվանել ևս մեկը՝ «առանց հստակ հայեցակարգի»: Այս եղանակը նման է միջանկյալ դիրքի, երբ օբյեկտները պետք է ավելի ակտիվ դեր խաղան հանրային կյանքում: Հետևաբար դրանք օգտագործվում են առանց պատմականի և ժամանակակիցի հստակ կամ բացահայտ տեսակետի: Այսպիսի օբյեկտների կերպարի մեջ հաճախ բացակայում է ամբողջականությունը, գեղագիտական համաձայնեցվածությունը, և դրանք ստեղծում են անավարտության տպավորություն (Լիդս ամրոց, Բելառուս, Իվագոռոդ, Ռուսաստան):

Լեհաստանի Մալբորկ ամրոցի վերականգնումը և ադապտացումը բացառիկ դեպք է: Ամրոցը վերականգնվել է ավանդական նյութերով և ձևերով: Այնուամենայնիվ ներքին տարածությունները դրսևորում են հարմարվելու հայեցակարգը, որում տարածությունը բաժանված է երեք խմբի: Աուտենտիկ նյութը գերիշխում է առաջին խմբում, երկրորդ խմբում ժամանակակից արտահայտվածությունը հավասարակշռվում է աուտենտիկի հետ: Տարածությունների երրորդ խումբը ամբողջովին բաղկացած է ժամանակակից ձևերից, այս տարածությունը լիովին վերակառուցվել է, այստեղ են կազմակերպվում ժամանակավոր ցուցադրությունները: Այս նախագիծը ցուցադրում է

ժամանակի գաղափարը, որը կարող է ընկալվել օբյեկտի տարբեր փուլերով՝ իր բնօրինակ շինարարությունից մինչ օրս: Այսպիսով, միջնադարյան ամրոցն իր մեջ ներառում է երեք տարբեր մեկնաբանություն՝ աուտենտիկություն, աուտենտիկություն և արդիականություն, արդիականություն (Անցյալ, Անցյալ+Ներկա, Ներկա) [25, էջ 44]:

Այցելուներին ժառանգության օբյեկտի իմաստը մեկնաբանելու արվեստը ստեղծագործական գործընթաց է, որը պահանջում է տարբեր հմտություններ, յուրօրինակ մտահղացումներ, ստեղծագործական մտածողություն:

1.2. Մեթոդական փորձը ճարտարապետական ժառանգության օգտագործման ոլորտում

Տվյալ բաժնում բացահայտվել են ճարտարապետական ժառանգության ժամանակակից օգտագործման խնդիրների լուծման՝ գոյություն ունեցող տեսական մոտեցումները, որոնք սույն դեպքում կիրառվում են լայն իմաստով՝ և՛ որպես առանձին հուշարձաններ, և՛ որպես ձևավորված ճարտարապետական միջավայր: Տվյալ դեպքում խնդրի ուսումնասիրման տիպաբանական շրջանակների ընդլայնումը պայմանավորած է շուկայական պայմաններում ամրոցների օգտագործման թեմայի նորության և անմիջական փորձի սակավության հետ:

1.2.1. Ամրոց-բնակատեղիների օգտագործման տեսական հիմնավորումները

Պատմական շենքերի պահպանումը կարևոր է, քանի որ դրանք անցյալի սոցիալ-մշակութային վկայությունն են: Իրենց կյանքի ընթացքում պատմական շենքերը կարող են կորցնել գործառույթը և լքվել: Հարմարեցված վերաօգտագործումը պատմական շենքի գոյատևման ճանապարհն է՝ իր տարածաշրջանի պահանջներին համապատասխան գործառույթը փոխելով [11]:

Պատմական շենքերը գեղագիտական, մշակութային և տնտեսական առումով որոշիչ ռեսուրսներ են: Շենքերի վերաօգտագործումը և այսօրվա պահանջներին հարմարեցումը դարձել են կառուցապատվող միջավայրում աճող միտումներ: Վերաօգտագործման միջոցով շենքի կյանքի երկարացումը կարող է նվազեցնել նյութական, տրանսպորտային, էներգետիկ ծախսերը և շրջակա միջավայրի աղտոտումը: Սա կարող է նշանակալի ներդրում դառնալ կայուն զարգացում ապահովելու առումով [27]:

Մյուս կողմից՝ ժառանգության պահպանումը քաղաքային համայնքների համար ապահովում է տնտեսական, մշակութային և սոցիալական օգուտներ: Շենքի պահպանության խնդիրը վերածվել է քաղաքի վերափոխման և կայուն զարգացման մի բաղադրիչի [28]: Համաձայն [29]-ի. «Ժառանգության շենքերն անցյալի արժեքավոր ծանուցումն են և բնութագրում են համայնքներին և, հետևաբար, պետք է պահպանվեն ապագա սերունդների համար»:

Շենքերի ավելորդ դառնալու համար կան պատճառներ, պայմանավորված տնտեսական և արդյունաբերական գործունեության փոփոխություններով, ժողովրդագրական տեղաշարժերով, պահպանման կամ սպասարկման ծախսերի բարձրացմամբ և, առաջին հերթին, այն պատճառով, որ դրանք այլևս պիտանի չեն այն գործառույթի համար, որով օգտագործվում էին, և նոր կենսունակ գործառույթը դեռ չի որոշվել [30]: Հարմարեցված վերաօգտագործումն այս շենքերը կրկին կյանքի կոչելու մեթոդ է: Հարմարեցված վերաօգտագործումը [29]-ը սահմանվում է որպես այնպիսի «գործընթաց, որը փոխում է օգտագործված կամ անարդյունավետ տարրը նոր տարրի և կարող է կիրառվել այլ նպատակներով»: Այն հաճախ բնութագրվում է որպես «գործընթաց, որի միջոցով կառուցվածքային հին շենքերը մշակվում են տնտեսապես կենսունակ նոր օգտագործման համար [31]»:

Սովորաբար շենքերը կյանքի ընթացքում փոխում են իրենց գործառույթը: Նոր գործառույթի տեղակայման համար շենքում փոփոխություններ կատարելը հաճախ ճարտարապետական ժառանգության շարունակական օգտակարությունն ապահովելու միջոց է: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նոր գործառույթի իրականացման պատշաճությունը պատմական շենքում [30]:

Գոյություն ունեցող պատմական շենքի հարմարեցումը ժամանակի պահանջներին՝ դա նոր գործառույթներին համապատասխանեցնելու գործընթաց է [32]: Այս վերափոխումները կարող են տարբեր լինել այս կամ այն դեպքի համար: Ինչպես նշվում է [33]-ում «Սա նշանակում է՝ ցանկացած միջամտություն, որն ավելին է, քան սպասարկումը, փոխում է իր կարողությունները, գործառույթը կամ բնութագրիչը»: Այն ներառում է՝ փոփոխություն, պահպանություն, ընդլայնում և վերանորոգում, վերագինում:

Ամրոց-բնակատեղիների օգտագործման տեսանկյունից գնահատման պատմական նախադեպեր ՀՀ-ում առկա չեն: Խորհրդային իշխանության առաջին տարիներին ժառանգության օբյեկտների ազգայնացման ընթացքում առաջին անգամ ծագում է նոր գործառույթներին հարմարեցնելու հարցը: Գնահատումը իրականացվում է հողային հանձնաժողովների կողմից առավել ընդհանուր մոտեցումներով: Ակնառու պատմամշակութային և ճարտարապետական արժեքը կարող էր թանգարանացման հիմք դառնալ: Այլ դեպքերում, ապարանքներն օգտագործվել են բնակավայրի ուտիլիտար կարիքների համար [34, էջ 563]:

Ռուսական ապարանքների օգտագործման համալիր գիտական հիմնավորման առաջին փորձերից մեկը կարելի է գտնել Է.Ն. Չեռնյավսակայի 1980 թվականի թեզում [35], որում ապարանքները, այգիների հետ համատեղ, դիտարկվում են որպես բնակչության ռեկրեացիայի և զբաղվածության ներուժ [35, էջ 63]: Աշխատանքի հիմնական բովանդակությունը նվիրված է ապարանքների համալիր մինչնախագծային վերլուծության մեթոդաբանության մշակմանը, և որի մի մասը վերաբերում է օգտագործման հարցերին: Առաջարկվում է ապարանքների պահպանության նպատակով մինչնախագծային վերլուծության հետևյալ հաջորդականությունը որոշել՝

1. հուշարձանի համեմատական արժեքը,
2. հուշարձանի պահպանության ենթակա տարածքը,
3. օգտագործման տեսակը,
4. հուշարձանի պահպանության համար անհրաժեշտ լրացուցիչ տարածքները,
5. հուշարձանի վերականգնման աստիճանը:

Օգտագործման օպտիմալ տեսակները առանձնացվում են ապարանքների օգտագործման սահմանված հայրենական փորձից, որոնք վերլուծվում են ըստ գործոնների չորս խմբի.

1. Օգտագործման այս կամ այն տեսակներում մշակութային և կրթական գործառույթի ինտենսիվություն՝ այցերի ինտենսիվություն, մշակութային և ճանաչողական նպատակով այցելությունների կազմն և այցելուների համակազմը: Ինտենսիվության ինդեքսի ամենաբարձր արժեքն ունեն հանրային զբոսայգիները և թանգարանները, պակաս արժեք ունեն հիմնական օգտատերերի փոփոխական

կազմով հաստատությունները (կրթական, բուժական, մանկական հաստատությունները), ամենափոքր արժեքն ունեն հիմնական օգտատերերի մշտական կազմով հաստատությունները (վարչական և գիտական կազմակերպություններ): Ըստ այցելության նպատակների, առանձնացվել են թանգարանի օգտագործումը, հանգիստը և հատուկ գործունեությունը: Այցելուների կազմը դասակարգված է գիտաշխատողներից մինչև երեխաներ:

2. Օգտագործման այս կամ այն տեսակներում հուշարձանի ձևի պահպանման աստիճան՝ պատմական ձևերի պահպանման աստիճան և նոր տարրերի ներդրման ինտենսիվություն: Երկու ցուցանիշով առաջատարն է թանգարանային օգտագործումը: Հանրային այգիներում միայն աջակցվում են լանդշաֆտային տարրերը, իսկ նոր տարրերը, որպես կանոն, ժամանակավոր են (բեմեր, մանկական խաղահրապարակներ և այլն): Օգտագործման այլ տեսակներին բնորոշ է հիմնական տան պահպանությունը և տարբեր աստիճանի ինտենսիվությամբ նոր շինարարությունը: Հատկանշական է, որ հետազոտողը փոխկապակցվածության մեջ է դրել հուշարձանի օգտագործման տեսակը և հուշարձանի վերականգնման նպատակահարմար աստիճանը, ըստ որի, օրինակ, ամբողջական վերականգնումը համապատասխանում է միայն թանգարանային օգտագործմանը [35, էջ 78]:

3. Ազլումերացիայի կարիքը գործառույթներում, որոնք կարող են տրվել ապարանքներին:

4. Յուրաքանչյուր ապարանքի քաղաքաշինական իրավիճակը, որը սահմանափակում է ապարանքների որոշակի օգտագործման հնարավորությունը:

Աշխատանքում նաև առաջարկվում են ապարանքների պահպանման նպատակով օգտագործման սահմանափակման մեթոդներ, մասնավորապես, քաղաքների պայմաններում՝ բուֆերային այգիների նախագծում և դրանցում սպասարկման ծառայությունների տրամադրում [35, էջ 69]: Առաջարկվում է ներմուծել պաշտպանական գոտիներում օգտագործման սահմանափակումներ: Պահպանվող տարածքներում պետք է արգելել ոչ ավանդական գործառույթները (սպորտ, մանկական հանգիստ, հանրային սնունդ, առևտուր), անվտանգության գոտիներում՝

սահմանափակել ոչ ավանդական գործառույթները ավանդական ձևերով, կարգավորվող գոտիներում, թույլատրել նոր տեսակների ավանդական գործառույթների ներդրում:

Գնահատելով այս մոտեցումը՝ պետք է նշել, որ այն կառուցված է վիճարկելի գիտավարկածի հիման վրա. ԽՍՀՄ-ում ապարանքների օգտագործման ձևավորված համակարգը պարունակում է ինքնաօպտիմալացման համար ռեսուրսներ՝ դրանում առկա դրական օրինակների ձևով: Արտասահմանյան փորձը չի դիտարկվում:

Ե.Վ. Պոլյանցեվի 1989 թվականի [36] նմանատիպ աշխատանքում օգտագործման առաջարկությունների հիմնավորումը կատարվում է տարածաշրջանի ապարանքների ճարտարապետական բնութագրերի համեմատության (ճարտարապետական առանձնահատկություններ, որոնք ազդում են ժամանակակից օգտագործման և պահպանության բնույթի վրա) և ներքին ու արտասահմանյան փորձից բխող եզրակացությունների հիման վրա:

Ճարտարապետական առանձնահատկությունների շարքին է դասվել բացարձակ (ստեղծման ժամանակը և համալիրի կարևորությունը, հորինվածքային լուծումների եզակիությունն ու արտահայտչությունը, շինանյութի և կառուցվածքային լուծումների եզակիությունը) և հարաբերական արժեքը (ապարանքի և դրա առանձին տարրերի դերը տարածաշրջանի պատմական լանդշաֆտի ձևավորման գործընթացում), ինչպես նաև ապարանքի համալիրի շենքերի ընդհանուր օգտակար մակերեսը (տարբեր ապարանքների համալիրների տարբեր կազմի ճշգրտմամբ):

Պահպանվածությանը վերաբերող տվյալները առաջարկվում է ներկայացնել ըստ 4 համապատասխան խմբերից մեկին պատկանելության.

1. ապարանքներ, որոնցում պահպանվել է շինությունների զգալի մասը, այգին և համալիրի հիմնական տարրը,
2. ապարանքներ, որոնց կազմի մեջ ներկայումս մտնում են եկեղեցական կառույցներ, այլ շինություններ, այգի, բայց բացակայում է հիմնական հորինվածքային տարրը՝ միջնաբերդը/(հիմնական տունը (կամ հիմնական տան համալիրը),

3. քաղաքից դուրս գտնվող համալիրներ, որոնցում պահպանվել է այգին կամ այգին
և համալիրի օժանդակ շինությունները,

4. ապարանքներ, որոնցում պահպանվել է մեկ շինություն կամ այգու փոքր
հատված (համալիրի մնացած բոլոր տարրերը չեն պահպանվել) [36, էջ 106]:

Փորձի վերլուծության արդյունքում կատարվել է օգտագործման՝ առկա տեսակների
դասակարգում «հեռանկարային» (թանգարաններ, առողջարաններ, հանգստյան
տներ, ճամբարներ) և «անհեռանկար», այսինքն՝ փակ և ուտիլիտար շահագործման
ռեժիմ ունեցողներ (հիվանդանոցներ, նախադպրոցական հաստատություններ,
գիտահետազոտական ինստիտուտներ, արտադրական ձեռնարկություններ,
զորամասեր, մշտական բնակելի կառույցներ):

Արդյունքում ձևակերպվել են ապարանքների ժամանակակից օգտագործման
սկզբունքները.

1. նոր կազմը որոշվում է հուշարձանի գործող ձևով,
2. գործառույթի կայունություն (մշտական կատարելագործումների շնորհիվ
նվազագույն դինամիկ փոփոխականության գործընթաց),
3. հուշարձանների մատչելիություն՝ դրանց ծանոթանալու և ուսումնասիրելու համար,
4. նոր գործառույթը չպետք է խախտի գեղարվեստական արժեքի ընկալումը,
5. ապարանքների պատմականորեն ձևավորված «թփերի» օգտագործման
համալիրություն,
6. ամբողջ ապարանքի ամբողջական յուրացումը, առավելապես՝ մեկ վարձակալողի
կողմից,
7. հաստատության գործառնական կառուցվածքի համապատասխանությունը
համալիրի տարածական կառուցվածքին,
8. հանրային գործառույթները հիմնական տանը տեղակայման նախապատվություն;
9. շրջակա լանդշաֆտի և շինությունների համատեքստում այգու համահունչ
օգտագործում,
10. տնտեսական շինությունները՝ որպես ապարանքի օգտագործման նոր
տեսակների որոնման հիմնական ներուժ:

Համառոտ ներկայացված է գործառական օգտագործման երկու տեսակի մոդելների կառուցման հնարավորություն՝ ապարանքների համար ավանդական գործառական կապերի տեղակայմամբ և հիերարխիայով և այս սխեմայի հիմնավոր փոփոխությամբ:

Բացի այդ, ընդհանուր տարածաշրջանի համար բնակավայրերի ճարտարապետության և պահպանվածության տվյալների հիման վրա կատարվել են ապարանքի այս կամ այն տարրերի վերականգնման նպատակահարմարության վերաբերյալ հանձնարարականներ, ինչպես նաև առաջարկվել են ապարանքի հաջորդական զարգացման սկզբունքներ՝ կախված դրանց հատակագծման տիպից (կանոնավոր հատակագծմամբ ապարանքների համար նպատակահարմար է հիմնական տուն-ճանապարհ առանցքի պահպանումը, իսկ փակ հորինվածքների համար՝ անկախ գործառնական գոտիների զարգացումը):

Ճարտարապետ Ի.Լ. Կորոբիցինան նշում է 1980-ականների վերջին, «ՄՀՍԱԳՆԻ»-ի (Մշակույթի, հանգստի, սպորտի, առողջարանային օբյեկտների գիտահետազոտական նախագծային ինստիտուտ), համալիր օբյեկտների օգտագործման տեսակի ընտրության (ապարանքների օրինակով) մինչ օրս արդիական նմանատիպ մեթոդաբանությունը: Մեթոդաբանության նպատակն է՝ «հարստացնել հուշարձաններով «հուշված» գոյություն ունեցող ընդունված մշակութային հաստատությունների նոմենկլատուրան նոր տեսակներով և տիպերով» [37, էջ 44]: Այսպես, ապարանքներում թույլատրելի գործառույթի շարունակականության վրա հիմնված ժամանակակից գործունեության տեսակներին դասվել են «հանգստի բազաները, այդ թվում՝ աշխատանքային գործունեությամբ, արտագնա տեղական ակումբները, պատմամշակութային, պատմագիտական և ռեկրեացիոն կենտրոնները, թանգարան-այգիները, թանգարան-ապարանքները և այլն» [37, էջ 48]: Մեթոդի շրջանակներում մշակվել են հուշարձանի օգտագործման առավել նախընտրելի տեսակի չափորոշիչներ և ցուցանիշներ և այդ տեսակների ընտրության համակարգ, այդ թվում միավորային համակարգի օգնությամբ:

Օգտագործելով այս մեթոդը՝ Ի.Լ. Կորոբիցինայի կողմից մշակվել է Կուզմինկի և Լյուբլինո ապարանքների՝ դեպի արգելոց-թանգարան վերածնման հայեցակարգ, որի շրջանակներում որոշվել է թանգարանի թեմատիկ կառուցվածքը, հուշարձանի

առանձին շենքերի գործառական օգտագործումը, համալիրների յուրացման փուլերը, իրավական կարգավիճակը և ֆինանսավորման հնարավոր աղբյուրները: Հայեցակարգի թերություններից է գործառնական ծրագրի զարգացման տարբերակների որոշ աղքատությունը, որը չի դուրս գալիս թանգարանային գործառույթի տարբեր մեկնաբանությունների շրջանակներից:

Ներկայումս «Ռուսական ապարանքների վերածննդի հիմնադրամի» [38] գործունեության շրջանակում կիրառվում է ապարանքների օգտագործման հարցերի մինչնախագծային մոդելավորման փորձը: Հիմնադրամի ծառայությունների շարքում նշվում է «ապարանքների ժամանակակից օգտագործման համար առաջարկությունների նախապատրաստում՝ հաշվի առնելով դրանց աշխարհագրական դիրքը և պատմա-մշակութային արժեքները, շրջապատող լանդշաֆտի առանձնահատկությունները»: Ընդ որում որպես առաջարկների հիմք ընդունվում են ապարանքների համալիրների հետևյալ ժամանակակից օգտագործման հիմնական նախագծերը.

- կորպորատիվ բնակությունը,
- անհատական բնակությունը,
- հանգստյան տուն, զբոսաշրջային համալիր, պանսիոն, առողջարան,
- մասնագիտացված «Շատ կարևոր անձանց» (VIP) ակումբ (որսորդական, ծիսասպորտի և այլն),
- կրթական պանսիոնատ, դպրոց,
- մշակութային կենտրոն (թանգարանի ցուցանմուշների ցուցահանդեսներ, համերգներ, ընդունելություններ),
- բժշկական հաստատություն:

Ապարանքների մինչնախագծային մոդելավորման գործնական գործունեության շրջանակներում ավելի զարգացած մեթոդ ունի ճարտարապետ Մարտին Քիթը [14]: Ելնելով այն համոզմունքից, որ բազմաբնակարան էլիտար բնակելի գործառույթը հանդիսանում է ապարանքների պահպանման և օգտագործման համապիտանի և օպտիմալ տեսակ է, Քիթը դասակարգել է Բրիտանական չօգտագործվող ապարանքները ըստ հատակագծերի տիպերի և որոշել այդ հատակագծերի

ձևափոխման օրինաչափությունները: Սրա հետ մեկտեղ որպես ձևափոխման օպտիմալության չափանիշներ վերցվել են այնպիսի տվյալներ, ինչպիսիք են՝ պատուհաններից երևացող տեսարանը, նվազագույն վերահատակագծմամբ յուրաքանչյուր բնակարանի համար առանձին մուտք կազմակերպելու և այդ մուտքերը խմբավորելու հնարավորությունները: Ձևակերպվել են նաև նման վերափոխումների որոշ ընդհանուր սկզբունքներ.

- Առանձին բնակարանների մուտքերը ցանկալի է խմբավորել մեկ տեղում, իսկ ավտոկայանատեղիները պետք է լինեն առավելագույնս թաքնված, լավ տեսարան ապահովելու նպատակով, որը առևտրային գործոններից կարևորագույնն է:
- Համալիրի շահութաբերության համար բնակարանների չափերը պետք է տարբեր լինեն:
- Վերակառուցողական միջամտությունները պետք է հասցվեն նվազագույնի (ճակատների, կրող պատերի կոնստրուկցիայի փոփոխություն) և անհրաժեշտության դեպքում, ի վնաս բնակարանի հարմարավետությանը:
- Թևավոր շենքերի դեպքում վերականգնողական աշխատանքների ֆինանսավորումը նպատակահարմար է սկսել թևերից: Առաջին հերթին՝ հնարավորություն կա արագացնել շենքի օգտագործման սկիզբը: Երկրորդ՝ շենքի ավարտուն հատվածի առկայությունը հիմք է դառնում լրացուցիչ ներդրումների ներգրավման համար: Երրորդ՝ բացառվում է տարբեր մասնագիտացումներով բրիգադների աշխատանքների պարապուրդը:

1.2.2. Ճարտարապետական ժառանգության օբյեկտների օգտագործման հիմնավորումների արդի մոտեցումները

Շուկայական պայմաններում սպասարկման առևտրային հաստատությունների տեղակայման և գործելու ոլորտին վերաբերող կոշտ ցուցումները չեն աշխատում, իսկ ներդրումները, առաջին հերթին, մասնավոր են և իրականացվում են՝ հաշվի առնելով ներդրումների շուկայում գործող բազմաթիվ, այդ թվում՝ վարչական սուբյեկտների շահերը [39, էջ 53]: Հուշարձանների պահպանության ոլորտում հրատապ է դառնում ներդրումների ներգրավման խնդիրը: Այս իրավիճակի ազդեցությունը ամրոց-

բնակատեղիների վրա երկակի է: Որոշ դեպքերում առաջ են գալիս պահպանման, մյուսներում՝ օգտագործման հարցերը:

Առաջին դեպքը վերաբերում է ամրոց-բնակատեղիներին, որոնք հայտնվել են քաղաքի սահմանագծի վրա կամ դրա անմիջական հարևանությամբ: Նման իրավիճակներում, երբ «քաղաքաշինության գործընթացի բոլոր մասնակիցները շահագրգռված են անշարժ գույքի օբյեկտների օգտագործման ինտենսիֆիկացումով և փոփոխությամբ», ժառանգությունը պահպանելու միակ ճանապարհը դառնում է սեփականության զարգացման թույլատրելի չափանիշների իրավական ամրագրման վրա հիմնված կարգավորող մեխանիզմների օգտագործումը [40, էջ 25]:

Նման մեխանիզմների հիմքը պետք է լինի հուշարձանների սեփականատերերի կամ օգտագործողների հանդեպ կիրառվող այս կամ այն իրավասության սահմանափակումների առավելագույն օբյեկտիվ հիմնավորումը, անհրաժեշտ է որոնել «պատմական կենտրոնի մասին այնպիսի գիտական տեղեկություններ, որոնք որոշակիորեն պաշտոնապես ամրագրված լինելով, կարող են անմիջականորեն ներառվել նախագծային և ներդրումային գործընթացում» [41, էջ 86]:

Ցանկացած նմանատիպ հիմնավորման հիմքում ընկած է հուշարձանի արժեքը, որը որոշակի ասպեկտների բարդ համակարգ է, զանազան պատմական և մշակութային միջավայրի տարբեր մակարդակներում [42, էջ 19]: Օրենքով ամրագրված արժեքների տվյալների գործունության ապահովման ճանապարհը բուն պահպանման առարկաները, այսինքն՝ մշակութային ժառանգության օբյեկտի այն առանձնահատկությունները որոշելն է, որոնցով գնահատվում է դրա արժեքը և ենթակա է պարտադիր պահպանման: Անշարժ գույքի օբյեկտի սահմանումը, որպես պահպանման առարկա բոլոր սահմանափակումները բերում է իրավական դաշտ [40, էջ 99]:

Ինչպես ցույց տվեց Եմելյանովը Ա.Ա. [43], պատմական բնակավայրերի տարածքների օգտագործման սահմանափակումների հիմնավորման համար կարող է նաև կիրառվել տարածքի պատմամշակութային ներուժի մաթեմատիկական քանակական գնահատականը, որպես «պատմական բնակավայրի տարածքում գտնվող անշարժ գույքի օբյեկտների պատմամշակութային բնութագրերի

ընդհանրացում» [43, էջ 14]: Այս դեպքում որպես քանակական ցուցանիշ կարող է հանդես գալ «տարածքի պատմամշակութային ներուժի խտության» արժեքը: Առանձին օբյեկտների արժեքի վերաբերյալ նախնական օբյեկտիվ տեղեկություն են պարունակում օբյեկտների պետական փորձաքննության արդյունքում որոշված պահպանության կարգավիճակները: Կարգավիճակները դասակարգվում են պատմամշակութային արժեքի գործակցի օգնությամբ (ժամանակակից շինարարության օբյեկտից մինչև ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտ աստիճանավորմամբ): Պատմամշակութային տարածքի հաշվարկի բանաձևը սույն տարածքում գտնվող տարատեսակ անշարժ գույքի օբյեկտների մակերեսների գումարն է, բազմապատկած, ըստ մշակութային արժեքի, համապատասխան գործակցով՝ տարածքի ընդհանուր մակերեսի հաշվով [43, էջ 54]:

Պատմամշակութային ներուժի խտության տարբեր արժեքներ համադրվում են տարածքի պահպանման ռեժիմների առաջարկություններին (պատմամշակութային արգելոցից մինչև նոր շինարարական օբյեկտների ազատ տեղակայում դասակարգմամբ):

Այս մոտեցումն ունի լուրջ գործնական սահմանափակումներ, քանի որ ենթադրում է հուշարձանների պետական գրանցման ամբողջականություն, մինչդեռ թերևս առկա են չպեղված և չներառված հուշարձաններ: Քաղաքային և տարածաշրջանային մակարդակներով վերոհիշյալ հիմնավորման ևս մեկ ճանապարհ կարելի է համարել կադաստրի ձևը, որը «տարածքային կառավարման համակարգի համար կենտրոնացնում է ռեսուրսային տեղեկատվությունը» [44, էջ 209]: Օրինակ, 1997 թ. մշակվել է «Նովգորոդ քաղաքի պատմամշակութային ժառանգության կադաստր»: Կադաստրը, ի թիվս այլ նյութերի, ենթադրվում է ներդրողների կողմից որպես բիզնես նախագծերում ելակետային փաստաթուղթ օգտագործման համար և պարունակում է հետևյալ տեղեկությունները.

- քաղաքի հնէառեյիեֆի,
- մշակութային շերտի գտնվելու և վիճակի վերաբերյալ,
- թաղված ճարտարապետական հուշարձանների,

- մշակութային շերտով պատմա-մշակութային նշանակություն ունեցող հողերում գործողությունների կանոնակարգերի վերաբերյալ,
- կարևոր պատմական շրջաններում քաղաքաշինական նախագծերի և քաղաքի կառուցապատման վերաբերյալ,
- քաղաքի հիմնական դիտարժան վայրերի և կառուցապատման բարձրությունների նիշերի և կանաչապատման կանոնակարգերի վերաբերյալ,
- քաղաքի կարևոր թանգարանային համալիրների և զբոսաշրջային երթուղիների վերաբերյալ,
- պատմության և մշակույթի բոլոր հուշարձանների և դրանց պահպանման գոտիների և կառուցապատման գոտիների կարգավորման վերաբերյալ,
- պահպանվող և բնական լանդշաֆտների գոտիների սահմանների վերաբերյալ;
- բնության հուշարձանների,
- Նովգորոդ քաղաքի և շրջակա տարածքների պատմական և մշակութային հուշարձանների պահպանության համար համալիր գոտիների սահմանների և քաղաքաշինության ու տնտեսական գործունեության կանոնակարգերի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ քաղաքից դուրս գտնվող օբյեկտների վերոհիշյալ համալիր գնահատումը, պահպանման նպատակներին ծառայելուն զուգընթաց կարող է որոշակի ներդրում ունենալ դրանց օգտագործման զարգացման գործում: «Պարզ է դառնում, որ եզակի օբյեկտների պահպանությունը և օգտագործումը կենսունակության տեսակետից չի կարող արդյունավետ լինել դրանց շրջապատող պատմական և բնական տարածքների սահմաններից դուրս» [45, էջ 7]: Հետևաբար, պատմամշակութային նշանակության հողերի և առավել պահպանվող բնական տարածքների ժառանգության ամբողջական ցանկի ընդհանրացումը կարող է նպաստել մեծացնելու «տարածքի օգտագործման հեռանկարային հնարավորությունները», զբոսաշրջության սպասարկման, պատմականորեն ուղղված գիտակրթական և արդյունաբերական համալիր նպատակով (արհեստագործական դպրոցներ, ավանդական արտադրություն), ինչը ստեղծում է նախադրյալներ «ժառանգության պահպանության և օգտագործման տնտեսական հիմքերի» ձևավորման համար [46, էջ 6]:

Այս մոտեցման հիման վրա կառուցվում են 1990-ական թվականներից ի վեր մշակվող ժառանգության պահպանման և օգտագործման համալիր տարածաշրջանային ծրագրեր: Մի շարք նման ծրագրեր վերաբերում են խոշոր թանգարան-ապարանքների տարածքային համալիրներին, մասնավորապես՝ Յասնյայա Պոլյանային և Միխայլովսկիին [46, էջ 13]:

Այս մոտեցումը թույլ է տալիս հրաժարվել ավանդական դարձած թանգարանային և արգելոցային փորձից՝ «հուշարձանի կենսունակության կորստի դեպքում արտաքին հատկանիշները պահպանելու ձգտումից», այն հնարավորություն է տալիս ժառանգությունը ներառել ժամանակակից հանրության կյանքում: Նման քաղաքականությամբ ստեղծվում է «մեր ժամանակներում ապարանքի տնտեսական գոյության և տեղի բնակչության պատշաճ սոցիալական զարգացման ապահովման, ընդհանուր ազգային մշակույթի վերածնման» հնարավորություն [47, էջ 177]:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ չպետք է ենթադրել այդպիսի թանգարանային ուղղված մոտեցման արդյունավետությունը, միջակ «հուշարձան» ապարանքների դեպքում: Անհրաժեշտ է փնտրել ապարանքների օգտագործման հնարավորություններ ներդրողների մասնակցության հետ կապված: Նման որոնման հիմնական մեխանիզմը կարելի է համարել ներդրումային գրավչության գնահատականը: Ժառանգության պահպանման տնտեսական գնահատման հետազոտությունների սակավության [40, էջ 27] և «տարածքի ներդրումային գրավչություն» [44, էջ 224] մտահղացման հազվադեպ կիրառելու պարագայում կիրառվող գործիքակազմը քաղաքային տարածքների գոտիավորման և գնահատման տնտեսաքաղաքաշինական մեթոդներն են:

Այդպիսի ուսումնասիրություններից մեկը կարելի է համարել համապարփակ գիտափորձնական՝ «Մոսկվա քաղաքի օրինակով, քաղաքի տարբեր տարածքների քաղաքաշինական ներուժի գնահատման մեթոդները» աշխատանքը: Քաղաքաշինությամբ պայմանավորված ներուժը՝ «հնարավորությունները և առավելությունները (թերությունները) օբյեկտիվ հետևանքներ են համակարգի ենթակառուցվածքի հիմնական տարրերի այս կամ այն դրույթի և ընդհանուր քաղաքի» համադրված «ներդրողների պահանջներին» [48, էջ 31]:

Ըստ հեղինակների՝ տարածքային ներուժի վերլուծության խնդիրը, որպես զարգացման ուղիների սահմանում, որոշակի տեղամասի պայմաններից կախված հնարավոր տարբերակների որոշումը, թերևս դուրս է մնում ճարտարապետների ընդհանուր ուշադրությունից և չի համարվում ճարտարապետի գործառույթը, քանի որ չի հանդիսանում ո՛չ նախագիծ, ավանդական հիմաստով, ո՛չ էլ քաղաքաշինական նախագիծ, որում նկարագրվում է միարժեքորեն պահանջվող ապագա վիճակը: Այդպիսի խնդիրների իրականացման սկզբունքն են «վարիացիոն սցենարները» (what-if scenarios), այսինքն՝ զարգացման հնարավոր սցենարների կառուցումն ու վերլուծությունը: Նման վերլուծության նպատակն է որոշել տեղամասի առավելագույն արդյունավետ օգտագործումը, այսինքն՝ պատասխանել հետևյալ հարցերին.

- «Ո՞ր գործառույթներին է համապատասխանում տեղամասը:
- Ինչպիսի՞ք են այդ գործառույթների համադրումները և հարաբերակցությունները: Արդյո՞ք առկա սեփականության արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է դրանց մեկուսացումը, թե հակառակը՝ համադրումը:
- Որո՞նք են ֆիզիկապես հնարավոր կառուցապատման մեծացման ծավալը և հողի օգտագործման ինտենսիվության աստիճանը: Արդյոք հողամասի կոնֆիգուրացիան և տեղադրությունը հարմար է պահանջվող տիպաբանությամբ շենքերի համար:
- Թողնու՞մ է արդյոք ստացված մակերեսների երկրաչափությունը հնարավորություն հետագա փոփոխությունների, վերահատակագծման կամ վարձակալության հանձնելու համար:
- Հնարավո՞ր է արդյոք բարձրացնել տարածքի գրավչությունը այցելուների համար (եթե խոսքը սպասարկման գործառույթների մասին է) [48, էջ 33]:

Այսպիսի տեղեկատվությունն անհրաժեշտ է նաև պոտենցիալ ներդրողներին, գնորդներին և կառուցապատողներին, ավելին՝ նույնիսկ հողը գնելու փուլում: Հնարավոր է նաև տարբերակ, երբ ընտրվում է հողատարածք ըստ տրված թիրախի, և սցենարի նպատակն է հիմնավորել հողատարածքի պիտանիությունը օգտագործման որոշակի նպատակի համար: Մեկ այլ, ավելի քիչ հանդիպող տարբերակ, երբ հայտնի

հողատարածքի համար որոնվում է օգտագործման օպտիմալ ձևը, և վերլուծության նպատակն է գնահատել հնարավոր տարբերակները:

Ներկայացված սցենարը պետք է ներառի.

- «Ապագա կառուցապատման չափանիշների քանակական գնահատական (շենքերի ընդհանուր մակերես և հարկայնություն, հիմնական գործառական գոտիների մակերես, տարածքի օգտագործման հաշվեկշիռ):
- Գոյություն ունեցող կամ նոր կառուցապատման և հողամասի ազատ մակերեսի օգտագործման գործառական սխեմաներ:
- Պահանջվող հաստատումների կազմի նախնական գնահատական՝ հաշվի առնելով դրանց ձեռքբերման հնարավորությունները և հետագա նախագծման համար անհրաժեշտ նախնական տվյալների հավաքագրումը:
- Շինարարություն և նախագծման տևողության ու ծախսերի նախնական գնահատական, ինչպես նաև բացակայող ելակետային տվյալների ձեռքբերման ժամկետներ:
- Ոչ բավարար տեղեկատվության հետ կապված՝ սցենարի կազմում ընդունված թույլատրելի աստիճանի ռիսկերի նկարագրություն» [48, p.37]:

Պետք է նշել, որ ուսումնասիրությունը իրականացվել է կրթական գործընթացի ռեսուրսների օգտագործմամբ:

Ներդրումային գրավչության գնահատման մեկ այլ մեխանիզմ, բայց արդեն որոշակի նախագծի նախապատրաստման փուլում, կարելի է համարել «տարածքի ներդրումային տեղեկաթերթի (պասսպորտ)» մշակումը: Տեղեկաթերթում ամփոփվում են տարածքի օգտագործման իրավական պայմանները, սակայն, բացի այդ, գնահատվում է տարածքի մասերի զարգացման ենթադրյալ ներդրումային եկամուտը, օբյեկտի յուրացման գործողությունների հերթականությունը, սահմանվում են որոշակի իրավիճակի համար պետական-մասնավոր համագործակցությունների իրականացման ուղիները [44, էջ 236]:

Ներդրումային վերլուծության տարրեր կարելի է գտնել « «Կոնրադ» տարածքի զարգացման ճարտարապետանախագծային հայեցակարգում» [49, էջ 192-224]: Զարգացման նպատակին հասնելու համար որոշվել են այդ զարգացման ռեսուրսները՝

սկսած հենց այդ տարածքի ռեսուրսներից և վերջացրած միջազգային համատեքստով: Ծրագրային սահմանափակումների և նախասիրությունների բաժնում կատարվել է գործառույթների և գործառական ենթահամակարգերի ընտրության հիմնավորում և դրանց հիման վրա՝ հողի արժեքի գործակիցների ներդրմամբ տարածքի գործառական գոտիավորում:

Քաղաքի տարածքների ներդրումային վերլուծության հետ, ուղղակի կապ ունի և «աճի կետերի» որոնումն ու ձևավորումը, այսինքն՝ «ակտիվ գործունեություն ունենցող, որին աջակցելով հեռանկարում քաղաքն ունենում է ոչ միայն ընթացիկ գործունեության հետագա զարգացում, այլև հնարավորություն զարգացնել կամ քաղաքային կյանքում «ներգրավել» մյուս ոլորտները» [39, էջ 55]:

Հարկ է նշել որ, քաղաքային հանգույցների հայտնաբերման և դասակարգման գործիքակազմը այս իմաստով օգտագործվում է «Ներդրումային ռազմավարություն. Սանկտ Պետերբուրգի կենտրոնի վերակառուցում» նախագծում: Քաղաքի հանգույցներն առանձացվում են՝ հիմնվելով հետևյալ հատկանիշների վրա. կարևոր հաղորդակցական դեր (ուղևորաշրջանառություն, տրանսպորտային հոսքերի ինտենսիվություն), մարդաշատություն և կենտրոնականություն (պատմություն, կենտրոն ձևավորող գործառույթներ՝ համաքաղաքային հանրային շինություններ, էլիտար օբյեկտներ, խորհրդանշական արժեք ունեցող օբյեկտներ) [50, էջ 108]:

Հանգույցների շուրջը ձևավորվում են «զարգացման ներդրումային գոտիներ», որոնց ստեղծման նպատակն է կազմակերպել «ենթակառուցվածքների օբյեկտների կլաստերներ, այլ երկարաժամկետ ետզնման օբյեկտներ և արագ ետզնման անշարժ գույքի խմբեր, ինչը թույլ է տալիս առավել արդյունավետ կատարել ընդհանուր ներդրումները քաղաքում» [50, էջ 69]:

Այս գոտիների ներդրումային գրավչությունը գնահատվում է միավորային համակարգի կիրառելիությունը թույլատրող հետևյալ օբյեկտիվ չափանիշներով. հանգույցի աստիճան, կառուցապատման անավարտություն և (կամ) միջավայրի անհամապատասխանություն (կենտրոն ձևավորող գործառույթների բացակայություն), անշարժ գույքի օբյեկտների շահութաբերության մակարդակ (ըստ շուկայական վարձավճարի մակարդակի), տարածքի ազատման և նախապատրաստման ծախսերի

մակարդակ (բնակելի շենքերի վերաբնակեցում), ներդրումային գոտու պոտենցիալ կարողություն (վերակառուցման և նոր շինարարության ընդունված ծավալներ) [50, էջ 65]:

Ռազմավարության մշակման հիմնական արդյունքն են հնարավոր ներդրումային նախագծերի» չափորոշիչները (ըստ էության, նախագծման առաջադրանքներ) առաջնային ներդրումային գոտիների շրջանակներում, որոնցում պարունակվում են անհրաժեշտ գործառույթների, մակերեսների և օբյեկտների կոնկրետ գոտիների կարողությունների վերաբերյալ ցուցումներ [50, էջ 122]:

Պետք է նշել, որ ժառանգության պահպանման ու օգտագործման հարցում բացի ներդրումների ներգրավումից, հատկապես փոքր բնակավայրերում, հեռանկարային արժեք է ստանում սոցմշակութային գործոնը, այսինքն՝ բնակչության մասնակցությունը և գործընկերությունը: Գործընկերությունը միջոց է «բիզնես-կառույցների, բնակչության և հասարակական կազմակերպությունների ներգրավման, տարածքային պլանավորման և համապատասխանաբար իրականացման ծրագրեր» [39, էջ 56]: Գործընկերությունների իրականացման պայմանն է՝ «կենսունակ կազմակերպության ձևավորումը, որի համար զարգացման ծրագրերի իրականացումը գոյատևման պայման է» [49, էջ 64]: Նման կազմակերպության կարևորագույն գործառույթներից մեկը «բնակչության մասնակցությամբ «աճեցված» նախաձեռնությունների առաջացման խթանումն է, դրանք տեղական տարածքային զարգացման ծրագրավորման համատեքստում օգտագործելու ունակությունը» [39, էջ 57]:

Նշված տարբեր բնույթի գործընկերությունների իրականացման արտասահմանյան հարուստ փորձի առկայության դեպքում, Հայաստանում նման երևույթը թերևս բացակայում է [51, էջ 6]: Վերոհիշյալ գործունեության առանձնահատկության պատճառով պահանջվում է բնակչության հետ կրթական և դաստիարակչական տևական աշխատանք, հետաձգվում է Հայաստանում դրա իրականացումը անորոշ ժամանակով:

Եզրակացություններ ըստ գլուխ 1-ի

1. Ամրոց-բնակատեղիների պահպանության և օգտագործման ազգային փորձի վերլուծությունը ցույց տվեց առկա լուծումների սակավությունը: Միևնույն ժամանակ,

գիտական պահպանման և հեռանկարային օգտագործման նպատակներին հասնելը տեղի ունի միայն, որոշ խոշոր արգելոց-թանգարանների դեպքում: Ամրոց-բնակատեղիների մասնավոր իրացումը անկատար իրավական միջավայրում կարող է հանգեցնել պահպանության պահանջների խախտման: Կառավարական ռազմավարական ծրագրերի իրականացումն ստեղծում է ամրոց-բնակատեղիների օգտագործման հարաբերական անվտանգ հեռանկար:

2. Ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման արտասահմանյան փորձը ցույց տվեց նախ և առաջ, տնտեսական խթանների համակարգով օժանդակվող մասնավոր սեփականության զարգացած համակարգ: Օգտագործման բազմաթիվ տեսակներ (թանգարաններ, մշտական և ժամանակավոր բնակարաններ, վարձակալման ենթակա կենտրոններ և այլն) կարող են իրականացվել փոքր օբյեկտներում, որոնց համար հատուկ ենթակառուցվածք և նոր շինարարություն չի պահանջվում: Այս ամենով հանդերձ, հուշարձանի ճարտարապետական կերպարում ժամանակակից ճարտարապետական տարրերի ներառումը չի նվազեցնում, ոչ նրա գիտական, ոչ գեղագիտական արժեքը, բայց դառնում է հավելյալ գրավչության գործոն: Ընդհանուր առմամբ, շինարարական տեխնոլոգիաների և կապի միջոցների զարգացումը, սպառման ավելացումը, կարիքների և ճաշակների բարդացումը հանգեցնում է ամրոց-բնակատեղիի օգտագործման գործառական հնարավորությունների շարքի ընդլայնմանը, անկախ դրանց պահպանության աստիճանից: Գոյություն ունի բազմագործառական օգտագործման միտում, իսկ ամրոց-բնակատեղի ներդրումների շահավետությունը կախված է դրա օգտագործման պոտենցիալ հնարավորությունների բազմազանությունից:

3. Պլանային տնտեսության պայմաններում ամրոց-բնակատեղիների օգտագործման հիմնավորման անմիջական մեթոդական փորձի վերլուծությունը, ցույց է տալիս ժամանակակից պայմաններին միասնական ձևով դրա անհամարժեքությունը, սակայն հնարավոր եղավ առանձնացնել ամրոց-բնակատեղիների օգտագործման հիմնավորման շուկայական պայմաններում կիրառելի մի շարք մեթոդական գործողություններ, ինչպես, օրինակ՝ ամրոց-բնակատեղիների համար օպտիմալ

գործառույթների որոշման միավորային համակարգը կամ գործառույթների տարանջատումը ըստ հեռանկարայնության և ճշտորոշության ցուցանիշի:

4. Շուկայական պայմաններում կազմավորված ճարտարապետական միջավայրի օբյեկտների օգտագործման հիմնավորմանը վերաբերող անուղղակի մեթոդական փորձի ընդհանրացումը պայմանավորած էր ամրոց-բնակատեղիների համապատասխան մեթոդաբանական փորձի բացակայությամբ, և որոշեց մեր խնդիրներին հարմարեցման հնարավորությունը: Սա վերաբերում է «պատմամշակութային ժառանգության կադաստր», «տարածքի ներդրումային տեղեկաթերթ (պասպորտ)», «տարածքի պատմամշակութային և քաղաքաշինական ներուժ» հասկացություններին, ինչպես նաև վիճակագրական գնահատման կամ վարիատիվ մոդելավորման մեթոդներին:

5. Ցույց է տրվել, որ ճարտարապետական ժառանգության օբյեկտների օգտագործման հիմնավորման ցանկացած տեսական մշակում կարելի է պայմանականորեն բաժանել երեք փուլի: Առաջին փուլում հիմնավորվում են ժառանգության օբյեկտի ուսումնասիրության տարածքային սահմանները, ստեղծվում է գաղափար օբյեկտի պատմական կերպարի ու ներկայիս վիճակի վերաբերյալ, ինչի համար կարող են ընդհանրացվել առկա տվյալները կամ անցկացվել հատուկ ուսումնասիրություններ: Երկրորդ փուլում սահմանվում են օբյեկտի օգտագործման ռեսուրսները, որոնք կարող են դուրս բերվել հենց օբյեկտի վերլուծությունից կամ դրա համատեքստից, արտաքին փորձի վերլուծությունից: Երրորդ փուլում ձևակերպվում են օգտագործման առաջարկությունները՝ որպես կոնկրետ հանձնարարականներ, սկզբունքներ, սահմանափակումներ, և/կամ կարող են լինել մեխանիզմների տեսքով՝ մոդելներ, համակարգեր, մատրիցներ և այլն:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐՈՑ ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ

2.1. ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգությունը

Ինչպես ցույց է տրվել գլուխ 1-ում, ճարտարապետական ժառանգության օգտագործման ոլորտում հետազոտությունների համար անհրաժեշտ են հետազոտվող օբյեկտի վերաբերյալ գիտելիքներ: Նշվածը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանության ներուժի գնահատմանը, ուստի խնդրի լուծմանը նախորդում է այդ ժառանգության արաշակի արժեքի բացահայտումը: Ուսումնասիրության շրջանակում սահմանումը բաղկացած է երկու փուլից.

1. ամրոց-բնակատեղիների պատմական վիճակին վերաբերող տեղեկությունների ընդհանրացում. - ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների քանակի և տեղաբաշխման տվյալների վերլուծություն և դրանց հիման վրա՝ ամրոց-բնակատեղիների և եկեղեցիների ճարտարապետական ոճը, դրանց ստեղծման ժամանակաշրջանը, ճարտարապետների և սեփականատերերի անունները, ամրոց-բնակատեղիների չափսերը (գրական, արխիվային և դաշտային ուսումնասիրության աղբյուրներ),
2. ամրոց-բնակատեղիների ներկայիս վիճակի վերլուծություն՝ պահպանվածության և օգտագործման աստիճանի (մեծամասամբ դաշտային ուսումնասիրության աղբյուրներ):

2.1.1. ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական և պատմամշակութային տեղեկությունների ընդհանրացում:

Ատենախոսության խնդիրների համատեքստում տարածքային սահմանների որոշման հիմնական չափանիշը կարելի է համարել տարածքի «հագեցվածությունը» ամրոց-բնակատեղիներով, սակայն հաշվի են առնվել նաև տարածքների հնագիտական, պատմամշակութային, ճարտարապետական և բնական հուշարձանների, էկոլոգիական, ինչպես նաև ռեկրեացիոն ռեսուրսների և զանազան ներդրումային ծրագրերի առկայությունը: Ենթադրվում է, որ հետազոտության

ուղղվածությունը առավել շատ «ամրոց-բնակատեղիներով հագեցած» աշխարհագրական սահմաններում կարող է ապահովել ամրոց-բնակատեղիների օգտագործման ներուժի մշակումների հեռանկարայնությունը: Ենթադրվում է, որ տարածքային սահմանների որոշման ժամանակ անհրաժեշտ է համատեղել՝ ինչպես ամրոց-բնակատեղիների պատմական տեղաբաշխման, այնպես էլ ներկայիս պահպանվածության մասին տվյալները:

Վերը նշված չափանիշներից ելնելով՝ ուսումնասիրությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի օրինակով, որն իր ռեկրեացիոն հնարավորություններով առավել հզորներից է, նաև բնութագրականն ու նպատակահարմարը, սակայն ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության իրացման առումով դրանում քիչ բան է արված [52]:

Լոռի մարզը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում, մարզկենտրոնը և ամենախոշոր քաղաքը Վանաձորն է: Լոռին Հայաստանի՝ մեծությամբ երրորդ մարզն է 3789 կմ² տարածքով (Հայաստանի տարածքի 12.7%-ը), ունի 283.9 հազար մարդ բնակչություն (ըստ 2001 թ. մարդահամարի), բնակչության թվով Լոռու մարզը զիջում է միայն Երևանին: Հյուսիսից մարզը սահմանակցում է Վրաստանի, արևմուտքից՝ Շիրակի, հարավից՝ Արագածոտնի և Կոտայքի, արևելքից՝ Տավուշի մարզերի հետ: Բազմաթիվ լեռնային առվակներից բացի Լոռու մարզով հոսում է չորս գետ՝ Դեբեդ, Ձորագետ, Տաշիր գետ, Փամբակ և Աղստև [52, 53]:

Ներկայիս Լոռու մարզի տարածքային սահմանները ընդգրկում է Մեծ Հայքի Գուգարք նահանգի հարավային և արևելյան հատվածները, Այրարատ նահանգի հյուսիսային և արևելյան հատվածները [53]:

Այստեղ առկա է զբոսաշրջության զարգացման փոխկապակցված սոցիալ-տնտեսական խնդիրների այն անհրաժեշտ բազմազանությունը, որոնք ի մի վերցրած Լոռու մարզը դարձնում են հետազոտության ձևաչափային տարածք: Այդպիսի հետազոտությունը ոչ միայն գիտամեթոդական հետաքրքրություն է ներկայացնում և օգտակար է լինելու ՀՀ այլ մարզերի ուսումնասիրության և ներդրումային կայուն զարգացման ծրագրերի մշակման համար, այլև իր գործնական ուղղվածությամբ կարող է նպաստել Լոռու մարզում առկա սոցիալտնտեսական հիմնախնդիրների

լուծմանը: Ստացված արդյունքները կարող են կիրառվել նաև ՀՀ այլ մարզերի համանման խնդիրների լուծման համար:

Հետազոտության կենտրոնացմանը Լոռու մարզի օրինակով նպաստում է նաև ՀՀ կառավարության որոշումը այն հռչակելու՝ որպես Հայաստանի Հանրապետության «Հյուսիսային Դարպաս» զբոսաշրջային կենտրոն [54]: «Հյուսիսային դարպաս» զբոսաշրջության կենտրոնը ներառում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Սանահինի, Հաղպատի վանական համալիրները, Լոռի բերդը, Հնեվանքի, Ախթալայի, Քոբայրի, Բարձրաքաշի, Դսեղի, Քառասնից մանկան, Արդվիի Սուրբ Հովհաննես վանական համալիրները, Օծունի, Բգավորի եկեղեցիները, Դսեղի Ծովեր լիճը, ինչպես նաև հարակից՝ Սանահինի, Հաղպատի, Օծունի, Դսեղի գյուղական համայնքները, Ախթալայի և Թումանյանի քաղաքային համայնքները:

Կենտրոնի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակը զբոսաշրջության տարբեր ձևերի միջոցով կենտրոնում զբոսաշրջային այցելությունների թվի դինամիկ աճին, համայնքների բնակչության և բյուջեների ավելացմանը, համայնքներում նոր, որակյալ աշխատատեղերի (այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական) ստեղծմանը, սպասարկման ենթակառուցվածքների զարգացմանը, ՀՀ Լոռու մարզում համաչափ տարածքային զարգացմանը նպաստելն է [54]:

Հարկ է նշել կենտրոնի զարգացման ծրագրի գերակա խնդիրներից մի քանիսը, որոնք օժանդակում են ատենախոսության խնդիրների լուծմանը՝

- Սանահինի, Քոբայրի, Հնեվանքի, Ախթալայի, Դսեղի, Քառասնից մանկան, Բարձրաքաշի, Արդվիի Սուրբ Հովհաննես վանական համալիրների և Օծունի, Բգավորի եկեղեցիների վերականգնումը,
- կենտրոնում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ենթակառուցվածքներ ձևավորելը և զարգացնելը՝ «ազգային նկարագրին, առանձնահատկություններին ու ավանդույթներին, պատմամշակութային ժառանգությանը հարիր, միջազգային չափանիշներին համապատասխանող, լիարժեք ավարտված, խնամված և գրավիչ ճարտարապետական միջավայր» տեսլականին համապատասխան,

- «Լոռի Բերդ» քաղաքատեղիին պատմամշակութային արգելոց-թանգարանի կարգավիճակի շնորհումը, վերականգնումը և նպատակային օգտագործումը,
- Ախթալայի վանական համալիրի տարածքում զինագործության և միջնադարյան արվեստի թանգարանի հիմնադրումը՝ համաձայնեցնելով Հայ առաքելական եկեղեցու հետ,
- համայնքների տրանսպորտային մատչելիության ապահովումը, Օձուն գյուղում ուղղաթիռային հրապարակի կառուցումը (նախկին օդանավակայանի հենքի վրա),
- տարածաշրջանում զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակի հիմնումը և համապատասխան ինտերնետային կայք էջի ստեղծումը,
- քայլարշավների և հեծանվարշավների երթուղիների ստեղծումը,
- այլընտրանքային զբոսաշրջային առաջարկների մշակումը, այդ թվում՝ Ախթալայում հանքագնացության երթուղու ստեղծումը, Դեբեդ գետի վրա ռաֆտինգ, օդագնացություն (օդապարիկներ) և այլն,
- ՀՀ Լոռու մարզում զբոսաշրջության բնագավառի մասնագետների պատրաստման ապահովումը [54]:

Առաջին գլխում կատարված եզրակացություններից՝ ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման արտասահմանյան փորձին անրադարձը ցույց է տվել մասնավոր սեփականության զարգացած համակարգ և մասնավոր ներդրողների ակտիվ մասնակցությունը ճարտարապետական ժառանգության պահպանության գործընթացում. այս առումով հատկանշական է կենտրոնի զարգացման ծրագրի գերակա խնդիրների իրականացման միջոցառումներից՝ կենտրոնի զարգացման ծրագրին, քաղաքաշինական փաստաթղթերին և սահմանված չափանիշներին ու պայմաններին համապատասխան կառուցապատումների նպատակով մասնավոր ներդրողներին հողահատկացումների իրականացումը՝ հողի նկատմամբ իրավունքների ձևակերպմամբ, «մեկ պատուհանի» սկզբունքով:

Հետազոտության նախնական տվյալներ են հանդիսացել Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի տվյալները [55]:

2018 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների՝ Լոռու մարզի պետական ցուցակը ներառում է 3045 հուշարձան՝ 1050 պահպանական միավորով, որոնցից վաթսուներկու կազմում են ամրոցները, տասն ամրացված վանական համալիրները, յոթ ամրացված քարայր-կացարանները, հինգ բերդշենները [55]:

Հաշվի առնելով պահպանվածության համեմատական (ամրոց-բնակատեղիների համեմատ) ավելի բարձր աստիճանը և պահպանված պաշտպանական կառույցները (պարիսպ, աշտարակ և այլն)՝ աշխատությունում դիտարկվել են նաև պարսպապատ վանքերի պահպանման և օգտագործման հարցերը, քանի որ դրանցից շատերը ամրացված պաշտպանական օբյեկտների դեր են կատարել: Ըստ Հ. Խալիփխյանի «վանք-բերդերը» հանդիսացել են հոգևոր ավատատիրական ամրոցներ, կառուցված մեծ մասամբ բնականորեն պաշտպանված լեռնալանջերին և բարձունքներին [56, էջ 32]: Մ.Մ. Հասրաթյանը առաջարկում է ուշ միջնադարյան պաշտպանական կառույցները բաժանել երկու խմբի՝ վանք-ամրոցներ և բերդեր [57, էջ 77]:

Անրադառնալով ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգությանը՝ նշենք, որ այս խնդրի մասին գիտելիքը առկա է ոչ բավարար քանակությամբ, և Լոռու մարզում գտնվողները բացառություն չեն: Ներկայիս դրությամբ հետևյալ թեմայով ոչ մի ընդհանրացնող հետազոտություն չկա:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում պահպանության տակ են գտնվում 140 եկեղեցի և 15 ձիթհան արտադրական կառույց [55]: Որոշ դեպքերում սա կարող է նշանակել ամրոց-բնակատեղիների առկայություն համապատասխան բնակավայրերում, սակայն հետազոտությունում նման չհստակեցված տեղեկություններ չեն ներառվել: Պահպանությունից դուրս գտնվող, մասամբ պահպանված օբյեկտների և հուշարձանների մասին ոչ լիարժեք տեղեկություններ պարունակելու փաստը ստիպեց օգտագործել պետական ցուցակը, որպես նախնական խթան հետագա հետազոտությունների համար և կատարել մի շարք աղբյուրների որոնում և վերլուծություն:

Ինչպես արդեն նշվել է ատենախոսության նախաբանում ամրոց-բնակատեղիներին վերաբերող գրականությունը հիմնականում ունի պատմահնագիտական ուղղվածություն:

Բոլոր դարաշրջանների ամրոցների մասին ընդարձակ տեղեկություններ է պարունակում Մ.Հ. Հովհաննիսյանի «Հայաստանի բերդերը» 1970 թ. Վենետիկի Ս. Ղազար կղզում հրապարակված աշխատությունը [58]: Աշխատության մեջ կցված են յուրաքանչյուր նահանգի բերդերի քարտեզը: Այստեղ նշված են միայն այն բերդերը, որոնց տեղերը քիչ թե շատ հայտնի են կամ մոտավոր հայտնի է գավառի կամ շրջանի պատկանելությունը. Դրանք քարտեզում տեղադրված են մոտավոր տեղերում: Աշխարհագրական քարտեզները կազմված են հայ պատմիչների տված տեղեկությունների հիման վրա: Շատ բերդեր դուրս են մնացել քարտեզից, քանի որ անհայտ է դրանց ոչ միայն տեղն ու դիրքը, այլև դրանց պատկանելությունը գավառին: Աշխատությունն ընդգրկում է Մեծ Հայքի 15 նահանգների տեղագրական և աշխարհագրական դիրքերը, որոնց մեջ առկա են հայկական ամրոցները: Տրված են ամրոցի տեղագրական ծանոթությունները, պատմական տեղեկություններ ամրոցի կառուցման, ժամանակաշրջանի և պատմության մասին:

ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետությանը վերաբերող ատենախոսական ուսումնասիրությունները բացակայում են, սակայն առանձին ամրոց-բնակատեղիների վերաբերող տեղեկություններ առկա են Լոռու ճարտարապետական դպրոցին նվիրված Գ. Շախկյանի (1986 թ.) «Լոռի: Պատմության քարակերտ էջերը» [59] և Ս.Գ. Բարխուդարյան, Ս.Տ. Սաղումյան «Դիվան հայ վիճագրության: Լոռու մարզ» [60] գրքերում և Կ. Կարեյանի (2006 թ.) «Լոռու ճարտարապետական դպրոցը» ատենախոսությունում [61]:

Ընդհանուր առմամբ նյութերի վերլուծությունը ցույց է տվել, որ ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների պահպանման և օգտագործման հարցերը քիչ են ուսումնասիրված:

2.1.2. ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ներկայիս վիճակի վերլուծություն

ՀՀ ամրոց-բնակատեղիների ներկայիս վիճակի մասին տեղեկությունների մի մասը համալրվել է 2015-2017 թվականների դաշտային այցելությունների ժամանակ:

Պահպանվածության աստիճանի համալրման հիմք են հանդիսացել դրանց ճարտարապետության մասին տեղեկությունները, որոնք ստացվել են զանազան պատմահնագիտական և մասնագիտական աղբյուրներից:

Դաշտային ուսումնասիրությունների վերլուծության ժամանակ կիրառվել են լուսանկարահանման, չափագրման, ճեպանկարման մեթոդները: Հաղպատ գյուղի մոտակայքում գտնվող Զարնի և Պարնի քարայր-կացարանների ներկայիս վիճակի սահմանման համար իրականացվել են հարցազրույցներ տեղի բնակչության և ներդումային ծրագիր իրականացնող անձանց հետ, ինչը թույլ տվեց ավելի ճշգրիտ պատկերացում կազմել պաշտպանական կառույցների պահպանվածության աստիճանի վերաբերյալ:

Ամրոց-բնակատեղիների ներկայիս վիճակի վերլուծությամբ բացահայտվել են հետևյալ օրինաչափությունները.

- լիարժեք (բոլոր օբյեկտները, ներառյալ՝ շինությունների ներքին հարդարանքը) չի պահպանվել ոչ մի ամրոց-բնակատեղի,
- մասնակի պահպանվել է 82 ամրոց-բնակատեղիից 23-ը (տես՝ Հավելված էջ 11, 12),
- 2ի պահպանվել 59 ամրոց-բնակատեղի (տես՝ Հավելված էջ 13):

Մասնակի պահպանված և չպահպանված որոշ ամրոց-բնակատեղիների դաշտային զննությամբ պարզ դարձան այն պայմանները, որոնցով կանխորոշվել է դրանցից յուրաքանչյուրի ներկայիս այս կամ այն վիճակը:

Հայկական լեռնաշխարհում պահպանվել են բազմաթիվ պաշտպանական կառույցներ, որոնք հիմնականում կառուցվել են ուշ միջնադարում: Թշնամու կողմից հարձակման ռազմավարությունների և զենքերի տեսակների բազմազանությանը համապատասխան մշակվել են արդյունավետ պաշտպանության նոր մեթոդներ: Հատուկ ուշադրություն է դարձվել տեղանքի բնական պաշտպանական պայմաններն առավել նպատակահարմար օգտագործելուն [62, էջ 63]:

Վերլուծելով Լոռու մարզի ամրոց-բնակատեղիները՝ կարելի է տեսնել, որ համեմատաբար ավելի բարձր պահպանվածություն ունեն ուշ միջնադարում կառուցվածները, որոնց մեծ մասը կառուցվել է 10-12-րդ դարերում, ներկայիս Լոռու մարզի տարածքը զբաղեցնող Տաշիր-Ձորագետի թագավորությունում, որի իշխողները

Կյուրիկյաններն էին [63, էջ 494]: Կյուրիկյանների թագավորության կենտրոնը սկզբում Շամշուղե բերդավանն էր, իսկ 1065 թվականից՝ Լոռե բերդը: Երկրի պաշտպանունակությունը ամրապնդելու նպատակով 10-11-րդ դարերում Կյուրիկյանների թագավորության տարածքում կառուցվել և ամրացվել էին բազմաթիվ ամրություններ՝ Կայան, Լոռե, Մահկանաբերդ, Գագ, Մաճնաբերդ և այլն, որոնք հսկում էին նաև կարևոր առևտրական ճանապարհները [63, էջ 494]:

Լոռե բերդ քաղաքատեղին գտնվում է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքից ոչ հեռու: Բերդում պահպանվել են պաշտպանական, բնակելի, հանրային և եկեղեցական շինություններ [58, էջ 565]: Հնագիտական հետազոտությունները հուշարձանի տարածքում սկսվել են 1966 թ. և շարունակվում են առ այսօր [4]:

Հաշվի առնելով հուշարձանի պատմամշակութային դերն ու նշանակությունը և նրա հետագա ուսումնասիրման ու պահպանման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը 2010թ. այս տարածքին տվել է «Լոռի բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցի կարգավիճակ [64]: Բերդի պահպանությանը նպաստում են ՀՀ կառավարության պատմամշակութային արգելոցի վերականգման աշխատանքների համար բյուջեից հատկացվող գումարները [4]:

Հաղպատ գյուղում գտնվող հուշարձաններից ամենաբարձր պահպանվածության աստիճանն ունի 10-րդ դարի 2-րդ կեսին հիմնադրված Հաղպատի վանական համալիրը, որը 10-13-րդ դարերում Հայաստանի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոններից էր: 11-13-րդ դարերում հայտնի էին Հաղպատի դպրոցը և գրադարանը: Վանքը բազմիցս ենթարկվել է ասպատակությունների, տուժել երկրաշարժերից, որոնց մասին հիշատակում են պատմիչները (Սամվել Անեցի, Մխիթար Այրիվանեցի) և վիմագրողները [59, էջ 94, 65, էջ 181]: Պահպանվածության բարձր աստիճանին նպաստել են պարբերաբար իրականացվող ամրակայման, վերականգնման և վերակառուցման աշխատանքները: 1927 թ-ից համալիրում պարբերաբար կատարվել են ամրացման, վերականգնման և բարեկարգման աշխատանքներ: 1996 թ. Հաղպատի վանական համալիրն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային «Արժեքների ցանկում» [54]:

Թշնամական հաճախակի հարձակումներից պաշտպանվելու նպատակով վանքը շրջափակվել է ամրակուռ պարսպով, մատույցներում ստեղծվեցին պաշտպանական հենակետեր (Կայան, Աթոռիկ), շրջակա տարածքը եզերող ձորերում և ժայռածերպերում հիմնվել են թաքստոցներ ու ամրացված կացարաններ (Ջրոց, Պնդոց, Լաստու, Ծակ, Ջարնի, Պարնի և այլն), որոնցից հատկապես վերջին երեքը, (գտնվում են Կայան ամրոցի դիմաց) իրենց ընդարձակությամբ, հուսալիությամբ և պաշտպանական կառույցներով ապաստան են ծառայել թշնամիների ասպատակությունների ժամանակ [8, էջ 48]:

Կայանբերդ ամրոցը կառուցվել է Հաղպատավանքի առաջնորդ Հովհաննես Եպիսկոպոսի կողմից 1233 թ.-ին: Սկզբնական շրջանում այն կոչվել է «Ամրոց Հաղպատա Սուրբ Նշանի», իսկ Կայան և Դսեվանք անվանումները ավելի ուշ շրջանի են: Բերդի մուտքը հարավից է՝ կամարակապ դարպասով: Ներսում պահպանվել են բազմաթիվ շենքերի ավերակներ, ջրավազաններ, ջրամատակարարման կավե թրծված խողովակներ: Ամրոցում կանգուն է Դսեվանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին [58, էջ 101, 59, էջ 94]:

Հաղպատ գյուղից արևմուտք՝ Կայան բերդից հյուսիս, գտնվում են Ջարնի և Պարնի քարայր-կացարանները, որոնք 10–13-րդ դարերում ծառայել են որպես պաշտպանական ամրություններ: Հուշարձանախմբի ամրակայման, բարկարգման և օգտագործման նախագծի մասին ավելի մանրամասն ներկայացված է գլուխ 1-ում: Օբյեկտների բարձր պահպանվածությանը նպաստել է դժվարամատչելի դիրքում գտնվելը և բնականորեն՝ ժայռով պաշտպանված լինելը: 2015-2018 թվականներին իրականացված վերականգնման և ամրակայման աշխատանքների շնորհիվ այն բարվոք վիճակում է [8, էջ 58]:

Ի տարբերություն վերը նշված հուշարձանախմբի, ցածր պահպանվածության աստիճան ունի նույն գյուղի մոտակայքում գտնվող Աթոռիկ ամրոցը: Հուշարձանից պահպանվել են գյուղատեղիի մնացորդներ (10-13-րդ դդ.), կիսավեր դիտակետ-աշտարակը (10-13-րդ դդ.), մատուռը «Աթոռիկ» (13 դ.) և ջրանցույցը (10-15-րդ դդ.) [55]:

Բագրատունիների Կյուրիկյան ճյուղին պատկանող քաղաք Ալավերդու մոտակայքում է գտնվում 10-13-րդ դարերի Կոշաբերդ ամրոցը: Ամրոցի տարածքում պահպանվել են «Կոշաբերդ» գյուղատեղիի (10-17-րդ դդ.), քարայր-կացարանի (13-18-րդ դդ.), գերեզմանոցի (10-13-րդ դդ.), եկեղեցու (18-րդ դ.), մատուռի (10-13-րդ դդ.) ավերակները և պարսպապատերի որոշ հատվածներ [55]:

Նույնքան պահպանվածության աստիճան ունի Վարդաբլուր գյուղի՝ Կյուրիկյաններին պատկանող 10-11-րդ դարերի ամրոցը: Կիսավեր ամրոցի տարածքում պահպանվել է Սբ Սարգիս եկեղեցին (1071 թ.) [55]:

Շնող գյուղում գտնվող քիչ ուսումնասիրված 10-րդ դարի Կայծոն ամրոցը նույնպես պատկանել է Կյուրիկյաններին: Ամրոցի տարածքում պահպանվել են եկեղեցի (10-րդ դ.), եկեղեցի Սբ Գևորգ 1893 թ., զանգակատուն (19-րդ դ.), մատուռ Սբ. Աստվածածին [58, էջ 578, 66 էջ 129]:

Ախթալայի բերդը կառուցվել է 10-րդ դարում Կյուրիկյան Բագրատունիների տիրապետության օրոք [67, 68]: Պահպանվել են ամրոցի պարսպապատերի, գլխավոր մուտքի և գլխավոր մուտքի երկու կողմից բարձրացող բրգանման եռահարկ աշտարակների հատվածներ: Բավականին բարձր պահպանվածություն ունի ամրոցի տարածքում գտնվող համանուն՝ Ախթալայի վանական համալիրը (Պղնձահանք)՝ բաղկացած երեք եկեղեցուց: Ներկայումս ՀՀ կառավարության օժանդակությամբ կատարվում են վերականգնողական աշխատանքներ [54]:

Ներկայիս մարզկենտրոն քաղաք Վանաձորի տարածքում գտնվում է վեց ամրոց-բնակատեղի, սակայն դրանցից և ոչ մեկը չի պահպանվել: Ամրոց Գանձաքարը ավերվել է քարհանքի շահագործման հետևանքով, պահպանվել է ամրոցի շրջակայքում գտնվող Թափաբաշ բլրի հարավային լանջին դամբարանադաշտը (ք. ա. 2-1 հազ.): Բերդշեն Թագավորանիստը, որի տարածքում առկա են զանազան ժամանակաշրջանների շինություններ՝ ք. ա. 4-1 հազ. հելլենիստական ժրջ., միջնադար, ներկայումս գտնվում է տնամերձի տարածքում և պահպանվել են միայն դամբարանադաշտը և վերգետնյա հատվածները, որոնք սակայն ավերված են [55]:

Հետազոտության գիտավարկածի համաձայն՝ դիտարկվել են նաև Լոռու մարզի ամրացված վանական համալիրները, որոնցից նշանավորը՝ համանուն գյուղում

գտնվող Սանահինի [69] միջնադարյան վանական համալիրն է, որը 2000 թ. ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային «Արժեքների ցանկում» [54]: Սանահինի բարձր պահպանվածությանը նպաստել են նաև իրականացվող ամրակայման և վերանորոգման աշխատանքները: Ամրակայման և նորոգման աշխատանքներ իրականացվել են 1953-1958 թթ.: Հետագա տարիներին՝ մինչև 1988թ., ամրակայվել և նորոգվել է համալիրի զանգակատունը, կառուցվել զանգակատան փայտե աստիճանավանդակը: Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում Սանահինի վանքը՝ որպես պատմամշակութային հուշարձան, եղել է պետական պահպանության ներքո, կատարվել են կառույցների ամրակայման և վերականգնման աշխատանքներ: Վերականգնողական և ամրակայման աշխատանքներ տարվել են նաև 2012 և 2017 թվականներին [55]:

Բարձր պահպանվածության աստիճան ունեն նաև Օձուն գյուղի Խաչգունդ վանքը [70, 71], և Արդվիի Սուրբ Հովհաննես վանքը (հիշատակվում է նաև Սրբանես վանք անունով): Սուրբ Հովհաննես վանքը 19-րդ դարում նորոգել է Ստեփանոս Տարինյանը, 1902 թվականին՝ Մելիքսեթ Քալանթարյանը, ինչը նպաստել է դրա բարձր պահպանվածությանը: Պահպանվել են 17-րդ դարի շրջապարիսպի հատվածներ [72, էջ 144]:

Բնակավայրերից հեռու գտնվող և դժվարամատչելի վայրերում գտնվող վանական համալիրները, որտեղ վերականգնման, ամրակայման աշխատանքներ չեն կատարվել կամ կատարվել միայն որոշ մասերում, ունեն պահպանվածության ավելի ցածր աստիճան: Նման համալիրներից են Թեղուտ գյուղում գտնվող 13-րդ դարի կիսավեր Մանսուտ վանական համալիրը [59, էջ 128], Կաճաճկուտ գյուղի 13-14-րդ դարերի վանական համալիր Սեդվու Սբ Նշանը [59, էջ 56], Կուրթան գյուղի 7-12-րդ դդ. վանական համալիր Հնեվանքը [59, էջ 14], Ճոճկան գյուղի 17-րդ դարի վանական համալիր Նահատակը [55], Պրիվոլնոյե գյուղի 12-13-րդ դդ. վանական համալիր Խուճապը [59, էջ 134], Զիլիզա գյուղի 12-13-րդ դդ. վանական համալիր Խորակերտը [59, էջ 133] և Օձուն գյուղի մոտակայքում գտնվող 10-13-րդ դդ. վանական համալիր Հոռոմայրի Սբ Նշան Ստորին հուշարձանախումբը [59, էջ 53]:

2.2. Ամփոփ Մատյանը որպես ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի գնահատման գործիքակազմ

2.2.1. Ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի գնահատման սկզբունքները

Ճարտարապետական ժառանգության օբյեկտի պահպանման ներուժը սահմանվում է որպես դրա պատմական կերպարի և ժամանակակից պահպանվածության վերաբերյալ գիտելիքների ամբողջություն, որը դրա ստույգ պահպանման (վերաստեղծման) հնարավորություն է ընձեռում: Պահպանման ներուժը կարող է արտահայտվել այդ գիտելիքի, նկարագրությունների, գիտական հետազոտությունների և գրաֆիկական վերակառուցումների հասանելիության աստիճանով: Այլ կերպ ասած, օբյեկտի ներուժի պահպանման մասին գիտելիքը, թե ինչպիսին է այն եղել իր ձևավորման ժամանակաշրջանում: Այսպիսով պահպանման ներուժի մեծությունը համապատասխանում է ամրոց-բնակատեղիի պատմական կերպարի այս կամ այն աստիճանի վերականգման պոտենցիալ հնարավորությանը [73, էջ 96]:

Այս պատճառներով գննումից դուրս մնացին, օրինակ, այս կամ այն ձևով ամրոց-բնակատեղիների պատմաճարտարապետական հետազոտությունների կազմի մեջ մտնող հետևյալ խնդիրները.

- զարգացման փուլերի վերլուծություն [56],
- ամրոց-բնակատեղիների գործառնական-տարածական և ճարտարապետանախագծային տիպերի բացահայտում և համեմատություն [56],
- ամրոց-բնակատեղիների տարաբնակեցման առանձնահատկությունների բացահայտում [56],
- ամրոց-բնակատեղիների ոճային դասակարգում [56, 74],
- ամրոց-բնակատեղիների հորինվածքային դասակարգում [56, 74],
- ամրոց-բնակատեղիների և քաղաքային ճարտարապետության ընդհանրությունները և տարբերությունները [75],
- շինարարության տեսության և գործնականի համեմատություն [76],
- պատվիրատուի դերի բացահայտում և այլն:

Ամրոց-բնակատեղիների պահպանման ներուժի բացահայտման սահմաններից դուրս են նաև պատմական և ճարտարապետական ժառանգության արժեքների մասին գիտելիքների ներդրման ուղիները, դրա պահպանության գործառույթները, գործնական փոխզիջման որոնումը ժառանգության առավելագույն պահպանման և առավելագույն զարգացման հայեցակարգերի միջև: Սա մեծ քաղաքի պայմաններում ժառանգության պահպանության գիտական խնդրի հիմնական ջիղը [40, էջ 11]: Քաղաքների պատմական կերպարի մասին գիտելիքները, որպես կանոն, ծավալուն են և հանրամատչելի, ինչը հետազոտողներին հնարավորություն է տալիս ժառանգության բացահայտումից անցնել դրա պահպանության մյուս փուլերին՝ գիտության և գործնականի նպատակների ներդաշնակեցմանը:

Ամրոց-բնակատեղիների պայմաններում, ինչպես տեսանք ՀՀ Լոռու մարզի օրինակով, այսպիսի գիտելիքը բազմաթիվ պատճառներով չափազանց պառակտված է, ինչն առաջնային է դարձնում դրա ընդհանրացման խնդիրը:

Նման գիտելիքների և պահպանության ներուժի գնահատման օպտիմալ ձևը կարելի է համարել ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության տվյալների ամփոփ Մատյանը: Մատյանի կառուցման հիմնական սկզբունքներ կարելի է համարել հետևյալը:

1. Տիպաբանական դասակարգումից դուրս լինելը

Նկատի ունենք յուրաքանչյուր ամրոց-բնակատեղիի յուրօրինակության բացահայտմանն ուղղված տեղակայումը: Բացի այդ, ամրոց-բնակատեղիի ճարտարապետական ժառանգության պահպանվածության նկարագրության համար այս կամ այն դասակարգերի ընդունումը չի հանդիսանում արմատապես կարևոր խնդիր դիտարկվող տարածաշրջանի ամրոց-բնակատեղիների օգտագործման ներուժի հետագա բացահայտման համար:

Դասակարգումից դուրս լինելու սկզբունքը նմանապես իրեն դրսևորում է նաև ճարտարապետական ժառանգության ժամանակակից բաղադրիչի բացահայտման, այսինքն՝ պահպանվածության աստիճանի և ժամանակակից օգտագործման ժամանակ: Մասնավորապես, տեղին չէ պահպանվածության աստիճանի

գնահատումն ամրոց-բնակատեղիների որևիցե պահպանվածության դասակարգումներով:

2. Ժամանակագրական ընդհանրականություն

Ճարտարապետական ժառանգության մասին սակավ տեղեկությունների պարագայում, ինչն առկա է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների դեպքում առաջանում է ամրոց-բնակատեղիների պահպանման կամ վերաստեղծման համար որևէ պատմական հիմքի որոնման խնդիր: Սրա հետ կապված՝ պահպանման ներուժի որոշման ժամանակագրական շրջանակները կարող են սահմանվել ամրոց-բնակատեղիների գոյության վաղնջական ժամանակներից մինչև 20-րդ դարը ներառյալ:

3. Պահպանության ներուժի և պահպանության ռեժիմների կապը

Ակնհայտ է, որ ամրոց-բնակատեղիների պատմական կերպարի մասին գիտելիքների առկայության պարագայում կարող է դրան համապատասխան ռեժիմ սահմանվել: Հետազոտության սահմաններում ընդունվում է, որ որպես հիմնական ռեժիմներ կարող են հանդես գալ՝ ամբողջական կամ մասնակի վերականգնումը և վերակառուցումն ըստ նմանակների [77, էջ 60], որը համապատասխանում է բարձր, միջին և ցածր պահպանության ներուժի արժեքներին:

4. Բացակայող տվյալների պոտենցիալ առկայության հաշվառումը

Այս սկզբունքով սահմանվում է Մատյանի բաց լինելը նոր տվյալների հնարավոր ի հայտ գալու դեպքում: Ցածր պահպանվածության աստիճան ունեցող ամրոց-բնակատեղիները, որոնց մասին ներկայումս քիչ է հայտնի, բայց պատմական սեփականատերերը հեղինակավոր ընտանիքների տերեր են, կարող են դիտվել որպես միջին պահպանման ներուժ ունեցողներ:

2.2.2. ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության տվյալների ամփոփ Մատյանը

Վերը շարադրված սկզբունքներին համապատասխան կազմվել է ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության մասին տվյալների ամփոփ Մատյան: Մատյանը իր մեջ միավորում է տարածաշրջանի 82 ամրոց-

բնակատեղիի տվյալներ, որոնք բացահայտվել են գրական աղբյուրների վերլուծության և 4 սեփական արշավի ժամանակ:

Ըստ հերթական համարի, կարելի է որոշել ամրոց-բնակատեղիի գտնվելու վայրը, օգտագործելով Հավելվածի 14-րդ էջում ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի քարտեզը:

Բնակավայրերը դասակարգվել են ըստ Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Լոռու մարզի պետական ցուցակում ներկայացված հերթականության [55]:

Աղյուսակ 2.1

«Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության տվյալների ամփոփ Մատյան»

N	Բնակավայրի ներկայիս անվանումը	Թվագրությունը	Հուշարձանի ներկայիս կազմը	Աղբյուրներ	Պահպանման ներուժ
1	Ամրոց ք.Վանաձոր	Ք. ա. 2 հազ. 2 կես	դամբարանադաշտ	[55]	ցածր
2	Ամրոց Ալեհերի ք.Վանաձոր	Ք. ա. 2 հազ. 2 կես	կիսավեր, դամբարանադաշտ ք. ա. 2-1 հազ. ամրոցի շրջակայքում	[55]	ցածր
3	Ամրոց Գանձաքար ք.Վանաձոր	Ք. ա. 2 հազ. 2 կես	ավերվել է քարհանքի շահագործման հետևանքով, դամբարանադաշտ ք. ա. 2-1 հազ. ամրոցի շրջակայքում «Թափաբաշ» բլրի հվ լանջին	[55]	ցածր
4	Ամրոց-դիտակետ ք.Վանաձոր	Ք. ա. 2-1 հազ.	-	[55]	ցածր
5	Ամրոց-դիտակետ ք.Վանաձոր	միջնադար	-	[55]	ցածր
6	Բերդշեն Թագավորանիստ ք.Վանաձոր	Ք. ա. 4-1 հազ. հելեն. ժրջ., միջնադար	դամբարանադաշտ Ք. ա. 2-1 հազ., վերգետնյա հատվածներն ավերված, տնամերձերի տարածքում	[55]	ցածր
7	Ամրոց «Կոշաբերդ»	10-13-րդ դդ.	գյուղատեղի «Կոշաբերդ» 10-17-րդ դդ., քարայր-կացարան 13-18-րդ դդ.,	[55]	ցածր

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

	ք.Ալավերդի		գերեզմանոց 10-13-րդ դդ., եկեղեցի 18-րդ դ., խաչքար 12-13-րդ դդ., մատուռ 10-13-րդ դդ., պատկանել է Կյուրկյաններին		
8	Վանական համալիր Սանահին ք.Ալավերդի	10-13-րդ դդ.	աղբյուր 1831 թ., առաջնորդի տուն 19-րդ դ. սկիզբ, գավիթ 1181 թ, խաչքար 10 հատ 12-13դդ., գերեզմանոց 10-19-րդ դդ., դամբարան-մատուռ-տապանատուն Ջաքարյան իշխանների 12-13-րդ դդ., եկեղեցի սբ. Հակոբ (Սիոն) 10-րդ դ., եկեղեցի սբ. Հարություն 13-րդ դ.,	[55], [69]	բարձր
9	Ամրոց ք.Ախթալա	13-րդ դ.	-	[55]	ցածր
10	Ամրոց «Ավանաքար» գ.Քոբեր կայարան	14-15-րդ դդ.	-	[55]	ցածր
11	Ամրոց «Կուլեթ» գ.Քոբեր կայարան	-	-	[55]	ցածր
12	Ամրոց Ախթալա (Պղնձահանք, Միսխանա) գ.Ախթալա	10-13-րդ դդ.	վանական համալիր Ախթալա 13-րդ դ., գերեզմանոց 13-14-րդ դդ. եկեղեցի 13-րդ դ., 3 հատ տապանաքար 10-րդ դ., մատուռ 13-րդ դ. միաբանության շենք, նախագավիթ-սրահ 13-14-րդ դդ	[55], [58, էջ 599] [59, էջ 129], [67], [68], [83]	բարձր
13	Ամրոց Դիտակետ գ.Ախթալա	10-13-րդ դդ.	-	[55]	ցածր
14	Ամրոց Թոխմախ Կալա գ.Ախթալա	Ք. ա. 2-1 հազ, 10-13-րդ դդ.	-	[55]	ցածր
15	Ամրոց ք.Ստեփանավան	Ք. ա. 4-3 հազ.	-	[55]	ցածր
16	Ամրոց	Ք.ա. 2-1 հազ.	բնակատեղի «Օրան-Լոռի» ք. ա. 2-1	[55]	ցածր

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

	ք.Ստեփանավան		հազ., ավերված		
17	Ամրոց ք.Տաշիր	Ք. ա. 3-2 հազ.	-	[55]	ցածր
18	Բերդաքաղաք ք.Տաշիր	-	-	[55]	ցածր
19	Բերդշեն գ.Այգեհատ	Ք. ա. 4-3 հազ.	-	[55]	ցածր
20	Վանական համալիր Սբ. Հովհաննես (Սրբանես, Հովհան Օծնեցու Վանք) գ.Արդվի	8-19-րդ դդ., վերակառ. 17 դ., 1902 թ.	աղբյուր «Օծի պորտ», գերեզմանոց 7- 19-րդ դդ., խաչքար 12-17-րդ դդ.- 69 հատ, կոթող 17 դ., գերեզմանոց 12-17 դ., եկեղեցի 718-729 թթ., վերակառ. 17 դ., դամբարան 8 դ., զանգակատուն 17 դ., կոթող 5-7-րդ դդ., տապանաքար 15-16-րդ դդ., միաբանության շենք 17 դ., շրջապարիսպ 17 դ., պորտաքար, սրահ 17 դ., սրբատեղի «Օխտը մոնթի»	[55], [72, էջ 144]	միջին
21	Ամրոց գ.Արևաշող	Ք.ա. 2-1 հազ.	բնակատեղի ք.ա. 1 հազ., դամբարանադաշտ ք.ա. 1 հազ. սկիզբ	[55]	ցածր
22	Ամրոց «Բերդատեղ» գ.Բագում	Ք. ա. 2 հազ.	-	[55]	ցածր
23	Ամրոց գ.Բլազդոդարնոյե	Ք. ա. 3-2 հազ.	բնակատեղի ք. ա. 3-2 հազ., դամբարանադաշտ ք. ա. 2-1 հազ.	[55]	ցածր
24	Ամրոց գ.Գարգառ	Ք. ա. 3-2 հազ.	-	[55]	ցածր
25	Ամրոց «Սանգյառ» գ.Գոգարան	Ք.ա. 2 -1 հազ. սահմ., միջնադար	-	[55]	ցածր
26	Բերդշեն «Բաղալի Բագեր» գ.Գուգարք	Ք. ա. 2-1 հազ.	երևում են պարսպապատերի հետքերը	[55]	ցածր

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

27	Ամրոց գ.Դսեղ	Ք. ա. 2-1 հազ.,	գաղտնուղի ք. ա. 2-1 հազ., ձիթահան ուշ միջնադար 2 հատ, պալատ՝ «Թագավորի աղջկա բաղնիս» միջնադար	[55]	ցածր
28	Ամրոց գ.Եղեգնուտ	Ք. ա. 2-1 հազ.	բլրի վրա, պահպանվել են պատերի մնացորդներ, բնակատեղի Ք. ա. 4-3 հազ., դամբարանադաշտ Ք. ա. 2-1 հազ., խաչքար 14-15-րդ դդ.	[55]	ցածր
29	Ամրոց «Բերդաղ» գ.Եղեգնուտ	Ք. ա. 4-3 հազ.	պահպանվել են պատերի մնացորդներ, բնակատեղի ք. ա. 4-3 հազ. գերեզմանոց միջնադար	[55]	ցածր
30	Ամրոց գ.Թեղուտ	13 դ.	խաչքար «Կարմիր Վարդան», «Վարդան Զորավար» 13-14-րդ դդ.	[55]	ցածր
31	Ամրոց «Բերդշեն» գ.Թեղուտ	Ք. ա. 4-3 հազ.	մատուռ 4-5-րդ դդ.	[55]	ցածր
32	Վանական համալիր Մանստև գ.Թեղուտ	13 դ.	եկեղեցի 13 դ., թևավոր խաչ 13 դ., միաբանության շենք 13 դ., շրջապարիսպ 13 դ., պահպանվել են հետքեր	[55], [59, էջ 128]	միջին
33	Ամրոց գ.Լեռնապատ	Ք. ա. 4-3 հազ.	-	[55]	ցածր
34	Ամրոց գ.Լեռնապատ	Ք. ա. 3 հազ.	մատուռ Սբ. Գաբրիել, «Գաբրիել-Մուքել» վաղ միջնադար	[55]	ցածր
35	Ամրոց «Բերդաղ» գ.Լեռնապատ	Ք. ա. 2-1 հազ.	դամբարանադաշտ Ք. ա. 2-1 հազ	[55]	ցածր
36	Քաղաքատեղի Լոռի Բերդ գ.Լոռի Բերդ	11-18-րդ դդ.	միջնաբերդ 11-18-րդ դդ., պարիսպ 11-14-րդ դդ., մուտք 11-16-րդ դդ., խանդակ 11-16-րդ դդ., պալատ 11 դ., եկեղեցի 11 դ., խաչքար 12-14-րդ դդ. 7-հատ, եկեղեցի 12-13-րդ դդ., մատուռ-դամբարան 1251թ., բաղնիք 11-13-րդ դդ.- 2հատ, ջրավազան 12-13-րդ դդ. - 2 հատ, բնակելի տուն 12-13-րդ դդ., քարայր-	[55], [58, էջ 564], [59, էջ 19], [78, էջ 192], [79]	միջին

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

			մթերանոց միջնադար, ջրամբար 11-12-րդ դդ., ձիթհան 11-12-րդ դդ., գաղտնուղի 11 դ., խաչքար 9-13-րդ.դդ., թաղամաս շահաստան 12-13-րդ դդ., պարիսպ 12-13-րդ դդ., եկեղեցի 13 դ. խաչքար 12-13-րդ դդ., գերեզմանոց 11-14-րդ դդ., 20 դ., խաչքար միջնադար-5 հատ, ջրատար 11 դ., ճանապարհ 11 դ., կամուրջ 11-12-րդ դդ.- 2 հատ, աշտարակ 11-13-րդ դդ., քարայր-կացարանների համալիր 12-13-րդ դդ., արվարձան «Կենտագեղ» 10-15-րդ դդ., եկեղեցի «Կենտագեղցու ժամ» 12-13-րդ դդ., արվարձան «Ամրակից» 12-13-րդ դդ.		
37	Ամրոց Սեդվի («Սեդվա Ղալա») գ. Կաճաճկուտ	13-14-րդ դդ.	աշտարակ 13 դ.	[55], [59, էջ 57]	ցածր
38	Վանական համալիր Սեդվու Սբ. Նշան գ. Կաճաճկուտ	13-14-րդ դդ.	գերեզմանոց 12-14-րդ դդ., խաչքար 13 դ., տապանաքար 13-14-րդ դդ. - 2 հատ, եկեղեցի 12-13-րդ դդ. - 2 հատ, զանգակատուն 13 դ., միաբանության շենք 13-14-րդ դդ., շրջապարիսպ 13 դ.	[55], [59, էջ 56]	միջին
39	Ամրոց «Ծտաբերդ» գ. Կուրթան	Ք. ա. 3-1 հազ.	բնակատեղի ք. ա. 3-1 հազ.	[55]	ցածր
40	Վանական համալիր Հնեվանք գ. Կուրթան	7-12-րդ դդ.	գավիթ 12 դ., գերեզմանոց 9-14-րդ դդ., խաչքար 15 դ., եկեղեցի 7 դ, խաչքար 13-14-րդ դդ.-2 հատ, եկեղեցի 12-13 դ., զանգակատուն 13 դ., մատուռ 12-13-րդ դդ., միաբանության շենք 9-14-րդ դդ., շրջապարիսպ միջնադար, տապանատուն 12-13-րդ դդ.,	[55], [59, էջ 14], [84, էջ 29]	միջին

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

			պահպանվել են հիմնապատերը, օժանդակ շինություն 12-13-րդ դդ.		
41	Ամրոց գ.Հայդարլի	-	-	[55]	ցածր
42	Ամրոց «Աթոռիկ» գ.Հաղպատ	Ք. ա. 2-1 հազ.	բնակատեղի Ք. ա. 2-1 հազ., գյուղատեղի 10-13-րդ դդ., խաչքար 13 դ. - 3 հատ, դիտակետ-աշտարակ 10-13-րդ դդ., մատուռ «Աթոռիկ» 13 դ., ջրանցույց 10-15-րդ դդ.	[55]	ցածր
43	Ամրոց, «Կայանքերդ», գ.Հաղպատ	1233 թ.	Դսեվանք (Սբ. Աստվածածին) 1233 թ., խաչքար 13 դ., տապանաքար 1835 թ., օժանդակ շինություններ 13 դ	[55], [58, էջ 533], [59, էջ 101], [80]	միջին
44	Վանական համալիր Հաղպատ, գ.Հաղպատ	10-20-րդ դդ.	աղբյուր 1258 թ., խաչքար 10-15-րդ դ. - 53 հատ, բնակարան 13 դ., գավիթ Սբ. Նշան եկեղեցու 1210 թ., տապանաքար 11-17-րդ դդ.- 53 հատ, գրատուն 11 դ. վերակառ. 1258-1262 թթ., սրահ- միջանցք 13 դ., եկեղեցի Խաթունաշեն 13 դ., եկեղեցի Ջգրաշեն 1195 թ., եկեղեցի Սբ. Գրիգոր 1025 թ., եկեղեցի Սբ. Նշան 976-991 թթ., զանգակատուն 1245 թ., դամբարաններ-12-15 դդ.- 4 հատ, ժամատուն Համազասպի 1257 թ., մատուռ 11 - 13 դդ. - 7 հատ, շրջապարիսպ 13 դ., թևավոր խաչ 12-13- րդ դդ., սեղանատուն 13 դ.	[55], [59, էջ 94], [65, էջ 181],	բարձր
45	Քարայր- կացարան «Լաստի Այր» գ.Հաղպատ	10-15-րդ դդ.	-	[55]	ցածր
46	Քարայր- կացարան գ.Հաղպատ	10-17-րդ դդ.	-	[55]	ցածր

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

47	Քարայր-կացարան գ.Հաղպատ	10-17-րդ դդ.	-	[55]	ցածր
48	Քարայր-կացարան գ.Հաղպատ	15 դ.	-	[55]	ցածր
49	Քարայր-կացարան «Գրոց Այր» գ.Հաղպատ	15-17-րդ դդ.	-	[55]	ցածր
50	Քարայր-կացարան «Ջարնի Այր» գ.Հաղպատ	15-17-րդ դդ.	վերականգնվել է 2015-2018 թ.	[55], [8, էջ 58]	բարձր
51	Քարայր-կացարան «Պարնի Այր» գ.Հաղպատ	10-13-րդ դդ.	վերականգնվել է 2015-2018 թ.	[55], [8, էջ 58]	բարձր
52	Ամրոց գ.Ձորագետ	Ք. ա. 2-1 հազ.	-	[55]	ցածր
53	Ամրոց «Քիր Ու Ախպեր» գ.Ձորագյուղ	10-13-րդ դդ.	-	[55]	ցածր
54	Բերդշեն գ.Ձորագյուղ	Ք. ա. 4-3 հազ.	-	[55]	ցածր
55	Ամրոց գ.Գոգավան	Ք. ա. 2-1 հազ., 12-17-րդ դդ.	դամբարանադաշտ Ք. ա. 2-1 հազ.	[55]	ցածր
56	Վանական համալիր Նահատակ գ.Ճոճկան	1621 թ.	գերեզմանոց 11-18-րդ դդ., խաչքար 12-13-րդ դդ.- 3 հատ, եկեղեցի 17 դ. 2 հատ, խաչքար Ուրեչափի 18դ., թևավոր խաչ 13 դ., տապանաքար 17 դ. - 2 հատ, մատուռ 17 դ., շրջապարիսպ 17 դ., օժանդակ շինություններ 17 դ.	[55]	միջին
57	Ամրոց	Ք. ա. 2-1 հազ.	-	[55]	ցածր

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

	գ. Կրուզլայա Շիշկա				
58	Ամրոց գ. Մեծավան	Ք. ա. 2-1 հազ.	-	[55]	ցածր
59	Բերդշեն գ. Մեծ Պառնի	Ք. ա. 4-3 հազ.	դամբարանադաշտ Ք. ա. 4-3 հազ.	[55]	ցածր
60	Ամրոց գ. Նովոսելցովո	միջնադար	բնակատեղի միջնադար	[55]	ցածր
61	Ամրոց գ. Նորաշեն	Ք. ա. 4-3 հազ.	-	[55]	ցածր
62	Ամրոց «Քյոր Օղլի» Նորաշեն	-	-	[55]	ցածր
63	Ամրոց գ. Շամուտ	Ք. ա. 4-3 հազ.	բնակատեղի ք. ա. 4-3 հազ., գերեզմանոց 12-20-րդ դդ., մատուռ Սբ. Սարգիս 12-13-րդ դդ., խաչքար 13-14-րդ դդ.	[55]	ցածր
64	Ամրոց գ. Շնող	Ք. ա. 2-1 հազ.		[55]	ցածր
65	Ամրոց Կայծոն գ. Շնող	10 դ.	գաղտնուղի 10 դ., գերեզմանոց 2 հատ 12-19րդ դդ., տապանաքար 15-18րդ դդ. 6 հատ, խաչքար 12-13-րդ դդ. 8 հատ, եկեղեցի 10 դ., եկեղեցի Սբ. Գևորգ 1893 թ., զանգակատուն 19 դ., մատուռ Սբ. Աստվածածին, («Տերունական խաչարձան») 1222 թ.	[55], [58, էջ 578], [66 էջ 129]	ցածր
66	Ամրոց Վահանաբերդ գ. Շնող	Ք. ա. 4-3 հազ.	դամբարանադաշտ ք. ա. 4-3 հազ. ամրոցից 400 մ ամ	[55]	ցածր
67	Ամրոց գ. Պրիվոլնոյե	Ք. ա. 1 հազ.	դամբարանադաշտ ք. ա. 1 հազ.	[55]	ցածր
68	Վանական համալիր Խուճապ գ. Պրիվոլնոյե	12-13-րդ դդ.	աշտարակ 13 դ., գավիթ 13 դ., եկեղեցի 13 դ., սրահ 13 դ., տապանաքար 1727 թ., եկեղեցի 12-13-րդ դդ. - 2 հատ, կացարան 13 դ.	[55], [59, էջ 134]	միջին

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

69	Ամրոց Բազմաբերդ (Բազկերտ, Չախկա-Լաբերդ, Չոխլաբերդ, Ղալա-Ղալա) գ.Ջիլիզա	10-12-րդ դդ.	-	[55], [58, էջ 583], [81, էջ 90] [82, էջ 87]	ցածր
70	Վանական համալիր Խորակերտ գ.Ջիլիզա	12-13-րդ դդ.	գավիթ 1260-ական թթ., գերեզմանոց միջնադար, խաչքար 12-13-րդ դդ- 2 հատ, տապանաքար 15-16-րդ դդ- 2 հատ, եկեղեցի 13-րդ դ. -2 հատ, մատուռ 13 դ.- 2 հատ ավերված, շրջապարիսպ, պահպանվել են հետքեր, սեղանատուն 13դ. ավերված	[55], [59, էջ 133], [88, էջ 246], [85]	միջին
71	Ամրոց գ.Սարչապետ	17 դ.	եկեղեցի 1913 թ., գերեզմանոց 13-20-րդ դդ., խաչքար 13 դ.	[55]	ցածր
72	Ամրոց «Բերդի Դոշ» գ.Սվերդլով	Ք. ա. 2-1 հազ.	ավերված	[55]	ցածր
73	Ամրոց «Սիսի Բերդ» գ.Վահագնաձոր	ուշ միջնադար	խաչքար ուշ միջնադար	[55]	ցածր
74	Ամրոց Գ.Վահագնի	Ք.ա. 2-1 հազ.	-	[55]	ցածր
75	Ամրոց գ.Վարդաբլուր	10-11- րդ դդ.	եկեղեցի Սբ. Սարգիս 1071 թ., խաչքար12-13-րդ դդ., շինություն 1050 թ., ամրոցը կիսավեր, պատկանել է Կյուրիկյաններին	[55]	ցածր
76	Ամրոց- բնակատեղի գ.Ուրասար	Ք. ա. 2-1 հազ.	դամբարանադաշտ Ք. ա. 2-1 հազ	[55]	ցածր
77	Ամրոց «Ղայլուս» գ.Փամբակ	-	-	[55]	ցածր
78	Ամրոց գ.Քարինջ	Ք. ա. 2 հազ.	-	[55]	ցածր

Աղյուսակ 2.1-ի շարունակությունը

79	Խաչգունդ Վանք գ.Օծուն	6 դ.	գերեզմանոց 5-19-րդ դդ., կոթող- մահարձան 5-6-րդ դդ., խաչքար 10-16- րդ. դդ.- 19 հատ, տապանաքար 1897 թ., պարիսպ միջնադար, սրահ	[55], [70], [71], [86, էջ 82], [87, էջ 40]	բարձր
80	Վանական համալիր Հոռոմայրի Սբ Նշան Ստորին հուշարձանա- խումբ գ.Օծուն	10-13-րդ դդ.	գերեզմանոց 9-17-րդ դդ., խաչքար 12-15- րդ դդ.- 8 հատ, եկեղեցի 12 դ.կեսեր- 3 հատ, ժամատուն 1321 թ., կացարաններ, մատուռ 7-10-րդ դդ., մատուռ 13-14 դդ, քարայր	[55], [59, էջ 53], [88]	միջին
81	Ամրոց- բնակատեղի գ.Ֆիոլետովո	Ք. ա. 4-3 հազ.	շինություն ք. ա. 4-3 հազ., պահպանվել են պատերի հիմքերը	[55]	ցածր
82	Ամրոց «Աղնախի Ջառ» գ.Կարմիր Աղեկ	10-16-րդ դդ.	գերեզմանոց 10-13-րդ դ., խաչքար 11-15 դ.- 5 հատ	[55]	ցածր

Եզրակացություններ ըստ գլուխ 2-ի

1. Սահմանվել է «ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժ» եզրույթը, որը մեկնաբանվում է որպես դրա պատմական կերպարի և ժամանակակից պահպանվածության վերաբերյալ գիտելիքների ամբողջություն: Այսպիսով, կոնկրետ ամրոց-բնակատեղիի պահպանման ներուժի մեծությունը կապվում է իր պատմական կերպարի հնարավոր վերականգնման կամ վերաստեղծման աստիճանի հետ:

2. Ցույց է տրվել ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետությանը վերաբերող պատմական տեղեկությունների միասնականության բացակայությունը և անհամասեռությունը:

3. Կազմվել է ՀՀ Լոռու մարզի ութսուներկու ամրոց-բնակատեղիի ճարտարապետական ժառանգության տեղեկությունների ամփոփ Մատյան: Մատյանն ունի բաց կառուցվածք և կարող է լրացվել:

4. Մշակվել են ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի գնահատման սկզբունքներ: Գնահատման հիման վրա առաջարկվել է ՀՀ Լոռու մարզի ութսուներկու ամրոց-բնակատեղիի վերականգնման աստիճանը:

5. Առաջարկվել է լիովին վերականգնել վեց օբյեկտ, մասնակի վերականգնել տասը:

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ**

**3.1. Ամրոց-բնակատեղիների ներդրումային կադաստրը որպես դրանց
օգտագործման ներուժի գնահատման գործիքակազմ**

3.1.1. Ներդրումային կադաստրի հասկացությունն ու բովանդակությունը

Ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժը սահմանվում է որպես ամրոց-բնակատեղիի տարածքում գտնվող և դրա հետ պատմականորեն կապված ճարտարապետական և քաղաքաշինական օբյեկտների օգտագործման հնարավորությունների մասին գիտելիքների ամբողջություն [89, էջ 100]:

Առաջարկվող ամրոց-բնակատեղիների ներդրումային կադաստր եզրույթը ձևավորվել է «պատմամշակութային ժառանգության կադաստր» և «տարածքի ներդրումային տեղեկաթերթիկ» գոյություն ունեցող հասկացությունների հիման վրա, որոնք ուսումնասիրվել են գլուխ 2-ում սակայն եզրույթի բովանդակությունը, այսինքն՝ կադաստրի նշանակությունը՝ ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի գնահատումը դրանց բովանդակությունների գնահատման պարզ գումարը չէ:

«Նովգորոդի պատմամշակութային ժառանգության կադաստրի» բովանդակությունը բաղկացած է տեղեկությունների ընդհանրացումից, որոնք անմիջական կապ ունեն պատմամշակութային ժառանգության հետ: Բացառություն է կազմում տուրիստական ուղիների հաշվառումը: Բացի այդ, առանձին հուշարձանների հաշվառումը հանդես է գալիս ոչ բավարար խորությամբ՝ չեն բացահայտվում դրանց պահպանվածության և օգտագործման աստիճանները: Այս ամենը հանգեցնում է ներդրողների գործողությունների առավելագույն սահմանափակման [90]:

«Տարածքի ներդրումային տեղեկաթերթիկի» բովանդակությունը ընդհակառակը՝ գրեթե անտեսում է ժառանգության հաշվառման գործոնը, ինչպես նաև հաճախ խոչընդոտում է տարածքի զարգացմանը, իսկ տարածքի ներդրումային ռեսուրսները երևան են բերվում շատ սահմանափակ՝ առանց հնարավոր գործառույթների հետ կապի: Ուսումնասիրության մասշտաբը սահմանափակվում է հենց տարածքով, ընդ

որում, «անձնագիրը» մշակվում է որևէ կոնկրետ ծրագրի նպատակին ծառայելու համար:

Վերոնշյալ մոտեցումների ոչ լիարժեքությունը մեր խնդիրների համատեքստում թույլ չի տալիս դիտարկել դրանց գումարը բավարար ներդրումային կադաստրի հասկացության բովանդակության հիմնավորման համար:

Այս երկու մոտեցման գումարի անհրաժեշտ համալրմանը կարելի է հասնել՝ հաշվի առնելով հետևյալ փորձը.

- հաղորդակցության և տարածքի արժեքային բնութագրերի ազդեցությունները ներդրումային գրավչության օբյեկտի և դրա վերջնական գնահատականը վարկանիշի տեսքով [91],
- «Ճարտարապետանախագծային զարգացման հայեցակարգը» [49], որում միջավայրի զարգացման նպատակով, ժառանգության օբյեկտ չհանդիսացող վերլուծության կառուցվածքում առկա է գործառական համատեքստի գնահատական և իրավիճակ ընդհուպ մինչև միջազգային մասշտաբներ, ինչը հանգեցնում է օբյեկտի զարգացման հնարավորությունների վերաբերյալ գաղափարային ոլորտի ընդլայնման,
- որոնողական մոդելավորումը՝ որպես օգտագործման ներուժի կարողությունների որոշման գործիքակազմ: Մոսկովյան տարածքի քաղաքաշինական ներուժի ուսումնասիրությունում իրականացվում է որոշակի տարածքի օգտագործման համար տարբեր օպտիմալ տարբերակների մոդելավորում,
- տարածքի ներուժի գնահատման քանակական մեթոդները. «խորհրդային» մեթոդական փորձում միավորների հիման վրա և «տարածքի պատմամշակութային ժառանգության խտություն» (ըստ Եմելյանովի) [43] հասկացությունը,
- ամրոց-բնակատեղիների գործնական օգտագործման բացահայտված հայրենական և արտասահմանյան փորձը, որից կարելի է առանձնացնել որպես սկզբունքային պայմաններ դիտարկվող օբյեկտների օգտագործվող կայունության, մասնավորապես՝ հեղինակության գործոնները, եկեղեցական գործառույթի կամ թանգարանային օգտագործման, ամրոց-բնակատեղիների

մասնավոր սեփականատերերի գործունեության խրախուսման, գործընկերությունների և ոչ առևտրային ծրագրերի կազմակերպման պայմանները:

Այս մոտեցումների ընդհանրացումը հնարավորություն տվեց մոտենալ ամրոց-բնակատեղիների ներդրումային կադաստրի (այսուհետ՝ Կադաստր) հասկացության և բովանդակության սահմանմանը: Այդ հասկացությունը կարող է սահմանվել ըստ բովանդակության, որպես ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության ֆունկցիոնալ օգտագործման ներուժի գնահատման գործիքակազմ՝ հիմնված ներդրումային գրավչության գործոնների միավորային գնահատականի վրա: Համապատասխանաբար, Կադաստրի բովանդակությունը կազմվում է որպես ամրոց-բնակատեղիների միավորային գնահատական՝ ներդրումային գրավչության գործոնների հիման վրա:

Ներդրումային գրավչության գործոնները ամրոց-բնակատեղիի և հարակից բնակավայրի բնութագրիչներն են, որոնք նկարագրում են ամրոց-բնակատեղիի օգտագործման հնարավորությունները: Այս սահմանման հիմքում այն եզրակացությունն է, ըստ որի ամրոց-բնակատեղի ներդրումների շահութաբերությունը կախված է դրա օգտագործման հնարավորությունների հնարավոր բազմազանությունից:

Կադաստրը մշակվում է տարածաշրջանի մասշտաբով և առանց վարչական սահմաններին պարտադիր կապման: Կադաստրին վերաբերող խնդիրների լուծման սահմանները կարող են նկարագրվել դրա կառուցման սկզբունքներով:

- 1. Բազմագործոնություն:** Այս սկզբունքը գլուխ 2-ում սահմանված ամրոց-բնակատեղիների բացահայտման քանակաճային սկզբունքի փոխադրումն է այդ ամրոց-բնակատեղիների գնահատման գործոնների բացահայտման գործընթաց: Ժառանգության վերածննդի համար ներդրումային ռեսուրսներ գտնելու դժվարությունը հանգեցնում է որոնման առավելագույն ընդլայնման անհրաժեշտության: Այս նպատակով Կադաստրը ներդրումների համար ձգտում է հաշվի առնել հիմնավորումները ամրոց-բնակատեղիի մասշտաբով հարակից բնակավայրի, շրջանի և մոտակա քաղաքի կապերի հետ:

2. **Պահպանվածության աստիճանից անկախություն:** Նախորդ սկզբունքի հետևանքն այն է, որ ամրոց-բնակատեղիի պահպանվածության բնութագրերով միայն մասամբ է սահմանվում դրա ներդրումային գրավչությունը, ինչը նշանակում է կադաստրային գնահատականի կայունություն: Կադաստրում որևէ կոնկրետ ամրոց-բնակատեղիի ներառումը բացարձակ կախում չունի պահպանվածության աստիճանից: Փորձը ցույց է տալիս, որ պահպանվածության բնութագրերով միայն մասամբ են որոշվում դրա ներդրումային գրավչությունը, հետևաբար մասնակի պահպանությունը կամ ամրոցի բացակայությունը Կադաստրին չի զրկում աշխատունակությունից: Առաջին դեպքում, Կադաստրը հաշվի առնելով հավաստի մնացորդների առավելագույն պահպանման անհրաժեշտությունը, գործում է՝ հիմնվելով ամրոց-բնակատեղիի հնարավոր հետադարձ (ռետրոսպեկտիվ) արժեքի վրա, ենթադրելով դրանց վերականգնումը: Եթե ամրոց-բնակատեղին չի պահպանվել, Կադաստրը կարող է կրճատվել մինչև առավել իրացվելի ամրոց-բնակատեղիի տարածքի որոնում՝ հետագա նոր շինարարության համար: Եթե խոսքը վերաբերում է վերաստեղծմանը, ապա Կադաստրը կրկին կարող է գործել ամրոց-բնակատեղիների հնարավոր հետադարձ ռեսուրսներով:
3. **Արդյունքների միակերպար քանակական ներկայացում:** Ներուժի գնահատումը, միտված լինելով ներդրումների ներգրավման առաջնային խնդիրների լուծմանը, պետք է ապահովի ամրոց-բնակատեղիի մասին տեղեկատվություն, որը կխթանի դրա հետ կապված հետագա աշխատանքի հնարավորությունը: Սրան հնարավոր է հասնել արդյունքների քանակական որոշմամբ, օրինակ՝ օգտագործելով միավորային գնահատական, հետագայում միավորների գումարով վարկանիշի որոշմամբ: Միավորային գնահատումն ապահովում է օբյեկտների ներդրումային գրավչության տվյալների գործունությունը՝ մանրամասների ցանկացած մակարդակով: Ամրոց-բնակատեղիի գնահատման գործոնների վերաբերյալ որևէ տվյալի բացակայության դեպքում վերջնական ներդրումային վարկանիշին տրվում է դրա արժեքի ավելացման թույլատրելիություն՝ համապատասխան այդ

գործոնների քանակին: Միավորային գործիքակազմը թույլ է տալիս ազատ փոփոխություն կառուցվածքի օբյեկտի գնահատման գործոնների (նոր գործոնների ավելացում, որոշված որպես ներդրումային գրավչությանն ազդեցություն ունեցող կամ առկա գործոնների հեռացումը, ցուցադրած իրենց ազդեցության աննշան լինելը, գործոնների արժեքների բազմազանացում): Գործոնների քանակի աճի հետ կամ առկաների ճշգրտմամբ մեծանում է վերջնական գնահատականների հուսալիության աստիճանը, սակայն այս աշխատանքն անիրագործելի է ներկայիս ուսումնասիրության միջոցների շրջանակներում և պետք է իրականացվի դրա փորձարկումից հետո:

Բացի այդ, Կադաստրը համապատասխանում է առաջարկված պահպանության պոտենցիալի գնահատման տարակարգերից դուրս լինելու հիմնական սկզբունքին: Կադաստրը ձգտում է ներառել բոլոր ամրոց-բնակատեղիները և կատարել յուրաքանչյուրի առանձին գնահատում առանց որևէ դասակարգի ներդրման: Կադաստրի բովանդակությունը կազմում է միավորային գնահատականն ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության գործոնների հիման վրա: Այդ գործոնների հայտնաբերումը, ինչպես արդեն նշվեց, կատարվում է՝ փորձից ելնելով: Ըստ ամենայնի, ոչ բոլոր գործոնները կարող են գնահատվել միավորային գնահատականով, համենայն դեպս՝ աշխատանքի այս փուլում: Նման գործոնները, պայմանականորեն սահմանված պոտենցիալ չեն կարող ընդգրկվել Կադաստր, մինչև իրենց քանակական գնահատման մեթոդիկայի սահմանումը: Բացի այդ, ելնելով կառույցի բաց լինելու և համապիտանի գործունեության սկզբունքից՝ որոշ գործոնների հաշվի չառնելը չի իմաստազրկում Կադաստրի գործունեությունը: Այդ և այլ գործոնների բովանդակությունը ներկայացված է ստորև:

Ընդունվել է, որ Կադաստրում ընդգրկված բոլոր գործոնները կունենան նույն միավորը՝ հավասար մեկի, այսինքն՝ գործոնների արժեքները հաշվի կառնվեն ըստ «այո - ոչ» համակարգի: Հարց է առաջանում այդ գործոնների հավասարեցման օրինականության վերաբերյալ, որոնք, նույնիսկ պարզ տրամաբանությամբ, տարբեր են ներդրումային գրավչության ազդեցության աստիճանով: Հետազոտությունում այս հարցը հաշվի է առնվել հետևյալ կերպ. աշխատանքի ընթացքում պարզ դարձավ, որ

իրավիճակների որոշ հատկանիշներ կարող են ներկայացված լինել հաջորդաբար պարզաբանող գործոնների շարքով: Այսպիսով, ձևավորված գործոնային խմբերը գերազանցում են հատկանիշները միավորների գումարով, ներկայացված եզակի գործոններով և համապատասխանաբար ունենում են ավելի մեծ ազդեցություն ներդրումային գրավչության վրա: Բացի այդ, յուրաքանչյուր առանձին գործոնի արժեքների դասակարգումից հրաժարվելը, որը տվյալ հետազոտության շրջանակում չէր կարող բավականաչափ հիմնավորված լինել, պայմանավորված է այն ձգտումով, որ պետք է պահպանել միջին չեզոք դիրքը օբյեկտի արժեքի գնահատման հանդեպ «հուշարձանակենտրոնության» և «օգտապաշտության» միջև: Փորձը ցույց է տալիս, որ հուշարձանի գնահատման անհավասարակշռությունը՝ հատուկ մասնագիտական չափանիշների գիտական և գեղագիտական արժեքների և ըստ չափանիշների՝ «ինչի համար վճարում են», ավերիչ է ժառանգության համար: Մարզային և հանրապետական նշանակության թափուր ճարտարապետական հուշարձանները մի կողմից և ավերելու փորձը, վերաստեղծման/վերակառուցմանը՝ մյուս կողմից, վառ օրինակներ են [58, էջ 11]:

Միավորների հավասարեցումը պայմանավորված է փորձից ներդրումային գրավչության գործոնների առանձնացման ինքնին վարկաձային բնույթով: Դրանցից մեկի կամ մյուսի «աշխատունակությունը» և հստակ կարևորության աստիճանը կարող է հաստատվել միայն գործնականում մեթոդաբանության փորձարկման ժամանակ:

Տարածաշրջանի առանձին ամրոց-բնակատեղիների միավորային գնահատականը թույլ է տալիս ստանալ հետևյալ արդյունքները, որոնք արտացոլում են դիտարկվող տարածաշրջանում ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման իրական ներուժը:

1. Տարածաշրջանի յուրաքանչյուր ամրոց-բնակատեղիի բազմագործառության աստիճանը: Ինչքան մեծ է ամրոց-բնակատեղիի գումարային միավորը, այդքան ավելի շատ գործառույթեր կարող են տեղակայվել և, հետևաբար, այդքան ավելի բարձր է դրա ներդրումային գրավչությունը:
2. Տարածաշրջանի ամրոց-բնակատեղիների յուրացման հաջորդականությունը համապատասխանում է ամրոց-բնակատեղիների բաշխմանը՝ ըստ դրանց

միավորների գումարային մեծության: Ակնհայտ է, որ առաջին հերթին կյուրացվեն ավելի ներդրումային գրավիչ ամրոց-բնակատեղիները:

3. Տարածաշրջանի ամրոց-բնակատեղիների համալիր յուրացման խմբեր: Ամրոց-բնակատեղիները, որոնք ունեն մոտավորապես նույն գումարային միավորները, այսինքն՝ ներդրումային գրավչություն, և միևնույն ժամանակ կապված լինելով որևէ տարածքային օրինաչափությամբ (մոտ փոխադարձ տեղակայություն, նույն գետի ափերին, նույն տրանսպորտային ուղղության սահմաններում և այլն), կարող են առաջարկվել համալիր յուրացման և հատկապես գործառույթների համակարգման համար:
4. Տարածաշրջանի ամրոց-բնակատեղիներում այս կամ այն գործառույթների իրականացման հավանականությունը: Փորձի վերլուծությունը ցույց տվեց, որ այս կամ այն գործառույթների իրականացումը, որոնք հնարավոր է իրականացնել պատշաճ տեղակայման համար, կախված է հենց ամրոց-բնակատեղիի բնութագրից և դրա համատեքստից: Աշխատանքի շրջանակում առաջարկվում է կապել այս կամ այն գործառույթի իրականացումը ամրոց-բնակատեղիներում իրականացման համար պատշաճ ներդրումային գրավչության գործոնների հետ: Այս դեպքում թույլ է տրվում, որ այդ գործառույթները նմանատիպ կերպով կարող են կապված լինել ամրոց-բնակատեղիների ներդրումային չեզոք բնութագրերի հետ:

Ներդրումային գրավչության գործառույթների և գործոնների կապերը ընդհանրացված են ստորև շարադրված օժանդակ մոդելում: Մոդելի համադրումը կոնկրետ տարածաշրջանի ամրոց-բնակատեղիների գործոնների արժեքների հետ տալիս է յուրաքանչյուր գործառույթի տոկոսային հավանականությունը յուրաքանչյուր ամրոց-բնակատեղիի համար: Այս համադրման գործիքակազմը ներկայացված է ստորև:

Ընդգծենք, որ վերը նշված ներուժի բացահայտման մոտեցումը վարկած է, որը պահանջում է ստուգում և ճշգրտում ներդրումային Կադաստրի գործնականում կյանքի կոչելու գործընթացի ժամանակ: Սակայն, համաձայն կառուցվածքի քանակաճային զարգացման սկզբունքների, ներդրումային Կադաստրում հիմնված

հրապարակայնության և համապիտանի գործունեության սկզբունքների, սխալվելու հավանականությունը կասկածի տակ չի դնում դրա արդյունավետ աշխատանքի հիմնարար հնարավորությունը:

Անդրադառնալով Կադաստրի արդյունքների կիրառման գործնական հնարավորություններին՝ նշենք, որ մի շարք ոչ խիստ ենթադրությունների արդյունքում, դրանք չեն կարող օրինական ուժ ունենալ, բայց կարող են օգտագործվել խորհրդատվական նպատակով՝ նպաստելու գործառույթի (գործառույթների) ընտրությանը, որևէ կոնկրետ ամրոց-բնակատեղիի համար, կամ առավել շահավետ ամրոց-բնակատեղիի (ամրոց-բնակատեղիների) ընտրությանը որևէ կոնկրետ գործառույթի համար:

Կադաստրը ենթադրում է խորհրդատվական բնույթ կրող օբյեկտիվ ցուցանիշների բացահայտում, որոնք կարող են օգտագործվել ուղղակիորեն կամ մեկնաբանվել ներդրողի պահանջներին համապատասխան: Ուստի Կադաստրի մշակումը պետք է իրականացվի որևէ կոնկրետ ծրագրից դուրս՝ ներդրողի սուբյեկտիվ պահանջների ազդեցությունը վերացնելու և առավելագույնս անկախ տվյալներ ստանալու նպատակով:

Կադաստրի հետագա զարգացումը կարող են իրականացնել ներդրումային, անշարժ գույքի, ռիելթորական և վերլուծական ընկերությունները, ինչպես մասնավոր, այնպես էլ պետական, միաժամանակ պահպանելով ոչ նախագծային լինելու սկզբունքը: Նախագծավերլուծական սեմինարների մեթոդի օգտագործումով իշխանությունների, հանրության, բիզնեսի և բնակիչների ներկայացուցիչների մասնակցությամբ մշակումը խոստումնալից է: Կադաստրի զարգացման մեկ այլ ռեսուրս կարելի է համարել ուսումնական գործընթացը և հայեցակարգային մրցութային նախագծումը, որը թույլ է տալիս փորձարկել նոր մեթոդներ՝ նվազագույն նյութական ծախսերով:

3.1.2 Ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության գործոնները և գործառական օգտագործման որոշման օժանդակ ձևաչափ

Մեկ անգամ ևս նշենք, որ ամրոց-բնակատեղիի ներդրումային գրավչության գործոններ ասելով հասկանում ենք ամրոց-բնակատեղիի և դրա հետ կապված

հարակից բնակավայրի բնութագրեր, որոնք նկարագրում են ամրոց-բնակատեղիի օգտագործման հնարավորությունները:

Ամրոց-բնակատեղիի ռետրոսպեկտիվ կազմ

Այս խմբի գործոններին անդրադառնալու անհրաժեշտությունը պայմանավորած է նոր շինարարության հանդեպ հուշարձանների պահպանման և վերականգնման գերակայությամբ, որը սահմանված է Կադաստրի՝ «պահպանվածությունից անկախություն» սկզբունքում: Այսպիսով, այն տեղեկությունները, թե ինչպիսին է եղել ամրոց-բնակատեղին անցյալում, պետք է դիտարկել որպես յուրացվող ամրոց-բնակատեղիների ճարտարապետանախագծային կազմակերպման հիմք: Միաժամանակ նման տեղեկությունների սակավության պայմաններում, հատկապես չպահպանված ամրոց-բնակատեղիների վերաբերյալ, կարող է դիտարկվել պատմական ժամանակաշրջանը, ըստ որի այս կամ այն ամրոց-բնակատեղիի ճարտարապետության մասին տեղեկությունները առավել հասանելի են:

1. **Միջնաբերդ:** Միջնաբերդը մնում է առանցքային տարր ամրոց-բնակատեղիի ցանկացած օգտագործման դեպքում: Քարե կառույցների հիմնարարությունը հնարավոր է դարձնում դրանց օգտագործումը նաև ներկայում, ինչը որոշ դեպքերում վերացնում է նոր շինարարության անհրաժեշտությունը: Գոյություն ունի նաև ազդեցություն պահպանությանը՝ քարը ավելի հեշտ է վերականգնել, մինչդեռ փայտից կառույցները Հայաստանում մեծամասամբ չեն պահպանվել:

Իրական պատմամշակութային արժեք

Հաշվի է առնվում պահպանված օբյեկտների արժեքը, ի տարբերություն ռետրոսպեկտիվ արժեքի, որը հաճախ վերագրում ենք ներուժ ունեցող գործոններին: Ներդրումային գրավչության տեսանկյունից պատմամշակութային արժեքի հիմնական նշանակությունը՝ երկրի պատմության և առևտրային գործոնի կապն է:

2. **Պահպանության կարգավիճակի առկայություն:** Պահպանության կարգավիճակը ճարտարապետական կամ պատմական արժեքի առավել անկողմնակալ վկայությունն է: Պահպանվող հուշարձանների թվում չընդգրկված ամրոց-բնակատեղիների ներուժ ունեցող արժեքի հաշվառման համար ներմուծվել է ռետրոսպեկտիվ արժեքով գործոնների մի խումբ, ինչպես նաև աուտենտիկության

ցուցանիշ: Պահպանության կարգավիճակի ծանրաբեռնվածության հետ կապված՝ ներդրումային գրավչության նվազումը հաշվի է առնվել սեփականաշնորհման/ վարձակալման մատչելիության գործոնում: Այս գործոնը հաշվի է առնում ամրոց-բնակատեղիի տարածքում գոնե մեկ հուշարձանի առկայությունը (օրինակ՝ եկեղեցու):

3. **Պահպանության համալիրություն:** Ի նկատի ունենք ամրոց-բնակատեղիի կազմում գտնվող մի քանի օբյեկտների պահպանության փաստը, օրինակ՝ միջնաբերդը և եկեղեցին կամ ամբողջ տարածքը:

4. **Սեփականատերերի և/կամ ստեղծողների, ականավոր գործիչների հեղինակությունը:** Բացի առևտրային ազդեցությունից նշված գործոնով կարելի է անուղղակիորեն դատել ռետրոսպեկտիվ արժեքի առկայության մասին: Օրինակ հայտնի գործիչների անվան կապը կամ գործունեությունը այս կամ այն ամրոց-բնակատեղիի հետ, ըստ պատմական գրականության և արխիվային աղբյուրների, կարող է նպաստել օբյեկտի գրավչության բարձրացմանը և պատմական տեսքի ավելի վավերկան վերականգնմանը:

Ամրոց-բնակատեղիի վավերական փարրերի պահպանություն

Պահպանությունը մի կողմից, իրական պատմական և մշակութային արժեքի, իսկ մյուսից՝ ուտիլիտարիստական արժեքի նախապայման է: Հարկ է նշել, որ եկեղեցու պահպանությունը չի հանդիսանում գրավչության առանցքային գործոն չէ, քանի որ ժամանակակից պահանջարկի պայմաններում, եկեղեցի կկառուցվի, եթե նույնիսկ նախկինում այն չի եղել:

5. **Միջնաբերդի պահպանության փաստ:**

6. **Ամրոց-բնակատեղիի ճարտարապետական միջուկի պահպանության փաստ:** Այս գործոնով հաշվի է առնվում միջնաբերդի և դրան հորինվածքային կապով կապված օժանդակ կառույցների պահպանությունը:

7. **Ամրոց-բնակատեղիի տարածքում ավանդական արտադրական (հնձան, ձիթհան, ջրաղաց) կամ կենցաղային կառույցների առկայություն:**

Իրավական հարցեր

Ամրոց-բնակատեղիի ոչ պետական օգտագործման հիմնական իրավական պայմանը է հանդիսանում դրա հասանելիությունն է վարձակալության համար: Համաձայն գործող օրենսդրության այս պայմանին չեն բավարարում հանրապետական/մարզային նշանակության հուշարձանները, այնպես որ նրանց մասնավոր յուրացումը կապված է պահպանության կարգավիճակի նվազեցման հետ:

8. Ամրոց-բնակատեղիի սեփականաշնորհման հասանելիությունը:

Սեփականաշնորհման հնարավորությունը ներդրողներին ավելի գրավիչ է ներկայանում, քան վարձակալումը: Մինչդեռ, ներկայումս պատմամշակութային հուշարձանների սեփականաշնորհումն արգելված է: Սա կարող է հանգեցնել ներդրողների կողմից ճնշման արդյունքում պահպանվողների ցանկից հուշարձանների դուրս մղվելուն: Ենթադրվում է միջնաբերդի և տարածքի սեփականաշնորհում: Ներդրումային գրավչության նպատակների համար եկեղեցիների սեփականաշնորհման սահմանափակումը սկզբունքային գործոն չէ:

Բնակատեղիի Էկոլոգիական ռեսուրսներ

9. Արտահայտված ռելիեֆ:

10. **Շրջակա միջավայրում աղտոտման և աղմուկի աղբյուրների առկայության բացառումը:** Նշված աղբյուրներից են՝ գործարանները, թռչնանոցները, օդանավակայանները, մայրուղիները և երկաթգծերը:

11. **Անտառների առկայություն:**

12. **Աղբյուրների առկայություն:**

13. **Գետի առկայություն:**

14. **Լճերի (լճակներ) առկայություն:**

Գործառական ռեսուրսներ

15. **Բնակատեղիում ոչ տեղական նշականություն ունեցող օբյեկտների առկայություն:** Ի նկատի ունենք օբյեկտներ, որոնց գործառական նշանակությունը դուրս է գալիս բնակատեղիի սահմաններից, օրինակ՝ թանգարան, արտադրություն, առողջարան, և այլն: Այսպիսի օբյեկտների գործունեության ընդլայնումը կարելի է իրականացնել ամրոց-բնակատեղիների տարածքային ռեսուրսների հաշվին:

16. **Բնակատեղիում գործող եկեղեցի:** Բնակատեղիում գործող եկեղեցու առկայությունը ավելի է մեծացնում հաճախելիությունը՝ ուխտավորների և զբոսաշրջիկների հաշվին:
17. **Բնակատեղիում չգործող եկեղեցիական հաստատություն:** Իրավիճակը բնորոշ է բավարար թվով բնակիչներով բնակատեղիներում թեմերի աջակցությամբ առաջնահերթ վերականգնման ենթակա չգործող պահպանված եկեղեցիների համար:
18. **Սոցիալական ձգողության կենտրոններին հարաբերական մոտիկություն:** **Նկատի են առնվում** մարզական, հանրային զանգվածային հանգստի, ուխտագնացությունների և զբոսաշրջության օբյեկտները, թանգարանները, ինչպես նաև մեծ բնակավայրերը (մարզկենտրոններ, համայնքապետարաններ),
19. **Բնակատեղիի ինքնավարություն:** Այս գործոնը հաշվի է առնում սոցիալական ենթակառուցվածքների տարրերի առկայությունը, որոշում է բնակավայրում բնակարանային գործառույթների դյուրին իրականացման հնարավորությունը: Ոչ ինքնավար բնակավայրերի շարքին կարելի է դասել անհետացող բնակավայրերը:
20. **Ամառանոցների առկայություն:** Մերձքաղաքային մասնավոր շինարարության մեծ պահանջարկը, առանձնատների հայտնվելու փաստը բնակավայրում, թույլ են տալիս այս գործոնը համարել հետագա տարածքային զարգացման գրավական: Դրա հետ մեկտեղ մեծանում են բնակավայրի գործառական կարիքները, և ստեղծվում է պահանջարկ ամրոց-բնակատեղիների թափուր օբյեկտների օգտագործման համար:

Տրանսպորտային մարզելիություն

21. **Քաղաքի հետ հասարակական տրանսպորտի միջոցով կապի առկայություն:** Հասարակական տրանսպորտը ուժեղացնում է բնակավայրի ազլումերացիոն կապերը քաղաքի հետ որևէ անձնական տրանսպորտային միջոց չունեցող մարդկանց հաշվին: Սա անուղղակիորեն հանգեցնում է բնակավայրի սոցիալական զարգացմանը:
22. **Բնակավայր տանող ասֆալտապատ ճանապարհի առկայություն:**

23. **Երկաթուղու հարաբերական մոտիկություն օբյեկտին:** Գործոնը բարձրացնում է ամրոց-բնակատեղիների հասանելիությունը միջքաղաքային մակարդակով:

24. **Տարանցիկ ճանապարհների հարաբերական մոտիկություն:** Սա նշանակում է ճանապարհամերձ սպասարկման օբյեկտների ներառման ռացիոնալություն:

Ինժեներական ենթակառուցվածք

Էլեկտրամատակարարման առկայությունը հաշվի չի առնվում, որովհետև դրա առկա լինելը ենթադրվում է բոլոր դեպքերում: Սկզբունքային չէ լարային հեռախոսային կապի և կենտրոնական ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի հաշվառումը:

25. **Գազամատակարարման առկայություն:** Գազի առկայությունը հիմնականում պայմանավորված է մատչելի ջեռուցման հնարավորությամբ:

Ներուժ ունեցող գործոններին կարելի է դասել.

- **Ռետրոսպեկտիվ արժեքը** [ըստ 35, էջ 87]: Պետք է նկատի ունենալ, «արժեքը, որն ունեցել է հուշարձանը անցյալում, և որն այն կարող է ունենալ վերականգնման դեպքում»: Բացի պահպանության կարգավիճակից, ինչը ամրագրում է պահպանված հուշարձանների արժեքավոր լինելու փաստը, կարևորվում է նաև այն արժեքը, որն ունեցել են չպահպանվող կամ չպահպանված հուշարձանները՝ նկատի ունենալով դրանց պոտենցիալ վերաստեղծման հնարավորությունը: Յուրաքանչյուր ամրոց-բնակատեղիի ռետրոսպեկտիվ արժեքի բացահայտման բարդությունը պայմանավորված է նրա առանձին մանրակրկիտ ուսումնասիրման անհրաժեշտությամբ:

- **Քաղաքի գործառական պահանջարկը քաղաքից դուրս գտնվող ռեսուրսների նկատմամբ:** Այսպիսի պահանջարկի գործոններին կարելի է վերագրել հանրային հանգիստը, խոշոր կազմակերպությունների քաղաքից դուրս գտնվող ներկայացուցիչությունները և այլն:

- **Տեղի գնային բնութագրերը:** Այնպիսի գործոնները, ինչպիսիք են՝ հողի գինը, վարձավճարի չափը, օբյեկտի տեղաբաշխվածությունը, շինարարական, վարչական և այլ ծախսերը, հեռավորությունը ենթակառուցվածքներից, կարող են լուրջ խոչընդոտներ լինել միջոցներ ներգրավվելու համար: Օրինակ, գնման հողի մատչելիությունը կարող է փոխհատուցվել շինանյութերի առաքման զգալի

ծախսերով: Հետևաբար, այս գործոնի ներառումը պահանջում է հատուկ տնտեսական մեթոդների ներգրավմամբ առանձին ուսումնասիրություն:

- **Բնակչության տարիքային, ազգային, էթնիկական և այլ բնութագրեր:** Կարելի է ենթադրել ներդրումային գրավչության և բնակչության ու շրջանի սոցիալական առանձնահատկությունների միջև կապի գոյությունը: Մասնավորապես խոստումնալից է երիտասարդների ներուժի հաշվառումը կամավորական ծրագրերին մասնակցության տեսանկյունից:

- **Ամրոց-բնակատեղիի համալիրում կառույցների ընդհանուր օգտակար մակերեսը:** Տարբեր ամրոց-բնակատեղիների տարբեր համալիր կազմերի համար անհրաժեշտ է ճշգրտում [36, էջ 131]:

- **Կրոնական հաստատությունների արդիականությունը:**

Կոնկրետ դեպքում, պայմանավորված է գործող և/կամ չգործող եկեղեցու առկայությամբ, մոտակա գործող եկեղեցիների բացակայությամբ և շրջանում բավարար քանակով բնակչության առկայությամբ:

Գործառույթեր, որոնք համապատասխան չեն ամրոց-բնակատեղիներում տեղակայման համար

Թվարկված ներդրումային գրավչության գործոնների հիման վրա, օժանդակ ձևաչափի մշակմանն անցնելիս, նշենք այն գործառույթները, որոնք սահմանվել են ամրոց-բնակատեղիներին ոչ համապատասխան: Դրանց տակ հասկանում ենք այն գործառույթները, որոնք պարտադիր չէ, որ կապված լինեն պատմամշակութային արժեքներով միջավայրում իրագործելիությամբ և պատմական ձևերի պահպանության ցածր մակարդակով [35, էջ 48]: Այսպիսի ոչ համարժեք գործառույթներից են.

- Սպորտային օբյեկտները (լողավազաններ, մարզասրահներ, սահադաշտեր և այլն) ենթադրում են մեծ ֆիզիկական բեռնվածք ճարտարապետությանը և ինժեներական ենթակառուցվածքներում հատուկ պահանջների առկայություն: Մարզական գործառույթի առանձին տարրեր (դահլիճ, մինի լողավազան, սպա, սեղանի թենիս և այլն) կարող են լրացնել նոր ճարտարապետության ծավալներում կամ բացօթյա տեղակայման համար խորհուրդ տրվող այլ գործառույթներ:

- **Չորամասեր:** Գործառույթի անհամարժեքությունը զորամասերի մեծաքանակ օժանդակ կառույցների պահանջարկը և օգտագործման փակ բնույթն է:
- **Հիվանդանոցներ:** Սրանք ենթադրում են սենքերի գոյության բարդ համակարգ, պարտադիր կապված ներքին անցումներով, ինչը նշանակում է՝ ամրոց-բնակատեղիի կերպարի անխուսափելի խեղաթյուրում: Բժշկական ենթակառուցվածքի առանձին տարրեր (բժշկական աշխատասենյակներ) կարող են լրացնել այլ գործառույթներ, օրինակ՝ սոցիալական սպասարկման:
- **Նախադպրոցական և դպրոցական հաստատություններ:** Բոլոր սենքերը մեկ ծավալում տեղավորելու անհրաժեշտության հետ կապված՝ ինչպես հիվանդանոցների դեպքում, այստեղ էլ է առկա ամրոց-բնակատեղիի պատմական կերպարի աղավաղման մեծ վտանգ: Անհամարժեքության ոչ պակաս հիմք են մանկական վանդալիզմի փաստերը:

Ամրոց-բնակատեղիներում տեղակայման համար համապատասխան գործառույթները, և դրանց կապը ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության գործոնների հետ

Ձևաչափում ընդգրկված տասնմեկ տեսակի գործառույթները սահմանվել են փորձի հիման վրա՝ որպես ամրոց-բնակատեղիների պահպանման հանդեպ միաժամանակ ճշտորոշ և հեռանկարային մոեցումներ: Գործառույթների և գործոնների կապերը հարկադրաբար կարող են բաժանվել 3 աստիճանի.

- **որոշիչ համապատասխանությունը** նկարագրում է այն կապերը, որոնք բնորոշում են գործառույթի իրականացման հիմնական պահանջները:
 - **լրացուցիչ համապատասխանությունը** վերաբերում է այն կապերին, որոնց առկայությունը ցանկալի է համապատասխան գործառույթի իրականացման համար
 - **ոչ պարտադիր համապատասխանությունը** նշանակում է գործառույթի իրականացման դեպքում գործոնի ազդեցության բացակայություն:
1. **Թանգարանային գործառույթներ:** Պետական թանգարանի կազմակերպման նպատակը՝ որպես հիմնական գործառույթ, կապված չէ ներդրումներ գտնելու անհրաժեշտության հետ: Ամրոց-բնակատեղիին թեմատիկորեն կապված թանգարանի տարրերի ընդգրկման հնարավորությունը՝ որպես լրացուցիչ

գործառույթ, որոշակիորեն առումով կախված է միայն պատմական սեփականատերերի նշանակության և (կամ) ամրոց-բնակատեղի ստեղծողների, բնակատեղիի հետ առնչվող ականավոր գործիչների անվան հետ: Ամրոց-բնակատեղիի վավերական տարրեր ներկայացնող ցուցադրման օբյեկտների առկայությունը ցանկալի է: Ընտրություն հնարավորության դեպքում թանգարանները նպատակահարմար է տեղակայել այցելությունների համար առավել մատչելի վայրերում [11, էջ 61]:

2. **Առողջարանային գործառույթներ:** Առողջարանները, առողջարարական ճամբարները, ծերանոցները, ստեղծագործական տները և այլ նման գործառական հաստատությունները, որոնք ունեն իրենց կազմում բնակելի գործառույթ և թույլ են տալիս մասնաշենքերի տարածական տարանջատում, համապատասխան բարենպաստ էկոլոգիական պայմանների, նպաստավոր բնական ռեսուրսների դեպքում կարող են իրականացվել ամրոց-բնակատեղիներում: Այս պարագայում երկրորդական կարևորություն ունեն ամրոց-բնակատեղիի ճարտարապետական որակները և լրացուցիչ սպասարկման հնարավորությունները:
3. **Ագարակ կամ փոքր արտադրության:** Ամրոց-բնակատեղիների պատմական ուղղակի նշանակությանը մոտ փոքր գյուղատնտեսական և արտադրական ձեռնարկությունների հիմնումը ստեղծում են այնպիսի գործառույթներ, որոնք կարող են ամրոց-բնակատեղիների համար ապահովել իրավահաջորդ զարգացման հեռանկար: Այս դեպքում ամրոց-բնակատեղին դառնում է հողագործի կամ արդյունաբերողի երկրորդային ուշադրության օբյեկտ: Ֆերմերային տնտեսությունների և արտադրական օբյեկտների իրականացման պարտադիր պահանջներից կարելի է համարել բնական ռեսուրսների մեծածավալությունը և շրջակա միջավայրի էկոլոգիական մաքրությունը: Ցանկալի են այնպիսի գործոններ, որոնք ապահովում են արտադրանքի սպառումը շուկաներում:
4. **Եկեղեցական հաստատություններ:** Վանք, կրթական կամ ուխտավորների կենտրոնները և այլ եկեղեցական հաստատությունները կարող են կազմակերպվել ամրոց-բնակատեղիում առկա կամ ենթադրյալ եկեղեցու հիման վրա էկոլոգիական բարենպաստ պայմանների դեպքում: Գերադասելի է պահպանված շինությունների

առկայությունը: Հատկանշական է, որ պատմական նշանակությունը կարևոր չէ եկեղեցական գործառույթների իրագործելիության համար, ինչն էլ ժառանգության պահպանության համար եկեղեցական օգտագործման վտանգն է:

5. **Հանրային կոմերցիոն կենտրոն:** Այս գործառույթը ենթադրում է ամրոց-բնակատեղիի կարճաժամկետ վարձակալություն պաշտոնական, ձեռնարկատիրական, գիտական, կրթական, սոցիալական միջոցառումների և տարատեսակ տոնակատարությունների համար: Իրականացման հիմնական պայմանները այն գործոններն են, որոնք ապահովում են ամրոց-բնակատեղիի հեղինակությունը և բարձրարժեքությունը: Երկրորդական գործոնները կապված են ֆունկցիոնալ սպասարկման լրացուցիչ ռեսուրսների որոնման հետ:
6. **Կորպորատիվ շահույթ չհետապնդող հաստատություն:** Շահույթ չհետապնդող հաստատությունները, հանրային կազմակերպությունները, մասնավոր գրասենյակները կամ գերատեսչական կազմակերպությունները, կրթական կամ վերապատրաստման կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, առևտրային նպատակներ չհետապնդող կազմակերպությունները կարող են իրենց նպատակային ու ծրագրային միջոցառումները իրականացնել ամրոց-բնակատեղիում բարենպաստ էկոլոգիայի պարտադիր առկայության դեպքում: Տվյալ պարագայում հեղինակության գործոնն ավելի քիչ կարևորություն ունի:
7. **Մշտական էլիտար բնակավայր:** Ամրոց-բնակատեղին կարող է ծառայել մասնավոր անձանց և/կամ ընտանիքների համար՝ որպես բնակավայր: Այս պարագայում կարևորը որոշակի հեղինակության գործոնների միայն ցանկալիությունն է, և ոչ թե պարտադրվածությունը:
8. **Ժամանակավոր բնակության գործառույթներ:** Հյուրանոց, որը կապված է զբոսաշրջային ենթակառուցվածքների հետ, բայց կարող է ունենալ այլ գործառույթներ: Ամրոց-բնակատեղիներում ժամանակավոր բնակության իրացումը կապված է այցելություններ ապահովող գործոնների հետ: Ամրոց-բնակատեղիի պատմական բաղադրիչների արժեքը և պահպանվածությունը երկրորդական նշանակություն ունի:

9. Սոցիալական սպասարկման գործառույթներ: Փոքր գործառույթները, ինչպիսիք են՝ ակումբը, առևտրային կետերը, տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակները, գրադարանը, բժշկական գրասենյակը և այլն թույլ են տալիս խուսափել ամրոց-բնակատեղիի դատարկ մնալուց, իսկ որպես լրացուցիչ գործառույթներ ապահովում են ամրոց-բնակատեղիի երկրորդական օբյեկտների օգտագործումը՝ դրանով իսկ նպաստելով հիմնական գործառույթի կայունությանը: Այսպիսով, ներդրումային գրավչության գործոնների թվում սոցիալական ծառայությունների իրականացման հիմնական և լրացուցիչ պայմանները այն հնարավորություններն են, որոնք ապահովում են, հավանականության այս կամ այն աստիճանով, ապրանքների և ծառայությունների սպառման շուկան:

10. Կամավորական ծրագրեր: Որպես կանոն, կամավորների մասնակցությունը կապված է վերականգնողական աշխատանքների հետ: Աշխատանքային ճակատ ապահովելու համար անհրաժեշտ է ամրոց-բնակատեղիի և/կամ եկեղեցու ցածր պահպանվածությունը, ինչպես նաև ամրոց-բնակատեղիի հասանելիությունը հասարակական տրանսպորտով: Ռեկրեացիոն գործոնների առկայությունը ցանկալի է:

11. Կենսաինքնաբերական կամ հանրային զբոսայգիներ: Այս տեսակ գործառույթների իրականացման համար պարտադիր են բարենպաստ էկոլոգիական պայմանները՝ զուգորդված տրանսպորտային մատչելիությամբ: Երկրորդական գործոնները կապված են ամրոց-բնակատեղիների ճարտարապետական բաղադրիչի պահպանության և լրացուցիչ սպասարկման գործոններ հետ:

Հիշյալ նկարագրված գործառույթների կապերը ներդրումային գրավչության գործոնների հետ ամփոփած են օժանդակ ձևաչափի տեսքով ներկայացված Հավելվածի 19-րդ էջում:

Հիշեցնենք, որ կոնկրետ ամրոց-բնակատեղիի օժանդակ ձևաչափի համադրումը ներդրումային գրավչության գործոնների արժեքների հետ տալիս է այդ ամրոց-բնակատեղիում յուրաքանչյուր գործառույթի իրականացման տոկոսային հավանականության պատկերացում: Այս համեմատության մեխանիզմը կառուցված է գործոնի տոկոսային կշռի հայեցակարգի հիման վրա և հետևյալն է.

1. Ընդունված է, որ վերը նշված գործոնների և գործառույթների համապատասխանության երեք տիպերը տոկոսային հարաբերությամբ արտահայտվում են որպես ոչ պարտադիր համապատասխանություն = 0%, իսկ գործառույթին էական համապատասխանությանը գործոնների տոկոսային կշիռը (ձևաչափի սև բջիջները) 2 անգամ մեծ են միջին համապատասխանությանը տոկոսային կշռով գործոններից (ձևաչափի մոխրագույն բջիջները):
2. Ընդունված է նաև, որ ձևաչափի ոչ դատարկ բջիջների արժեքների գումարը յուրաքանչյուր տողում 100% է, ինչը որոշակի ամրոց-բնակատեղիի դեպքում նշանակում է համապատասխան գործառույթի իրագործելիության 100 տոկոսանոց հնարավորություն բոլոր գործոնների համապատասխանության դեպքում:
3. Բաժանելով 100%-ը համապատասխան գործառույթի տողի ոչ դատարկ բջիջների քանակին (մեկ սև բջիջը հաշվելով որպես երկու մոխրագույն) ստանում ենք գործոնների արժեքների տոկոսային կշիռը յուրաքանչյուր գործառույթի համար:
4. Որոշակի ամրոց-բնակատեղիի գործառույթների իրականցման տոկոսային հավանականությունը որոշելու համար դրա ներդրումային գրավչության գործոնների արժեքները համեմատվում են օժանդակ ձևաչափի յուրաքանչյուր տողի հետ: Համընկած բջիջների քանակով և արժեքներով որոշվում է որոնվելի տոկոսային հավանականությունը:
5. Համընկած բջիջներում գոնե մեկ սևի բացակայության դեպքում (պարտադիր համապատասխանություն):
Համեմատելության ձևաչափը ներկայացված է Հավելվածի 19-րդ էջում:

3.2. ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ներդրումային Կադաստրի ձևաչափ

3.2.1. ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության վարկանիշի որոշում

Այս ձևաչափում, որը հիմնված է բաժին 3.1-ում մշակված ներդրումային Կադաստրի ընդհանուր մեթոդի վրա, ՀՀ Լոռու մարզի ամրոց բնակատեղիների ճարտարապետական ժառանգությանը (պատմական տեսքին և պահպանվածությանը) վերաբերող ներդրումային գրավչության գործոնները որոշելու համար օգտագործվում

են գլուխ 2-ի տվյալները: Ձևաչափի շրջանակներում մյուս գործոնները որոշվել են հետևյալ մեթոդներով.

- ռելիեֆի արտահայտվածությունը՝ որոշվել է դաշտային այցերով և Հայաստանի Հանրապետության Մ 1: 200 000 տեղագրական քարտեզի վերլուծության հիման վրա,
- աղմուկի և աղտոտման աղբյուրներից գերծ լինելը որոշվել է դաշտային այցերի ընթացքում բնապայմանական ձևով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի մասին պաշտոնական տվյալների հիման վրա [92],
- ամրոց-բնակատեղիների շրջակայքում անտառների, գետերի, լճերի և լճակների առկայությունը որոշվել էր՝ վերլուծելով վերը նշված ՀՀ տեղագրական քարտեզը և արբանյակային պատկերների տվյալները (Google Earth ծրագրային արտադրանք): Անտառների և գետերի որակական բնութագրերը չեն որոշվել [93],
- աղբյուրների և ոչ տեղական նշանակության օբյեկտների առկայությունը որոշվել էր դաշտային հետազոտությունների կամ հեռակա կապի միջոցով տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչների հետ հարցազրույցներ հիման վրա;
- գործող և չգործող եկեղեցիների մասին տեղեկատվությունը ստացվել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական կայքից [94],
- բնակավայրերի ինքնավարության մասին եզրակացություն է արվել կամ դաշտային ուսումնասիրության, կամ բնակչության քանակի մասին [95] վիճակագրական տվյալների և քարտեզագրական տվյալների համեմատության հիման վրա: Ոչ ինքնավար էր համարվում այն բնակավայրը, որի բնակչության թիվը 50-ից ավելին չէր, առկա էր միայն հողային ճանապարհ, ինչը ոչ շահավետ էր դարձնում առևտրային և սպասարկման այլ օբյեկտների աշխատանքը,
- սոցիալական ձգողության կենտրոններին մոտ լինելը որոշվում էր զանազան ձևերով: Խոշոր բնակավայրերը որոշվում էին քարտեզագրական նյութերի վերլուծության հիման վրա: Սպորտային, զբոսաշրջային և հանգստի օբյեկտների առկայությունը որոշվում էր համացանցում եղած տվյալների և Հայաստանի Հանրապետության ատլասի [96] վերլուծության հիման վրա.:

- ամառանոցների, գազամատակարարման և հասարակական տրանսպորտի առկայությունը որոշվել էր դաշտային հետազոտությունների վերլուծության հիման վրա,
- բնակավայր մուտք գործող ասֆալտապատ ճանապարհների առկայությունը, երկաթուղու կամ տարանցիկ ավտոմայրուղիների մոտ լինելը որոշվել էր քարտեզագրական տվյալների հիման վրա:

82 ամրոց-բնակատեղիի համար ներդրումային գրավչության՝ ընտրված 25 գործոնի վերլուծությունը հնարավորություն է տալիս ունենալ առավելագույնը 25 միավոր և ըստ այդմ որոշել յուրաքանչյուր ամրոց-բնակատեղիի վարկանիշը: Իսկ ամբողջ ցանկի, այսինքն՝ 82 օբյեկտի գնահատման վերլուծությամբ, որը ներառում էր ավելի քան 2000 գնահատական, բացահայտվել են մի շարք օրինաչափություններ:

20 միավոր և ավելի վարկանիշ ունեն երկու ամրոց-բնակատեղի (Սանահին, Հաղպատ): 15...19-ը ունեն հինգը (Կայանբերդ, Ախթալա, Սբ. Հովհաննես, Խաչգունդ, Հոռոմայրի): 10...14 ունեն յոթը (Լոռի Բերդ, Զարնի Այր, Պարնի Այր, Կայծոն, Բազմաբերդ, Ալեհերի, Մանստեվ): Մնացած 68 ամրոց-բնակատեղիները ունեն 4...9 միավոր: Այսպիսով կեսից պակաս միավոր (միավորների առավելագույն քանակը 25 է) ունեցող ամրոց-բնակատեղիները կազմում են ընդհանուր քանակի առավել քան 88%:

Առավել կրկնվող կետերն են՝ պահպանության կարգավիճակի առկայությունը, պահպանության համալիրությունը, ռելիեֆի արտահայտվածությունը, դրանք առկա են 82 ամրոց-բնակատեղիում:

Շրջակա միջավայրի աղտոտման, աղմուկի աղբյուրների բացառման գործոնը (79 կրկնություն) կարելի է վերագրել անուղղակի պատմական գործոնին:

73 ամրոց-բնակատեղիի դեպքում առկա են տարանցիկ ճանապարհները, մասնավորապես Հանրապետության առավել նշանակալի ավտոճանապարհներից Մ6 (M6) մայրուղին՝ Վանաձոր - Բագրատաշեն (սահմանային անցակետ Վրաստանի հետ), Մ3 (M1) մայրուղին՝ Մարգարա - Աշտարակ - Վանաձոր - Ձորամուտ (սահմանային անցակետ Վրաստանի հետ) և Մ7 մայրուղին (M7) Վանաձոր - Գյումրի - Ախուրիկ (սահմանային անցակետ Թուրքիայի հետ, անցակետը փակ է) (տես՝ Հավելված, էջ 20): Սրա հետ մեկտեղ առկա են դեպքեր երբ մայրուղին անցնում է

ամրոց-բնակատեղիի անմիջական հարևանությամբ և աղմուկի և աղտոտման աղբյուր է հանդիսանում:

23 դեպքում ամրոց-բնակատեղիների տարածքում գտնվում է չգործող եկեղեցական հաստատություն (տես՝ Հավելված, էջ 15, 16):

22 դեպքում ամրոց-բնակատեղիների մոտակայքում առկա են անտառներ (տես՝ Հավելված, էջ 15, 16):

Որոշ դեպքերում նույն վարկանիշն ունեն առաջին հայացքից իրար ոչ նման ամրոց-բնակատեղիները: Օրինակ, Լոռի Բերդ գյուղում գտնվող «Լոռի Բերդ» քաղաքատեղին» և Հաղպատ գյուղի մոտակայքում գտնվող քարայր-կացարան «Զարնի Այր»-ը, ունեն 14 միավոր: Գրեթե միանման բնակլիմայական պայմանների և բարենպաստ ենթակառուցվածքային հնարավորությունների դեպքում ամրոց-բնակատեղիները տարբերվում են պահպանվածության ցուցանիշներով:

3.2.2. ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիներում գործառույթների իրականացման հավանականության որոշում

Հայաստանի Հանրապետության ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության գործոնների արժեքների օժանդակ ձևաչափի հետ համեմատությունը Հավելված էջ 19-ում ներկայացված գործիքակազմին համապատասխան իրականացվել է առանց հաշվարկի ավտոմատացված միջոցների կիրառման: Ավելի քան 22500 (82x25x11) արժեքների մշակումը թույլ տվեց ստանալ ուսումնասիրված 82 ամրոց-բնակատեղիներից յուրաքանչյուրի գործառույթների իրականացման բացվածքը (տես՝ Հավելված էջ 17, 18), ինչը իր հերթին ի հայտ բերեց մի շարք օրինաչափություններ:

Առանձին դիտարկվող ամրոց-բնակատեղիի տարբեր գործառույթների իրացման հավանականության միջին արժեքը ուղղակի համապատասխանում է իր վարկանիշի մեծությանը, այսինքն՝ բարձր վարկանիշ ունեցող ամրոց-բնակատեղիներում գործառույթները կարող են իրականացվել հավանականության բարձր աստիճանով:

Յուրաքանչյուր առանձին ամրոց-բնակատեղիում առանձին գործառույթների հավանականությունը նույնը չէ՝ մինչև 50% արտահայտված վարիացիայի գործակցի միջոցով (հավասար է միջին քառակուսային շեղման եւ սպասվող միջին արժեքի հարաբերությանը՝ $V=\sigma/Mx*100\%$) [97, 98, էջ 169, 613]: Այս փաստով հաստատում է

գործիքակազմի այն ունակությունը, որով կարելի է որոշել գործառույթների իրացման հավանականությունը:

Երևում է մի օրինաչափություն, վարկանիշի աճի հետ վարիացիայի գործակցի արժեքը, այսինքն՝ գործառույթների հավանականության ցրումը նվազում է, օրինակ՝ ամրոց Սանգյառի վարկանիշը 5 է, վարիացիայի գործակիցը՝ 47,3%, Զարնի Այր ամրացված քարայր-կացարանի վարկանիշը 14 է, վարիացիայի գործակիցը՝ 20%, ամրոց Կայանբերդի վարկանիշը 20 է, վարիացիայի գործակիցը՝ 18,7%:

Այս օրինաչափության եզրակացությունն այն է, որ վարկանիշի մեծացման հետ մեծանում է ամրոց-բնակատեղիների բազմագործառականության հավանականությունը: Այսպիսով, բարձր վարկանիշով ամրոց-բնակատեղիների օգտագործումը նվազագույն կախվածություն ունի գործառույթների իրականացման պայմաններից, կարող է լինել ինչպես՝ միագործառական, այդ թվում ներառել գործառույթներից ցանկացածը, այնպես էլ բազմագործառական և բաղկացած լինել ցանկացած քանակով գործառույթներից և միավորել դրանք ցանկացած համամասնությամբ:

Մյուս կողմից, ցածր վարկանիշով որևէ ամրոց-բնակատեղիում գործառույթների հավանականության զգալի ցրվածությունը փաստում է՝ այն մասին, որ որոշ գործառույթեր դրանում ունեն իրականացման շատ ավելի մեծ հնարավորություններ, քան մյուսները: Օրինակ, Վահագնաձոր գյուղի «Սիսի Բերդ» չպահպանված ամրոց-բնակատեղին ունի սոցիալական գործառույթների իրականացման զրոյական և 45 տոկոսանոց՝ առողջարանային գործառույթների հավանականություն: Այսպիսով, դրա վերականգնման զգալի հնարավորությունը կապված է տարածքի էկոլոգիան չխախտող առողջարանի կազմակերպման հետ:

Գործիքակազմի աշխատունակությունը կարելի է ստուգել, Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ներկայիս օգտագործումը դրանց համար հաշվարկված գործառույթների հետ համեմատելու դեպքում: Վերոհիշյալն իրականացնելու համար նպատակահարմար է համեմատության մեջ դնել միջին վարկանիշով ամրոց-բնակատեղիներ, որպեսզի հավանականությունների ցրումը լինի բավարար:

Գոյություն ունեցող «Լոռի Բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցին համապատասխանում է հաշվարկված 72.1 տոկոսանոց հավանականության թանգարանային գործառույթի իրականացումը: Այլ գործառույթները կարող են այստեղ իրականացվել 44-ից 66 տոկոս հավանականությամբ: Այսպիսով, թանգարանի գործառական ծրագրի հետագա զարգացումը կարող է պայմանավորված լինել դրանց մոտավոր հավասար հաշվառման հաշվին:

Հաղպատ գյուղի քարայր-կացարան «Զարնի Այր»-ը, որը նրկայումս վերականգնվում է թանգարանային և ժամանակավոր բնակելի գործառույթներ իրականացնելու նպատակով, համաձայն Կադաստրի, ունի թանգարանային գործառույթի 72.1 տոկոսանոց հավանականություն և ժամանակավոր բնակելի գործառույթի իրականացման 56 տոկոսանոց հավանականություն: Մինչդեռ այստեղ 66 տոկոս հավանականությամբ կարող են իրականացվել հանրային կենտրոնի գործառույթներ: Վերոհիշյալը կարելի է ներկայացնել որպես առկա օգտագործման հետագա զարգացման համար առաջարկ:

Ամրոց-բնակատեղիների պահպանության և օգտագործման ներուժի տվյալների համադրումը կարող է դրանց համալիր պահպանության և օգտագործման նախագծերի մշակման համար հիմք հանդիսանալ, օրինակ, ՀՀ Լոռու մարզի 10 առավել հեռանկարային ամրոց-բնակատեղիները կարող են յուրացվել առաջին հերթին (Ախթալա, Կայանբերդ, Լոռի Բերդ, Սանահին, Հաղպատ, Սբ. Հովհաննես, Խաչգունդ, Հոռոմայրի, Զարնի Այր, Պարնի Այր) (տես՝ Հավելված էջ 20):

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի որոշ ամրոց-բնակատեղիների գործառույթների հավանականության արժեքի վիճակագրական մշակումը հնարավորություն տվեց հետևություններ անել տարածաշրջանի ամրոց-բնակատեղիների գործառական ներուժի մասին (տես՝ Հավելված էջ 17, 18):

ՀՀ Լոռու մարզում առավել հավանական է թանգարանային գործառույթների իրականացումը (բոլոր ամրոց-բնակատեղիներում միջին հավանականությունը 36%, և 14 ամրոց-բնակատեղի, որոնցում իրականացման հավանականությունը 50%-ից ավելին է): Երկրորդ տեղն են զբաղեցնում էլիտար բնակելի գործառույթները (բոլոր ամրոց-բնակատեղիներում միջին հավանականությունը 32%, և 12 ամրոց-բնակատեղի,

որոնցում իրականացման հավանականությունը 50%-ից ավելին է): Երրորդ տեղում են գտնվում հանրային կենտրոնները (միջին հավանականությունը 31%): Իրականացման ամենափոքր հավանականությունը սոցիալական գործառույթներինն է (միջին հավանականությունը 15%): Վարիացիայի գործակցի մեծ արժեքը (71%) փաստում է սոցիալական գործառույթների իրականացման համար պայմանների այս կամ այն աստիճանի յուրահատկությունների մասին և ի վերջո՝ ամրոց-բնակատեղիների քանակի մասին, որոնցում այն հնարավոր է իրականացնել (8 ամրոց-բնակատեղիի դեպքում հավանականությունը 0 է):

Օգտագործման ներուժի մասին ստացված տվյալները կարող են օգտագործվել այս կամ այն ամրոց-բնակատեղիներում որևէ գործառական օգտագործման հեռանկարայնության և ներդրումների ռիսկերի նախնական գնահատման համար, որոշակի կոնկրետ գործառույթի դեպքում հնարավոր ամրոց-բնակատեղիների ընտրության համար:

Ի լրումն, կոնկրետ ամրոց-բնակատեղիներում գործառույթների հավանականության արժեքները կարող են մեկնաբանվել որպես օպտիմալ մեծություններ գործառույթների բովանդակության օգտագործման ժամանակ, օրինակ՝ այս կամ այն գործառույթի համար հատկացվող մակերեսների հարաբերությամբ:

Եզրակացություններ ըստ գլուխ 3-ի

1. Սահմանվել է «օգտագործման ներուժ» եզրույթը՝ ամրոց-բնակատեղիի տարածքում գտնվող և դրա հետ պատմականորեն կապված ճարտարապետական և քաղաքաշինական օբյեկտների օգտագործման հնարավորությունների մասին գիտելիքների ամբողջություն: Ամրոց-բնակատեղիի օգտագործման հնարավորություններն անվանվում են դրա ներդրումային գրավչության գործոններ:
2. Մշակվել է ամրոց-բնակատեղիների ներդրումային Կադաստրի ձևաչափ՝ որպես ներդրումային գրավչության գործոնների միավորային գնահատման հիման վրա դրանց ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի բացահայտման գործիքակազմ: Աշխատանքում օգտագործվում է երկմիավորային գնահատական (այո-ոչ), որն ապահովում է Կադաստրի կառուցվածքի

գործունությունը և բաց լինելը՝ այսինքն, դրա լրացնելու և ճշգրտելու հնարավորությունը:

3. Սահմանվել է ամրոց-բնակատեղիների քսանհինգ ներդրումային գրավչության գործոն, որոնք միավորվել են խմբերի: Նշված են ներուժ ունեցող գործոնները, որոնց քանակական գնահատման ձևակերպումը դեռևս հնարավոր չէ:
4. Մշակվել է ամրոց-բնակատեղիների հնարավոր գործառույթների հարցը: Սահմանվել է տասնմեկ գործառույթ, որոնք միաժամանակ հեռանկարային և համապատասխան են ժառանգության պահպանության հանդեպ: Ընդհանրացվել են ամրոց-բնակատեղիներում տեղակայման համար անհամապատասխան գործառույթները: Մշակվել է ներդրումային գրավչության գործոններից գործառույթների կախվածության օժանդակ ձևաչափ:
5. Ներդրումային Կադաստրի ձևաչափը և օժանդակ գործառական ձևաչափը կիրառվել են ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների օրինակով: Վիճակագրական վերլուծության հիման վրա որոշվել է ամրոց-բնակատեղիների ներդրումային վարկանիշը, դրանց յուրացման հաջորդականությունը, ամրոց-բնակատեղիներում տասնմեկ տարբեր գործառույթների իրացման հավանականությունը (902 ցուցանիշ) և գործառույթի իրացման միջին հավանականությունը ըստ տարածաշրջանի: ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիներում առավել հավանական է թանգարանային գործառույթների իրականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ցույց է տրվել հայկական՝ սակավ լուծումներով (մեծամասամբ արգելոց-թանգարաններ) և արտերկրի՝ տնտեսական խթանների համակարգով օժանդակվող մասնավոր սեփականության զարգացած համակարգով ամրոց-բնակատեղիների պահպանության և օգտագործման փորձը:

Բացահայտվել են շուկայական պայմաններում կիրառելի ամրոց-բնակատեղիների օգտագործման լուծումները:

2. Մշակվել են ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության պահպանման ներուժի գնահատման սկզբունքներ: Գնահատման հիման վրա առաջարկվել է ՀՀ Լոռու մարզի ութսուներկու ամրոց-բնակատեղիների վերականգնման աստիճանը:

Առաջարկվել է լիովին վերականգնել վեց ամրոց-բնակատեղի՝ Ախթալա, Սանահին, Հաղպատ, Խաչգունդ, Զարնի Այր, Պարնի Այր, մասնակի վերականգնել տասը՝ Լոռի Բերդ, Կայանբերդ, Հոռոմայրի, Խորակերտ, Խուճապ, Նահատակ, Հնեվանք, Սեդվու, Մանստեվ, Ար. Հովհաննես:

Ցույց է տրվել, որ ՀՀ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգությունն ունի պահպանման դրական ներուժ:

3. Մշակվել է ամրոց-բնակատեղիների ճարտարապետական ժառանգության օգտագործման ներուժի գնահատման ներդրումային Կադաստր, որում կիրառվել է ամրոց-բնակատեղիների ներդրումային գրավչության տարատեսակ գործոնների (տեղեկություններ պատմական կերպարի, պահպանվածության աստիճանի, իրավական ասպեկտների, տեղակայման, բնական ռեսուրսների և բնակատեղիների ենթակառուցվածքի վերաբերյալ) գնահատման միավորային համակարգ, որի օգնությամբ հաշվարկները բերվել են քանակական տեսքի և տեղեկություններ են ստացվել տարածաշրջանի ամրոց-բնակատեղիների ներդրումային վարկանիշի և գործառույթների իրականացման հնարավորության վերաբերյալ:

4. Հաստատվել է ներդրումային Կադաստրի հնարավորությունը, այն է հաշվի առնել ամրոց-բնակատեղիների առանձնահատկությունները: Ներդրումային

Կադաստրի շրջանակում ստացված ամրոց-բնակատեղիների օգտագործման գործառական հաշվարկները համընկնում են ներկայիս իրավիճակի հետ:

Բացահայտվել է, որ Լոռու մարզի ամրոց-բնակատեղիները ունեն օգտագործման դրական ներուժ: Առավել հավանական է թանգարանային գործառույթների իրականացումը:

Սահմանվել է վերաօգտագործման համար տասն առավել հեռանկարային ամրոց-բնակատեղի, դրանք են՝ Ախթալա, Կայանբերդ, Լոռի Բերդ, Սանահին, Հաղպատ, Սբ. Հովհաննես, Խաչգունդ, Հոռոմայրի, Զարնի Այր, Պարնի Այր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.erebuni.am>, [Մուտք 20.09.2015]:
2. «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://hushardzan.am/metsamor-historical-archeological-museum-reserve>, [Մուտք 05.09.2015]:
3. «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://hushardzan.am/garni-historical-cultural-museum-reservation>, [Մուտք 05.09.2015]
4. «Լոռի Բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոց [Էլեկտրոնային աղբյուր] / - <https://hushardzan.am/archives/721>, [Մուտք 07.10.2015]
5. Խաչատրյան Հ., Կիրակոսյան Լ. Տիգրանակերտի հնագիտական թանգարանը // Թանգարան հանդես. - Երևան, 2010. - 13 էջ:
6. Մխիթարյան Ն.Է., Սաֆարյան Ա.Յու. Պատմաճարտարապետական հուշարձանների թանգարանացումը Հայաստանում // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. - Երևան, 2014. - Հ. II (53), էջ 48-62:
7. Տաթևեր [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.tatever.am/am>, [Մուտք 15.10.2015]:
8. Կիրակոսյան Վ.Ա. Զարնի և Պարնի քարայր-կացարանների վերականգնումն ըստ պահպանման ներուժի գնահատման չափորոշիչների // Հայաստանի շինարարների միության տեղեկագիր. Գիտական աշխատությունների ժողովածու. - Երևան, 2017. - Հ.3. - էջ 47-55:
9. Ալեքսանդրապոլ [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://hushardzan.am/archives/7436>, [Մուտք 20.10.2015]:
10. «Սև» բերդը վերածվելու է բիզնես կենտրոնի [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.asparez.am/sev-berd-hy/>, [Մուտք 22.11.2015]:
11. Կիրակոսյան Վ.Ա. Պատմական ռազմական կառույցների հարմարեցված վերաօգտագործման տեսական հիմքերը // ՃՇՀԱՀ Գիտական Աշխատություններ. - Երևան, 2018. - Հ. I (68). - էջ 56-62:
12. ՀՀ կառավարության ծրագիր 2017-2022 [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.gov.am/files/docs/2207.pdf>, 123 էջ, [Մուտք 12.11.2017]:

13. Butler J. The economics of historic country houses. - London: Policy studies institute, 1980. - 138 p.
14. Binney M. The country House: To be or not to be. - London: SAVE Britain's heritage, 1982. - 123 p.
15. Cecily Hill Barracks [Էլեկտրոնային աղբյուր] / - <https://historicengland.org.uk/listing/the-list/list-entry/1187434>, [Մուտք 08.02.2016]:
16. Cardiff Castle [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.cardiffcastle.com>, [Մուտք 08.02.2016]:
17. Littlejohn D. The fate of the English country house.- New York: Oxford University Press, 1997. - 344 p.
18. Cloghan Castle [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.cloghancastle.ie/>, [Մուտք 08.02.2016]:
19. Абанкина Т.В., Деркачев П.В. Стратегии повышения эффективности использования объектов культурного наследия // Вопросы государственного и муниципального управления. – Москва, 2016, № 4.- с. 45-74.
20. Paradores de Turismo [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.parador.es/en>, [Մուտք 14.03.2016]:
21. Pousadas Portugal [Էլեկտրոնային աղբյուր] / - www.pousadas.pt/Portugal/official-site, [Մուտք 15.03.2016]:
22. Bamburgh Castle [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.bamburghcastle.com/>, [Մուտք 15.03.2016]:
23. Golez M., Badoviac B., Mauko A. et al. The revitalization of the monasteiy at Zice // Proceedings of the 7th European Conference "SAUVEUR" Safeguarded Cultural Heritage. Understanding & Viability for the Enlarged Europe.- V.2. Posters. - Prague: Institute of Theoretical and Applied Mechanics, 2006. - P.1046-1049.
24. Memoire en demeure. Atelier Interlocal d'Art et d'Architecture. 08. 2004 -09. 2006. Saint-Thelo.- Paris: APRES, 2007. - 25 p.

25. Կիրակոսյան Վ.Ա. Ամրոցների ադապտացման եվ պահպանման եվրոպական փորձը // Հայաստանի շինարարների միության տեղեկագիր. Գիտական աշխատությունների ժողովածու.- Երևան, 2017.- Հ.3.- էջ 40-46:
26. Feilden B.M., Jokilehto J. Pasaulio kultūros paveldo vietų bei vietovių priežiūros gairės. - Vilnius: Savastis, 1998. - 160 p.
27. Bullen P.A., Love P.E.D. Residential regeneration and adaptive reuse: learning from the experiences of Los Angeles, Structural Survey, 2009.-Vol. 27 No. 5.- p. 351-360.
28. Bullen P.A., Love P.E.D. Adaptive reuse of heritage buildings, Structural Survey, 2011.- Vol.29 Iss: 5.- p. 411-421.
29. Adaptive reuse: Preserving our past, building our future. ACT: Department of Environment and Heritage, Commonwealth of Australia.- Australia, 2004. - 22 p.
30. Orbaşlı A. Architectural Conservation.- London: Blackwell Publishing, 2008.- 240 p.
31. Austin R.L. Adaptive Reuse: Issues and Case Studies in Building Preservation.- New York: Van Nostrand Reinhold Company, 1988.- 139 p.
32. Brooker G., Stone S. Context and Environment.- Switzerland: Ava, 2008.- 176 p.
33. Douglas J. Building Adaptation.- London: Butterworth-Heinemann, 2006.- 680 p.
34. Дворянская и купеческая сельская усадьба в России XVI-XX веков: исторические очерки.- М.: Эдиториал УРСС, 2001. - 784 с.
35. Чернявская Е.Н. Памятники ландшафтной архитектуры в зоне влияния крупных городов (на примере московской агломерации): Дис. канд. архитектуры: 18.00.04.- М.: МАрхИ, 1980.- 130 с.
36. Полянцев Е.В. Современное состояние и проблема использования подмосковных усадеб // Материалы XLIV научной конференции.- М.: МАрхИ, 1988.
37. Коробицына И.Л. Возрождение знаменитой усадьбы. - М.: Линор, 2003. - 100 с.
38. Национальный Фонд "Возрождение русской усадьбы" [Էլեկտրոնային աղբյուր] / - <http://www.fondus.ru/>, [Մուտք 01.04.2016]:
39. Севан О.Г. Междисциплинарный подход к разработке программ развития малого города и прилегающего района (на примере Московской области). - М.: Технопечать, 2001. - 176 с.

40. Агеев С.А. Сохранение локальных исторических комплексов методами градостроительного регулирования: Дис. канд. архитектуры: 18.00.04 .- М.: МАрхИ, 2005. - 168с.
41. Славина Т.А. Преобразование исторических городов в 21 веке (Санкт-Петербург) // К архитектуре 21 века. А ротіогі: Сб. науч. ст. - М.: РААСН, 2002. - с.83-89.
42. Енин А.Е. Методы предпроектной оценки историко-культурной среды на разных уровнях проектирования: учебное пособие. - Воронеж: ВГСА, 1998. - 80 с.
43. Емельянов А.А. Историко-культурная оценка территорий исторических поселений и ее использование в градостроительном регулировании: Дис. канд. техн. наук: 18.00.04.- М.: МИКХиС, 2004. - 122 с.
44. Донцов Д.Г. Технологии градорегулирования: учебное пособие для студентов, обучающихся по направлению "Архитектура" . - Волгоград: ВолГАСУ, 2005. - 420 с.
45. Ельчанинов А.И. Современные тенденции сохранения наследия // Современные тенденции по сохранению историко-культурного наследия. - Йошкар-Ола, 2003. - с.5- 14.
46. Шульгин П.М. Современные подходы к формированию программ в сфере культуры и наследия // Наследие и современность: Информационный сборник. - М.: Институт Наследия, 1999.- Вып. 7. - с.3-14.
47. Шульгин П.И. Экономическое возрождение русской усадьбы // Русская усадьба на пороге 21 века. - Смоленск: СГПУ, 2001.- Вып. 3 .- с.166-177.
48. Некрасов А.Б. Градостроительный потенциал московских территорий // Архитектура и строительство Москвы. - 2004. - № 2-3. - с.31-37.
49. Глазычев В.Л., Егоров М.М., Ильина Т.В. и др. Городская среда. Технология развития. - М.: Ладья, 1995. - 240 с.
50. Инвестиционная стратегия: Реконструкция центра Санкт-Петербурга / Междунар. центр соц.-эконом. исслед.; Под общ. ред.: Б. С. Жихаревич и др. - СПб.: Леонтьевский центр, 1999. —122 с.
51. Севан О.Г. Изучение зарубежного опыта социального участия и партнерства - важный фактор культурной и образовательной политики // Европейский опыт

- разработок и реализации программ развития сельских территорий и малых городов. Участие населения и партнерства: методические материалы. -М.: Технопечать, 2001. - с. 4-14.
52. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ Լոռու մարզ [էլեկտրոնային աղբյուր] / - http://www.armstat.am/file/Map/MARZ_06.pdf, [Մուտք 03.06.2017]:
 53. Լոռու մարզպետարանի պաշտոնական կայք [էլեկտրոնային աղբյուր] / - <http://lori.mtad.am/>, [Մուտք 03.06.2017]:
